

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
SAMVEL POGHOSYAN

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՏԻ
GRIGOR NAREKATSI

ՀԱՎԱՏԱՐՄԱՏ
BASE OF BELIEF

Երևան - 2015 –Yerevan

Ս. Պողոսյանի «Գրիգոր Նարեկացու «Հավատարմատը» ուսումնասիրությունը նվիրված է 10-րդ դարի հանճարեղ քանաստեղծ և փիլիսոփա, տիեզերական վարդապետ Գրիգոր Նարեկացու դավանանքին: Հեղինակը զարգացնում է այն տեսակետը, որ Հավատարմատ վերնագրով երկը Գ. Նարեկացու «Մատյանի» վիճելի գլուխների ամբողջությունն է, որը գրվել է 987 թվականին Արգինայի ժողովում ներկայացնելու և իր ուղղադավանությունը հիմնավորելու նպատակով:

The Grigor Narekatsi's Base of Belief research of S. Poghosyan is devoted to the 10th century's genius poet and philosopher, space Master Grigor Narekatsi's creed. The author cultivates the point of view, that the composition with title Base of Belief is the integrity of "Book of Lamentations" disputable chapters of Grigor Narekatsi, which was written in 987 in order to present it in Argina's congregation and to substantiate her denomination.

*2015թ.-ի ապրիլի 12-ին Հռոմի Պապ Ֆրանցիսկը
Գրիգոր Նարեկացուն շնորհեց
տիեզերական եկեղեցու դոկտորի կոչում:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր թվագրության առաջին և երկրորդ հազարամյակների ճամփաբաժանում Հայաստան աշխարհը բուռն փոփոխություններ ապրեց: Դրանք առաջադիմական մեծ փոփոխություններ էին, ազգային անկախության և սոցիալական առաջադիմության ուղղությամբ կատարված խոշոր տեղաշարժեր: Դա Հայաստանում վաղ ֆեոդալիզմից հասուն ֆեոդալիզմի անցման շրջանն էր, և ինչպես ամեն մի անցումային շրջան, այն ևս հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական հակասությունների ծայր աստիճան սրման, գաղափարական բախումների, իշխող գաղափարախոսության հիմունքների վերանայման, մշակութային արժեքների վերաբերավորման, վերիմաստավորման դարաշրջան էր: Երբ, թեև վերականգնվել էր հայկական պետականությունը, այդուհանդերձ, արտաքին սպառնալիքի դեմ-հանդիման շարունակում էին չլուծված մնալ ազգային անկախության, միասնական կենտրոնացված պետության ստեղծման ու պահպանման անհրաժեշտ խնդիրները. առանձին ավատական կազմավորումների միջև չդադարող երկպառակությունները քայքայում, ծվատում էին երկիրն ու խոչընդոտում ազգային միասնականության ձեռքբերմանը. մի կողմից ամրապնդվում, ինքնաբերաբար զարգանում, կատարելագործվում էին ավատատիրական հարաբերությունները (ավատատիրական շահագործման ուժեղացման հետևանքով գյուղացիական

զանգվածների ճորտացում, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների ճնշման ապարատների կառուցվածքի ամրապնդում, տնտեսական և ռազմական հզորացում, ավատական կազմավորումների խոշոր կենտրոններ հանդիսացող քաղաքների ծաղկում՝ զարգանում են արհեստներն ու առևտուրը), մյուս կողմից՝ ուժեղանում էր շահագործվողների դիմադրությունը, սաստկանում դասակարգային պայքարը:

Այդ շրջանից սկսած, որոշակի վայրէջքներով ու վերելքներով հանդերձ, հետագա մի քանի դարերի ընթացքում հայ ժողովրդի հոգևոր կյանքում տեղի են ունենում որակական այնպիսի խոշոր փոփոխություններ, որոնց ամբողջությունը հայ մշակութային զարգացման մի շատ նշանակալից դարաշրջան է կազմում, որն իրավամբ անվանվում է «Հայկական Ռենեսանս»:

X դարի մեծ մտածող ու հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին հայկական վաղ վերածննդի խոշորագույն ներկայացուցիչն է: Նրա ապրած ժամանակաշրջանում իրականության հասունացած հակասությունները, արտացոլվելով հոգևոր մշակույթում, տեղիք են տալիս գաղափարական սուր պայքարի: Քրիստոնեության գաղափարական հիմունքների վերանայումից (քրիստոնեության ազգայնացում, մեկնողական ազատախոհություն, որը նույնպես անհաշտության արտահայտություն էր) մինչև պանթեիզմ և ընդհուպ անաստվածություն. ահա այդ գաղափարախոսական պայքարի հիմնական ուղղությունները: Ժամանակը պահանջում էր իշխող գաղափարների վերանայում, սակայն դրան տարբեր դիրքերից ու տարբեր նպատակներով էին մոտենում գաղափարական պայքարի հակադիր ճամբարի ներկայացուցիչները: Մի կողմը ձգտում էր վերանայել այդ գաղափարախոսությունը՝ կատարելագործելու, իսկ մյուս կողմը՝ այն քննադատելու և անգամ ժխտելու, նոր

գաղափարական հիմունքներ առաջ քաշելու նպատակով:

Այդ պայքարի մասնակիցներին, սակայն, միավորում էր ընդհանուր մի բան. անցյալի մասնավորապես՝ հելլենիստական մշակույթի ու փիլիսոփայության, քրիստոնեական ստավաճաբանության գաղափարական ակունքների նկատմամբ ակտիվ հետաքրքրությունը:

X դարից սկսած «հայկական գիտությունը և փիլիսոփայությունն աճող հետքրքրություն են դրսևորում հելլենիստական կուլտուրայի և փիլիսոփայության նկատմամբ... Վերածնության գործիչներն իրենց գաղափարական պրպտումների մեջ, բնականաբար, պիտի դիմեին նախ և առաջ իրենց ժողովրդի հոգևոր անցյալին, ավելի ճիշտ՝ հայկական փիլիսոփայության հելլենիստական ուղղությանը»: Գրիգոր Նարեկացին այս պրոցեսի ակունքներում էր կանգնած:

Նրա գրական-փիլիսոփայական ժառանգությունն ասես հանրագումարի է բերում առաջին հազարամյակի հայ գեղարվեստական և հասարակական-փիլիսոփայական մտքի նվաճումները և նախանշում երկրորդ հազարամյակում հայ հոգևոր մշակույթի զարգացման նոր միտումներ: «Գրիգոր Նարեկացին Հայաստանում նշանավորեց անցումը միջնադարից նոր ժամանակներին» ոչ միայն որպես հանճարեղ բանաստեղծ, այլ որպես մեծ մտածող, փիլիսոփա: Հայ գեղարվեստական ու հասարակական-փիլիսոփայական մտքի նորարար. ահա թե ինչ է նշանակում միջնադարյան Հայաստանի համար Գր. Նարեկացին¹:

Նարեկացին, որպես մեծ մտածող, իր դարաշրջանի հարազատ ծնուդն էր և նրա ողջ աշխարհայացքը պայմանավորված է հենց վաղ վերածննդի առաջ քաշած ազգային և սոցիալական ազատագրության

¹ Այդպես է գնահատվել Նարեկացին Թումանյանի և մեր մյուս երախտավորների կողմից:

մեծ խնդիրներով: Այդ կոնկրետ խնդիրներն իրենց ընդհանրացված արտահայտությունն են գտնում Նարեկացու գաղափարական-փիլիսոփայական համակարգում, այսինքն. միջնադարի մեծ մտածողն ազգային և սոցիալական ազատագրության էությունը համարում է մարդկային կեցության, աշխարհի ու մարդու վերափոխումը դեպի լավը, բարին, կատարյալը: Հենց այդ միտվածությունն է կղերականությանը հիմք տվել մեծ հումանիստին մեղադրելու թոնդրակեցությանը հարելու մեջ:

Մոսկ կարող է թվալ, թե Նարեկացին ազգային և սոցիալական ազատագրության էությունը բացահայտելով մարդու և մարդկային կեցության կատարելագործման մեջ, այդ կոնկրետ խնդիրների լուծմանը մոտենում է զուտ վերացական մարդասիրության դիրքերից, զուտ ընդհանուրի՝ եզակիից կախման դիրքերից (այդ կախումը ևս ռեալ է, բայց որոշիչը, իհարկե, եզակիի՝ ընդհանուրից կախումն է, ամբողջով մասի պայմանավորվածություն է և ոչ թե հակառակը), այսինքն՝ գտնում է, որ անհատի, առանձին մարդկանց դաստիարակությամբ, կատարելագործմամբ, «փրկությամբ», «դարձով» միայն կարելի է հասնել հասարակության, նույնիսկ՝ ամբողջ տիեզերքի կատարելագործմանը: Մակայն բանն այն է, որ դրա կողքին Նարեկացին բարձրացնում է նաև հասարակության, որպես ամբողջի, կատարելագործման միջոցով անհատի կատարելագործմանը հասնելու խնդիրը, ճիշտ է, այս հարցում, հայտնի պատճառներով, խորանալու հնարավորություն չի ունեցել միջնադարի մտածողը (պարզապես անհնար էր X դարում գիտականորեն բացատրել հասարակության զարգացման ողջ մեխանիզմը, թեև նա հասարակությունը դիտում էր որպես հակադրությունների ամբողջություն, հակադրություններ, որոնց միասնությանը և անգամ նույնությանը, «զուգակշռությանը» ձգտում էր ինքը), սակայն Նարեկացու կողմից մարդու, անհատի՝

հասարակությամբ, հասարակական հարաբերություններով հասարակական կեցությամբ պայմանավորված լինելու գաղափարի և հասարակության կատարելագործմամբ՝ անհատի կատարելագործման գաղափարի առաջընթացումն արդեն մեծագույն նվաճում էր:

Ռեֆորմացիան, որին Նարեկացին ոչ թե հարել, այլ որի խոշոր գաղափաներից մեկն է եղել, ժողովրդական լայն շարժում էր, ու թեև դրա հիմնական շարժիչ ուժը ճորտացված գյուղացիությունն էր, այն գուտ գյուղացիական շարժում չէր:

Այդ շարժմանը, ըստ ամենայնի, ներգրավված էին կամ համակրում էին քաղաքների չքավոր զանգվածները, ինչպես նաև աշխարհիկ և հոգևոր իշխող խավերի առաջադեմ ներկայացուցիչները:

Ռեֆորմացիոն գաղափարախոսությունը միատարր չէր, այն երկու թև ուներ.

1. Աստծուն և եկեղեցաֆեոդալական հիերարխիան ժխտող, մարտնչող,

2. չափավոր, տիրող կարգերից, եկեղեցաֆեոդալական հիերարխիայի բռնություններից դժգոհ, բայց դրանցից ամբողջությամբ դեռևս չհեռացած, չհրաժարված:

Նարեկացին՝ իր հայացքներով, այդ շարժման մեջ կենտրոնական դիրք էր գրավում:

Այսպես. հայ իրականության մեջ վաղ Վերածննդի շրջանում, երբ հասարակությունը մեծ սպասելիքներ ուներ¹ և նոր, դրական

¹ Չմոռանանք, որ I հազարամյակի վերջն էր, և համայն քրիստոնյա աշխարհն սպասում էր Քրիստոսի երկրորդ, ամենափրկիչ գալուստին. հայոց մեջ այդ ժամանակաշրջանում եզակի չէին դեպքերը, երբ ի հայտ էին գալիս ինքնակոչ «Քրիստոսներ», որոնց շուրջն ստեղծվում էին ժողովրդական լեգենդներ և որոնք թոնդրակյան շարժման գաղափարներով էին զինված: Ի միջի այլոց, այդ

փոփոխություններ էր ակնկալում, ասպարեզ եկավ Գրիգոր Նարեկացին, հանճարեղ բանաստեղծն ու մտածողը: Նա իր դարաշրջանի սուր հակասությունների հաղթահարման գաղափարական բազմակողմանի որոնումների արտահայտիչը դարձավ՝ սահմանելով ժամանակի բարձրագրած խնդիրները (մի բան, որ ինքնին արդեն մեծ ծառայություն է) և յուրովի տալով դրանց լուծումները:

Նարեկացին, անկասկած, իր ժամանակի ամենանշանավոր գաղափարախոսն ու մեծ ժողովրդականություն վայելող անհատականությունն է, հայկական վերածննդի ամենաառաջադեմ մտածողն ու գործիչը, այդ հակասական դարաշրջանի իսկական հայելին: Նա իրեն օտար և անհարազատ չի համարում իր ապրած ժամանակների գաղափարական բոլոր ուղղություններն ու միտումները, նույնիսկ՝ տրամագծորեն հակադիր դիրքորոշումները, ինչպիսիք են աստվածապաշտությունն ու անաստվածությունը, խոնարհությունն ու ըմբոստությունը և այլն: Նա անտարբեր չէ մարդկային բոլոր՝ թե՛ լավ, թե՛ վատ դրսևորումների նկատմամբ: Այն ամենը, ինչ վերաբերում է Մարդուն և կազմում մարդկայինը, նա վերագրում է իրեն և դա անում է գիտակցված, տեսականորեն խորապես հիմնավորելով իր իսկ առաջ քաշած հիմնարար դրույթը. «Ես ամենայն և յիս ամենեցուն»:

Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի պատմության մեջ մասիսվել են «Սասնա ծռեր» էպոսը և «Նարեկը» (ժողովուրդը հենց այդպես է անվանում Գր. Նարեկացու հիմնական ստեղծագործությունը):

սպասելիքի արդյունք է նաև Նարեկացու անվան սրբացումը և այդ անվան շուրջը ժողովրդական լեզենդների հյուսվածքը, որոնց հերոսը՝ Գրիգորը, երբեմն հովիվ է, երբեմն՝ կրոնավոր և այլն: Նա հանդես է գալիս ունիվերսալ, ամենակարող փրկչի դերում՝ սովորական հրաշագործություններից մինչև սոցիալական արդարության հաստատում:

Որպես վաղ Վերածննդի ամենանշանավոր ստեղծագործություններ, դրանք, վեր հանելով հայ ժողովրդի կյանքում հասունացած ամենակենսական խնդիրները, հանդիսացան ազգային և սոցիալական ազատագրության ուղիների որոնման համաժողովրդական մտահոգության և նոր, մեծ փոփոխությունների ակնկալության արտահայտիչներ:

Այդ երկու գործերի հիմնական տարբերությունն այն է, որ «Սասնա ծռերը» դարաշրջանի իրադարձությունների արտացոլումն է, իսկ «Նարեկը»՝ հոգեբանական-փիլիսոփայական մտայնության: Սակայն բարձրացված խնդիրների մասշտաբայնությամբ և լուծումների խորությամբ այդ երկու գլուխգործոցները հայ ժողովրդի բոլոր ժամանակների «կենաց գիրքն» են կազմում: Հենց դրանով է պայմանավորված «Նարեկի», որպես մի մարդու կողմից ստեղծված գործի, լայն ժողովրդականությունը: «Նարեկի» և նրա հեղինակի անվան շուրջն ստեղծված լեգենդներն ու ավանդապատումները դրա և այն բանի վկայությունն են, որ «Նարեկը» հայոց մեջ վայելում է ժողովրդական էպոսի կարգավիճակ ունեցող ստեղծագործության սեր ու համարում, որ այն հայ ժողովրդի այցետոմսն է, ինչպես Ռուսթավելու «Ընձենավորը»՝ վրացիների, Նարտերի էպոսը՝ կովկասյան լեռնականների համար և այլն...

* * *

Գր. Նարեկացու՝ բովանդակությամբ հարուստ ժառանգությունն ուսումնասիրվել և ուսումնասիրվում է տարբեր ասպեկտներով. գրականագիտական (այդ թվում նաև թարգմանչաբանական), պատմափիլիսոփայական, լեզվաբանական, բնագրագիտական (ձեռագրագիտական) և այլն: Այդ բոլոր ուղղություններով վերջին տասնամյակներում տարվող ուսումնասիրությունների

արժեքավորությունը լիովին հիմք է տալիս պնդելու, որ ձևավորվել է հայագիտության մի ուրույն բնագավառ՝ նարեկացիագիտություն, որը, սակայն, իր առջև ունի դեռևս չլուծված խնդիրներ, մասնավորապես՝ Նարեկացու փիլիսոփայական հայացքների ուսումնասիրման ոլորտում: Այդ ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները կարելի է բաժանել երկու շրջանի. առաջին շրջանի ուսումնասիրություններում (հիմնականում մեկնություններ) Նարեկացու աշխարհայացքը լուսաբանվում և արժևորվում էր հիմնականում կրոնադավանաբանական դիրքերից (Գ. Ավետիքյան, Հ. Նայան և ուրիշներ), եկրորդ շրջանը պատմագիտական լուսաբանման ու արժեքավորման շրջանն է (Ա. Չոպանյան, Մ. Աբեղյան, Լեո, Մ. Մկրյան, Հ. Գաբրիելյան, Գ. Չալոյան, Գ. Խրլոպյան):

Նարեկացու ողջ աշխարհայացքի ամբողջական ուսումնասիրումը դեռևս իրականացված չէ: Մինչև այժմ այդ ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները վերաբերում են նրա հայացքների այս կամ այն կողմին և, հիմնականում, փիլիսոփայական աշխարհայացքի բուն էությանը, բնույթին: Այս հարցի լուսաբանումը որոշակի զարգացում է ապրել. սկզբից Նարեկացու աշխարհայացքը բնութագրվում էր որպես կրոնական միստիցիզմ և ոչ մի առաջադիմական (աշխարհիկ) միտում, երանգ, տարր չէր վերագրվում դրան (Աբեղյանի նախնական վերաբերմունքը, Լեո), ապա վեր հանվեցին Նարեկացու առաջադիմական հայացքները և նրա փիլիսոփայական աշխարհայացքը որակվեց որպես պանթեիզմ (Հ. Գաբրիելյան, Մ. Մկրյան): «Նարեկի» էության բացահայտման գործում մեծ է Չալոյանի ներդրումը: Նա Գր. Նարեկացու միստիցիզմին նվիրված իր հայտնի հոդվածում Նարեկացու փիլիսոփայությունը համարում է պանթեիստական, սակայն «դա ոչ միայն պանթեիզմի փիլիսոփայություն է, այլև նեոպլատոնիզմի փիլիսոփայության,

որպես պանթեիզմի աղբյուրի, մատնանշում»: Սա արդեն զգալի առաջխաղացում էր Նարեկացու փիլիսոփայության բնույթի ստույգ բնորոշման ուղղությամբ: Ըստ Չալոյանի, ուրեմն, Նարեկացու աշխարհայացքի էությունը պանթեիզմն է, իսկ նեոպլատոնիզմը պարզապես «մատնանշվում» է որպես պանթեիզմի աղբյուր: Այսօր արդեն պարզ է, որ Նարեկացու աշխարհայացքը հիմնականում նոր պլատոնական բնույթ է կրում, սակայն հարցն այդքանով չի սպառվում: Նարեկացին Վերածննդի նեոպլատոնիզմի ներկայացուցիչ է. նորպլատոնական հայացքները որոշակի զարգացում են ապրել նրա մոտ: Դա հելլենիստական և քրիստոնեական նեոպլատոնիզմի գուտ կրկնությունը, բառացի վերածնունդը չէ, այլ որոշակի, ավելի բարձր մակարդակի զարգացումն է, գրեթե նույն միտումներով, ինչ հետագայում Նիկոլայ Կուզանցու մոտ: Ինչ վերաբերում է պանթեիզմին, ապա այն ոչ թե Նարեկացու աշխարհայացքի բուն էությունն է, նրա փիլիսոփայական համակարգի ուղնուծուծը, այլ այդ համակարգի մի կողմը, բաղկացուցիչ տարրը միայն, իսկ համակարգն ամբողջությամբ կառուցվում է ոչ թե պանթեիզմի սկզբունքի հիման վրա, այլ նոր պլատոնիզմի, Արեոպագիտիկների տրադիցիաներով, իսկ պանթեիզմի գաղափարը նրա մոտ հենց մատնանշվում է որպես նեոպլատոնիզմի փիլիսոփայության եզրահանգումներից մեկը:

* * *

Գր. Նարեկացու ստեղծագործական ժառանգությունը խոր ազդեցություն է թողել հայ ժողովրդի հոգևոր զարգացման վրա: Այսօր էլ գրական անանց արժեք ներկայացնող նրա գործերը և, մանավանդ, «Մատյան ողբերգության» երկն ավելի ու ավելի լայն մասսայականություն են վայելում ու ներգրավված են

երիտասարդության գաղափարական և բարոյա-գեղագիտական դաստիարակության ոլորտում: Այս առումով շատ կարևոր է մեծ մտածողի ողջ աշխարհայացքի գիտական ուսումնասիրումն ու արժեքավորումը, ինչը լույս կսփռի նրա գրական ժառանգության նպատակային յուրացման վրա և միաժամանակ կլրացնի նարեկացիագիտության մեջ եղած համապատասխան բացը:

Բացի դաստիարակչական և գիտա-պատմական նշանակությունից, Նարեկացու աշխարհայացքի համակարգի և, առանձնապես, նրա մեթոդի ուսումնասիրությունը, մեր կարծիքով, ունի նաև գիտագործնական նշանակություն: Իմ վերաբերմունքը Նարեկացու փիլիսոփայական ժառանգության նկատմամբ եղել է խիստ «սպառողական»: Գլխավորը, ինչ հրապուրում, զարմացում, հիացում է Նարեկացու մեջ՝ նրա դիալեկտիկական տրամաբանությունն է, նրա փիլիսոփայական համակարգի կառուցման մեթոդը: Հայ մեծ մտածողի փիլիսոփայական պրպրտումները հետաքրքիր փորձ են դիալեկտիկայի պատմական զարգացման մեջ: Նարեկացու փիլիսոփայական ժառանգության շատ տարրեր պետք է ստույգ իմաստավորվեն, ուսումնասիրվեն և ըստ արժանվույն գնահատվեն ժամանակակից գիտության կողմից, իսկ դրանցից շատերն արժանի են ընդգրկվելու այսօրվա գիտական մտքի շրջանառության մեջ՝ որպես ակտիվ միջոցներ և սկզբունքներ: Ես այդպես էլ վարվել եմ իմ՝ «Տիեզերքի Արմոնային կառուցվածքը» աշխատության մեջ՝ ընդգրկելով ու կիրառելով Նարեկացու «կարգ բանի»-ը, մասի և ամբողջի, մեծի և փոքրի դիալեկտիկան: Նարեկացու փիլիսոփայելու դրական փորձը, որպես արժեքավոր նվաճում, կարելի է և պետք է օգտագործել ընդհանրապես փիլիսոփայության խնդիրների ժամանակակից մշակման, մասնավորապես՝ դիալեկտիկայի՝ որպես գիտական իմացության մեթոդի և համակարգի մշակման մեջ: Հենց սրանում է դրսևորվում

Նարեկացու փիլիսոփայության ոչ միայն պատմական անանց նշանակությունը, այլև, որն ամենակարևորն է, նրա որոշ սկզբունքների ու դրույթների արդիականությունը:

* * *

Նարեկացու աշխարհայացքն ամբողջությամբ արժեքավորելու, հայ և համաշխարհային հասարակական-փիլիսոփայական մտքի պատմության մեջ նրա տեղը սահմանելու, փիլիսոփայական հայացքների ամբողջ համակարգը վեր հանելու և այդ համակարգում «Մարդու հայեցակարգի» տեղը ցույց տալու, և, վերջապես, Նարեկացու մեթոդը բացահայտելու համար անհրաժեշտ է հաղթահարել հետևյալ դժվարությունները. նախ, պետք է բացահայտել Նարեկացու, որպես խոշոր մտածողի, ձևավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները (վեր հանել X դարի հայ իրականության սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններն ու հասունացած պրոբլեմները, ինչպես նաև դրանցով պայմանավորված մշակութային կյանքի հիմնական միտումներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև Նարեկացու աշխարհայացքի գաղափարական ակունքները, այդ թվում՝ Նարեկավանքի դպրատան հոգևոր միջավայրը): Մրանք ընդհանուր բնույթի, նախնական մոտեցման դժվարություններն են, որոնց հաղթահարումը լույս կսփռի Նարեկացու աշխարհայացքի լուսաբանման վրա:

Հետազոտության հետ կապված կոնկրետ բնույթի դժվարություններից ամենահիմնականը Նարեկացու գլխավոր երկի՝ «Մատյանի» շարադրանքի ձևն ու եղանակն է. ինքը՝ Նարեկը, ձգտել է ընդգրկել անընդգրկելի, և դա նրան հաջողվել է մարդկային մտքի հնարավորությունների ծայրագույն չափով: Թեև իր ժամանակի

գիտական, փիլիսոփայական լեզվամտածողությունը Դավիթ Անհաղթի և Շիրակացու մակարդակով էր մշակված, այնուամենայնիվ, հասկացությունների և կատեգորիաների համակարգն այն աստիճան ճկուն չէր, որ հնարավորություն ընձեռեր գիտության լեզվով ընդգրկել անընդգրկելին («անվթարը»), հետևապես Նարեկացին փորձում է բանաստեղծական խոսքի, պատկերավոր լեզվամտածողության հնարավորություններով ևս հասնել իր նպատակին: Եվ դա անում է գիտակցաբար. նախ, որ հեղինակը փիլիսոփայական չոր ու ցամաք տրակտատ գրելուց ավելի մեծ նպատակ է հետապնդել, նա ամեն կերպ ձգտել է, որ իր մատյանն ազդի ընթերցողի ոչ միայն մտքին, այլև՝ «սրտին»: Նարեկը մեծ տեղ է հատկացնում մտքի և հույզի միասնությանը, փոխանցմանը՝ խելացի միտքը նաև հուզիչ պիտի լինի: Եվ, ապա, հեղինակի համար թերևս ամենակարևոր հանգամանքը, պատկերավոր լեզվամտածողությունը՝ լեզվամիավորների բազմանշանակության, պատկեր-խորհրդանիշների բազմամեկնելիության շնորհիվ հնարավորություններ են ընձեռում քողարկելու, անցկացնելու որոշ համարձակ գաղափարներ:

Այս կարգի դժվարությունների հաղթահարումը որոշիչ նշանակություն ունի փիլիսոփայական հայացքների համակարգը բացահայտելիս: Օրինակ. մարմնացած Աստծո Բանի՝ Քրիստոսի և Մարիամ Աստվածածնի պատկեր-խորհրդանիշները ճիշտ հասկանալ կարելի է միայն ու միայն կոնտեքստում՝ դրանց ընկալումը համադրելով Նարեկացու ողջ աշխարհայացքի ֆոնի վրա դրանց ընկալմանը: Նարեկացու առանձին հայացքների առերևույթ ընդհատվածության, «կտրտվածության» ետևում պետք է տեսնել դրանց ըստ էության խորը փոխկապակցվածությունն ու միասնությունը, փոխլրացումը:

Դժվարությունները է նաև շարադրանքը, խոսքը վարելու

եղանակը կամ, ինչպես հեղինակն է ասում՝ «կարգ բանի»-ը: Դա, ըստ էության, Նարեկացու փիլիսոփայության մեթոդն է, նրա հայացքների ընդհանուր տրամաբանությունը:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԴԱՏԻ

ԱՌԵՂԾՎԱԾԸ

Հայկական Ռեֆորմացիան և Նարեկյան դպրոցը

Ինչպես արդեն նշվեց ներածությունում, տասներորդ դարում Հայաստան աշխարհը բուռն փոփոխություններ ապրեց:

Դա մի ժամանակաշրջան էր, երբ շահագործվող և ճնշվող խավերը, որոնք արաբական զավթիչների դեմ հաջողությամբ պսակված ազգային-ազատագրական պայքարի հիմնական շարժիչ ուժն էին կազմում, մեծ հույսեր էին կապում հայկական պետականության վերականգնման հետ: Սակայն սոցիալական որոշ բարեփոխումների, կյանքի պայմանների բարելավման նրանց հույսերը չարդարացան: Ավելին, X դարում սկսված՝ գյուղացիների զանգվածային ճորտացումը, նրանց ճնշումն ու շահագործումն սկիզբ դրեցին ներքին հուզումների, որոնք վերաճեցին հակակեղեցական, հակաֆեոդալական հզոր շարժման՝ հայկական Ռեֆորմացիային:

«Հայաստանում, - գրում է պրոֆ. Վ. Կ. Չալոյանը, - տարբեր սոցիալական խավերի միջև եղած հակասությունների ծայրաստիճան սրվածության և եկեղեցու տիրապետող դիրքի պայմաններում՝ միջնադարյան հեղափոխական ընդդիմությունը չէր կարող ավատական ստրկացման դեմ հանդես գալ այլ կերպ, քան բացահայտ կրոնական հերետիկոսության ձևով: Սակայն պայքարը,

ըստ էության, մղվում էր մարդկանց անհավասարության դեմ, հանուն նոր տիպի հասարակական հարաբերությունների: Ահա այդպիսի բացահայտ կրոնական հերետիկոսություն էր Հայաստանում առաջ եկած, այսպես կոչված, «թոնդրակյան» շարժումը՝ Ռեֆորմացիան»:

Մի կողմից՝ Վ. Չալոյանը իրավացիորեն նշում է, որ թոնդրակեցիների շարժումը Հայաստանում իր բնույթով, գաղափարներով ու հետապնդած նպատակներով համընկնում է եվրոպական Ռեֆորմացիայի միայն մեկ, մարտնչող թևին՝ Թոմաս Մյունցերի և մյուսների ներկայացրած հերետիկոսական, պլեբեյա-գյուղացիական հոսանքին, իսկ մյուս կողմից՝ թոնդրակյան շարժումը նույնացնվում է ամբողջ Ռեֆորմացիայի հետ: Սակայն, ինչպես Մյունցերի գլխավորած պլեբեյա-գյուղացիական շարժումով չի սպառվում եվրոպական (գերմանական) Ռեֆորմացիան, այդպես էլ թոնդրակեցիությունը հայկական Ռեֆորմացիայի դրսևորումներից մեկն է միայն: Հայ իրականության մեջ Ռեֆորմացիան ներկայացված է, թոնդրակեցիներից բացի, նաև չափավոր բարեփոխումների ու նորամուծությունների կողմնակիցների մեծ շարժմամբ, որը, առաջ քաշած հիմնական խնդիրներով, գրեթե նման է լյութերականությանը: Թեև, «չափավորականներին» կղերա-ֆեոդալական պահպանողականները, որոնք դեմ էին ամեն մի՝ անգամ աննշան նորաձևության, դասում էին թոնդրակեցիների շարքին և հավասարապես հետապնդում ու հալածում էին, բայց նրանք զգալիորեն տարբերվում էին թոնդրակեցիներից: Նրանք չէին ընդունում թոնդրակեցիների «ծայրահեղ» գաղափարները (Աստծո գոյության և հիերարխիայի ժխտում և այլն) : Նրանք թեև դժգոհ էին տիրող անարդարություններից, եկեղեցա-ֆեոդալական հիերարխիայի բռնություններից ու սաստկացած շահագործումից, սակայն դրանցից լիովին չէին հրաժարվում: Ընդհակառակը, տեսնելով, որ «ծույլ ու մարմնասեր» հոգևոր առաջնորդների կողմից

ժողովրդի՝ սաստկացած ճնշումն ու շահագործումը թուլացրել են եկեղեցու ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա, որ այդ զանգվածները դուրս են գալիս եկեղեցու հոգևոր ու ավատական հպատակությունից, վերահսկումից, նաև գիտակցելով, թե ինչ մեծ վնաս կարող է պատճառել այդ միտումը հայ ժողովրդի ազգային ու հոգևոր-մշակութային միասնությանը՝ մեկ միասնական պետականության բացակայության պայմաններում, «չափավորականները» առաջարկում էին եկեղեցական որոշ բարեփոխումներ անցկացնել: Եկեղեցու ժողովրդավարացման նպատակով նրանք ձգտում էին պարզեցնել եկեղեցա-ավատական հիերարխիան (և ոչ թե վերացնել), աշխուժացնել եկեղեցական ծիսակատարությունները և այլն:

Տասներորդ դարում Հայաստանում Ռեֆորմացիայի այդ հոսանքի գաղափարական կենտրոններից է եղել Նարեկի դպրեվանքը: Այդ դպրոցի առաջին նշանավոր գործիչը Խոսրով Անձևացին էր՝ հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու հայրը, ով «թեև չի կենցաղավարել Նարեկա վանքում, սակայն ազգակցական և ստեղծագործական կապերի մեջ էր նրա ներկայացուցիչների հետ և պատկանում էր գրական նույն ընտանիքին»:¹

Հայ պատմիչներ Ասողիկից, Կիրակոս Գանձակեցուց, Ստեփանոս Օրբելյանից իմանում ենք, որ Անանիա Մոկացի կաթողիկոսը ժամանակին գիտնականի անուն վաստակած Խոսրովին նշանակում է Անձևացյաց գավառի եպիսկոպոս: Խոսրովը ձեռնամուխ է լինում եկեղեցու մեջ որոշ նորամուծություններ կատարելուն: Կաթողիկոսը սկզբում առանձնապես նշանակություն էր տալիս նրա գործողություններին: Սակայն հետո, երբ Անձևացյաց

¹ «Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով, գեկուցումների դրույթներ», Երևան, 1986, էջ 66:

Եպիսկոպոսն իր նորամուծություններում շատ է հեռու գնում, քննադատվում է կաթողիկոսի կողմից, հալածվում և հետապնդվում:

Քարեբախտաբար, պահպանվել են Անանիա Մոկացի կաթողիկոսի թղթերը, որոնք անվանի բանասեր Գալուստ Տեր-Սկրտչյանի ջանքերով 1897 թ. լույս են տեսել «Արարատ» ամսագրում: Այդ թղթերից կարելի է մանրամասնորեն տեղեկանալ Խոսրով Անձևացու նորամուծությունների մասին, այն մասին, թե ինչու է կաթողիկոսը նգովել նրան: Անձևացյաց Եպիսկոպոսին ուղղված թղթերից մեկն այսպես է վերնագրված՝ «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի պատճառ յաղագս գԽոսրով նգովելոյն զԱնձևացոց Եպիսկոպոսն»: Այդ թղթում Անանիա Մոկացին գրում է. «Քանզի ի ՆԳ թուականիս և ի չորեքտասեան ամի մերոյ դիտաւորութեանս յարեաւ ոմն յԵպիսկոպոսաց մերոյ Խոսրով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձևացեացն, այր համեստ և գիտնաւոր և ալեօք ծերութեամբ գարգացեալ. յանկարծակի իբրև ի դիւական հոգւոյն շարժեալ, առանց իրիք հակառակութեան, սկսավ նախ զբարբառն զԵլակի արձակել՝ ըստ յունարէն լեզուոյն զկիրակէն կիւռիակէ կոչել և զԵրուսաղէմ՝ Երուսաղէմ, և որ սոցին նման է, ի սոյն յառեալ բարբառ: Իսկ զկնի այսորիկ, ապա այլ յառաջեաց բաջադմունս անհեղեղս: Քանզի հրամայէր մինչև մօրուսն եկեալ՝ զգլուխ խուզել մանկանց, թէ Այսր աղագաւ կոչի կտրիչ, և զկնի մորուսացն զհերսն ապա թողուլ, երկայնիլ և մանիլ ցարունսն, զի Այսր աղագավ կոչին մանուկ:

Եվ այս երկարեալ առ անգամ մի. ապա և յեկեղեցի եմոյծ զբաջադմանն իւրոյ զգայոսն: Քանզի յաղագս քրիստոսեան խաչին այսպէս ասէր, թէ Այն խաչն, որ քահանայքն արհնեն և այլ՝ գոր ոչ արհնեն-միապատիւ է, և արելորդ զարհնելն վարկանիմ: Եվ

յայտնաբերել ներքալ մեր նմա»¹: Հետաքրքիրն այն է, որ կաթողիկոսը Խոսրովին ներել է այդ նորամուծությունները, բայց երբ Խոսրովը բարձրացրել է եկեղեցական հիերարխիայի պարզեցման՝ եկեղեցական ինը դասերի կրճատման հարցը, առաջ է բերել կաթողիկոսի ցասումը. «Բայց որ երիս միայն կարգս ասես յեկեղեցուց և այլ ոչ ևս, ոստի՞ տուաւ քեզ այդպիսի գիտութիւն... Բայց և Դիոնէսիոս, յոր դուն յուսացեալ ես, թերևս յայլում վայրի ոչ շատանայ երիւքըդ միայն, այլ ավելի քան զեօթն շարադասէ, յորում առ Դիմոփիլոս գրէ մեղադրականս, որ էր կիսասարկավագ: Եւ արդ՝ դու, ասէ, բանիւ որ ըստ արժանաւորութեան են որոշէ, այսինքն զնուատագոյնսն քան զքեզ, իսկ քեզ աստուածայինքն պաշտօնեայք եղիցին խրատիչք, որ են սարկաւագունք, և նոցա քահանայքն, և քահանայիցն քահանայապետք և քահանայապետիցն առաքեալքն. և որ ի նոցանէ սխալեսցէ ի համակարգիցն կանգնեսցի, և ոչ դարձի կարգ ի կարգ վերայ: Ահա ոչ դադարեաց յերիսն և էթ, այլ ըստ ժամանակին ճառ է զպիտանացունսն, ուստի ճանաչել արժան է, զի յոյժ պիտանացու է իննապատիկ աստիճանն ի մէջ եկեղեցույ, ուր և առաքեալքն կարտացան ինն անգամ առնուլ հրաման»²: Խոսրով Անձևացին եկեղեցական դասերի, հիերարխիայի կրճատմամբ ուզում էր հասնել եկեղեցու պարզեցմանը, եկեղեցու և ժողովրդի միջև առաջացած անդունդի վերացմանը, որպեսզի եկեղեցու սպասավորներն ավելի քիչ տարվեին իրենց հոգսերով և ավելի մոտ լինեին ժողովրդին, ավելի մոտիկից զբաղվեին ժողովրդի մեջ հավատի ամրապնդման խնդիրներով: Խոսրովի կարծիքով՝ եկեղեցական դասերի շատությունը հնարավորություններ էր բացում հոգևոր խավի ուռճացման, այլասերման համար, և այդպիսով,

¹ «Արարատ», 1897, էջ 276-277:

² «Արարատ», 1897, էջ 286-288:

սպառնում էր եկեղեցու հաստատության ներսից քայքայմանը: «Գիտեմ,- գրում է Անանիա Մոկացին, - զի պետութիւն բառնալ կամիս, զոր ոչ կարես: Արդ՝ զի՞նչ քակիչ են այդոքիկ անուանք պետութեանն, թէ ոչ առաւել հաստիչ...»¹:

Կաթողիկոսին ամենից շատ զայրացրել է այն, որ Խոսրովը համարձակվել է դեմ գնալ «սրբություն սրբոցին»՝ եկեղեցական կազմակերպության ավատական հիմքերին: Խոսքը վերաբերում է կաթողիկոսի «ընծաներ» մատուցելուց Խոսրով Անձևացու հրաժարվելուն: Այդ «ընծա» կոչվածը փաստորեն պարտադիր հարկի նման մի բան էր: Կաթողիկոսի թղթերից իմանում ենք, որ Խոսրովը նման հարկեր տալուց հրաժարվել է՝ ասելով. «Ով կացոյց զիս կապալատեր կաթողիկոսի», և դա փորձել է հիմնավորել, ինչպես Կիրակոս Գանձակեցին է հաղորդում, հետևյալ կերպ. «Ոչ է պարտ եպիսկոպոսի ընծայաբեր լինել եպիսկոպոսապետի, այսինքն կաթողիկոսի, զի աւելի օրհնութիւնոչ ունի ասէ, բայց միայն զանուանակոչութիւնն»²:

Անանիա Մոկացին խոսրովի այդ քայլը դիտում է որպես հայ եկեղեցու մեջ նոր հերձվածք մուծելու փորձ, «... Ապա սկսաւ այլ իմն նոր հերձուած աւանդել մուծանել յեկեղեցի Աստուծոյ: Քանզի ասէր. մի պատիւ և մի փառք հրեշտակաց և հրեշտակապետաց, ըստ նմին՝ մի փառք և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին, տարացոյց տալով, թէ Գրեալ է՝ կոչեն զայս ոք ի դպրութենէ յաշտիճան սարկաւագութեան՝ ի զայն ոք կոչեն ի սարկաւագութենէ յաշտիճան քահանայութեան. ահաւասիկ դեռ ի վերանալ է աշտիճանօք: Եւ զի այս ոք, ասէ, կոչեն ի քահանայութենէ յաթոռ Եպիսկոպոսութեան, չիք աշտիճան այլ, ահա գերադրեցաւ յաթոռ: Եւ զայն ոչ կոչեն

¹ «Արարատ», 1897, էջ 277-280:

² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Եր., 1961, էջ 85-86:

յեպիսոպոսութենէ յաթոռ հայրապետութեան, և չիք այլ անուանց յորջորջումն, մի աթոռ է և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին: Եւ զերկրորդ կոչումն լուծումն ասէր և ոչ կրկին պատիւ հայրապետութեան»¹: Կաթողիկոսը քողարկելով հարցի էական, սոցիալական կողմը, Խոսրովին մեղադրում է անջատողականության, դավաճանության մեջ. «... Այս դաժան և չարագիւտ կորստական իմացմունք զամենայն գլխաւորութիւնս եկեղեցոյ միանգամայն տապալել ունի և բառնալ առաջնորդական հաստադրութեան և սահմանի, որպէս և իւրաքանչիւր առանձին լինել քուրմ և տուն, և հասարակաց չարադիւթութիւն»: «Եւ առաւել քան զսոյն ի նոյն միտ յաւել, - գրում է զայրացած կաթողիկոսը, - զոր աղաչեալ մեր բազում անգամ դառնալ նմա յայնմ անուղղայ և մտախակ խորհրդոյ, զոր թէև արտասուօք իսկ խնդրեցաք, սակայն ոչ կամեցաւ ուղղիլ»: Խորամանկ և կեղծավոր կաթողիկոսը «արտասուօք» խնդրել է Խոսրով Անձևացուն չըմբոստանալ, չհրաժարվել ենթարկվելուց և իր «սուրբ» պարտքը կատարելուց՝ պարբերաբար ճոխ ընծաներ տանել կաթողիկոսին, այլ կերպ ասած՝ պահանջվող հարկը վճարել: Բայց, քանի որ Խոսրով եպիսկոպոսը հրաժարվել է նաև այդ անելուց, արժանացել է կաթողիկոսի բանադրանքին:

Ժամանակակիցները Խոսրով Անձևացուն իր նորամուծությունների համար մեղադրել են իբրև ծայթի, այսինքն՝ որպէս հայ պաշտոնական եկեղեցու հավատից շեղվողի, որպէս քաղկեդոնականի: Ինքը, սակայն, այդ մասին գրում է հետևյալը, «Որ ոք (ի Հայոց) այլոց ազգաց իրաւունս տացէ յիրս ինչ վասն ճշմարտութեան՝ ծայդ կարդան՝ թերի ի հաւատս, ծանակ առնեն և հալածեն և ի մահ սպառնան, մինչ գրեթէ մազապուրծ լիցի»²:

¹ «Արարատ», 1987, էջ 277:

² Խոսրով Անձևացի, Մեկնութիւն ժամագրոց, Կ. Պոլիս, 1840, էջ 199:

Հայաստանում Ռեֆորմացիան հոգևոր մշակութային ոլորտում առաջ բերեց իսկական վերածնություն: X դարից սկսած հետագա 4-5 դարերի ընթացքում հայ ժողովրդի հոգևոր կյանքում որոշակի վայրէջքներով ու վերելքներով հանդերձ տեղի ունեցան այնպիսի խոշոր որակական փոփոխություններ, որոնց ամբողջությունը հայ մշակութային զարգացման մեջ մի շատ նշանակալից դարաշրջան է կազմում, որն իրավամբ անվանում են «Հայկական Ռենեսանս»¹:

Իրականության հասունացած հակասությունները, արտացոլվելով հոգևոր մշակույթում, տեղիք են տալիս գաղափարական սուր պայքարի: Գաղափարախոսության, մշակույթի բնագավառում քրիստոնեական աշխարհայացքի՝ «վերևից» ճնշող ազդեցության ուժեղացմանը զուգընթաց, ուժեղանում էր նաև աշխարհիկ մտածողության, աշարհիկ մշակութային տարրերի «ներքևից» հակազդեցությունը: Քրիստոնեության գաղափարական հիմունքների վերանայումից (մեկնողական ազատախոհություն, որը նույնպես անհաշտության արտահայտությունն էր) մինչև պանթեիզմ և աթեիզմ. ահա այդ գաղափարական պայքարի հիմնական ուղղությունները: Ժամանակը պահանջում էր իշխող գաղափարների վերանայում (թեև հոգևորականության հետադեմ շրջանները պաշտպանում էին քրիստոնեության դոգմաների անհեղիժությունը և, ընդհանրապես, դեմ էին դրանց ազատ մեկնաբանմանը), սակայն դրան տարբեր դիրքերից և տարբեր նպատակներով էին մոտենում Ռեֆորմացիայի երկու (հակադիր) հոսանքների ներկայացուցիչները: Մի կողմը ձգտում էր վերանայել այդ գաղափարախոսությունը՝ կատարելագործելու նպատակով, իսկ մյուս կողմը՝ այն խիստ քննադատելու և անգամ ժխտելու, նոր գաղափարական հիմունքներ առաջ քաշելու նպատակով:

¹ Վ. Կ. Չալոյան, Հայկական ռենեսանս, Եր., 1964:

Հայկական Ռեֆորմացիայի այդ երկու ճամբարների ներկայացուցիչներին, սակայն, միավորում էր ընդհանուր մի բան, անցյալի, մասնավորապես՝ հելլենիստական մշակույթի ու փիլիսոփայության նկատմամբ ակտիվ հետաքրքրությունը: X դարից սկսած «հայկական գիտությունը և փիլիսոփայությունը դրսևորում են աճող հետաքրքրություն հելլենիստական մշակույթի ու փիլիսոփայության նկատմամբ... Վերածնության գործիչներն իրենց գաղափարական պրպտումների մեջ, բնականաբար, պիտի դիմեին նախ և առաջ իրենց ժողովրդի հոգևոր անցյալին...»¹: Այդ երևույթի ակունքներում կանգնած էին միջնադարի հայ խոշոր մտածող Խոսրով Անձևացին և Նարեկա դպրոցի երկու ականավոր ներկայացուցիչները՝ Անանիա և Գրիգոր Նարեկացիները:

Անանիա Նարեկացին եկեղեցական գրականության, հոգևոր բանաստեղծության աշխարհականացման պրոցեսի առաջնեկն է: Խորապես ընկալելով իր ժամանակի պահանջները, ժողովրդի կյանքում առաջացած հումանիստական տրամադրություններն ու մտածողությունը, Անանիա Նարեկացին ձգտում է որոշակիորեն աշխուժացնել եկեղեցական ծիսակատարությունները, հասնել դրանց ներգործության բարձրացմանը: Անանիա Նարեկացու ստեղծագործական նորարարության շնորհիվ զարգացման նոր որակ են ստանում եկեղեցական գրականության այնպիսի ժանրեր, ինչպիսիք են՝ քարոզը, ներբողը, խրատը: Անանիա Նարեկացին նախ և առաջ տեսականորեն հիմնավորում է պոեզիայի, գրականության մեջ աշխարհիկ տարրերի օգտագործման անհրաժեշտությունը: Գրականագետ Հրաչյա Թամրազյանը գրում է, որ Անանիա Նարեկացու կարծիքով. «ստեղծագործողն իր պատկերները, գղջման

¹ Վ. Կ. Չալոյան, Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը, Եր., 1946, էջ 195-196:

օրինակները պետք է վերցնի երկրային կյանքից, «Ձոր արինակ հողագործքն յառաջագոյն պատրաստեն զանաւթ գործոյն, մինչդեռ ոչ է հասեալ ժամանակ վաստակոյն, այսպէս և դու զարն ամենայն արինակ իմացիր զտութեան երկրավորացս աստի, վասն որոյ ասէ առաքեալն. «Աներևոյթքն Աստուծոյ արարածովքս իմացեալ տեսանին»¹:

Հայ մատենագրության մեջ Անանիա Նարեկացին ներկայացված է իբրև փիլիսոփա, երաժիշտ, բանաստեղծ ու հռետոր: Նա միջնադարյան հայ մշակույթի մեծ երախտավորներից է: Անանիան եղել է միստիկ մտածող: Նա, որպես բանաստեղծ-նորարար, «առավել ուշադրություն է դարձնում մարդկային ներքին ծեսին, ներքին աղոթքին, ներքին մենախոսությանը, որոնք ծառայում են «ներքին» մարդու մաքրագործությանը: Նա զարգացնում է ներանձնական աղոթքի մի տեսություն, որով փորձում է թափանցել ստեղծագործական պրոցեսի մեջ, քննել նրա յուրահատկություններն ու էական հատկանիշները»²: Ստեղծագործական այս մոտեցումն իր զարգացումն է գտնում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» միստիկական պոեմում: Անանիա և Գրիգոր Նարեկացիների քարոզած միստիցիզմն ու ասկետիզմն առաջին հերթին ուղղված էին «ծույլ ու մարմնասեր» հոգևորականության դեմ, կալվածատեր ու դրամասեր եկեղեցական գործիչների դեմ: Այդ էր պատճառը, որ երկուսն էլ ժամանակի բարձրաստիճան հոգևորականության կողմից մեղադրվեցին իբրև թոնդրակեցիներ: Անանիա Նարեկացին X դարի 40-ական թվականների կեսերին Անանիա Մոկացի կաթողիկոսի պատվերով գրել է մի ծավալուն աշխատություն՝ «Հակաճառութիւն

¹ Տեւ. Հ. Հ. Թամրազյանի «Անանիա Նարեկացու «Վասն անցաւոր աշխարհիս» բանաստեղծությունը» հոդվածը: ՊԲՀ 1980, հ. 4, էջ 185:

² Հայ միջնադարյան գրականության, միջազգային գիտաժողով, էջ 66:

ընդդեմ թոնդրակեաց և այլ աղանդաւորաց» վերնագրով, որի մեջ հեղինակը հայկական Ռեֆորմացիայի մարտնչող թևի՝ թոնդրակեցիների գաղափարախոսությունն ու գործունեությունն է քննադատել՝ այն դիտելով իբրև անընդունելի ծայրահեղություն: Սակայն դա էլ չի օգնել հեղինակին մեղադրանքից խուսափելու համար, քանզի իր կյանքի վերջում ինքն էլ է կասկածվել այդ աղանդավորությանը հարելու մեջ և մահամերձ վիճակում՝ կաթողիկոսի պարտադրանքով, գրել է իր «Խոստովանության գիրը»: Պրոֆ. Մ. Մկրյանն այդ կապակցությամբ գրում է. «Իբրև միսոիկ, Անանիան կարող էր քննադատական վերաբերմունք ունենալ եկեղեցականության նկատմամբ, որը զսպելու նպատակով այն ժամանակ (թոնդրակեցիների պայքարի ծավալման պայմաններում) կաթողիկոսի կողմից հեշտությամբ որակվել է որպես հնարավոր աղանդավորության արահայտություն: Հետագայում ճիշտ այդպիսի վերաբերմունքի է արժանացել նաև Գրիգոր Նաեկացին»¹:

Գրիգոր Նարեկացին Նարեկի գիտա-կրթական և լուսավորական-մշակութային օջախի ամենաակնառու դեմքն է: Հանճարեղ բանաստեղծն ու մտածողը դարձավ միջնադարյան Հայաստանի հոգևոր կյանքի մեծ նորարարը: Նրա գրական-ստեղծագործական անգնահատելի ժառանգությունը ոչ միայն գրական-գեղարվեստական մտքի, այլև հասարակական-փիլիսոփայական մտքի աշխարհականացման, հումանիզացման պրոցեսի սկիզբը դրեց: Արդեն իր ժամանակակիցների կողմից նա մեծարվել է իբրև մեծ փիլիսոփա ու գիտնական, բանաստեղծ, հոետոր ու երաժիշտ: Չափազանց մեծ է նրա վաստակը միջնադարի հայ գրական լեզվի ծաղկման ու զարգացման գործում: Նա եղել է մեծ

¹ Մ. Մկրյան Գրիգոր Նարեկացի, Եր., 1955, էջ 121:

լեզվաշինարար¹:

Խոսքով Անձևացու և Անանիա Նարեկացու բեղմնավոր գործունեությամբ, ստեղծագործական և գիտամանկավարժական նորարարությամբ էր պայմանավորված Նարեկի դպրոցի հոգևոր մշակութային մթնոլորտը: Այդ մթնոլորտում է դաստիարակվել ու ձևավորվել Գրիգոր Նարեկացին: Նա իր հոր և ուսուցչապետի գաղափարների արժանի ժառանգորդը հանդիսացավ և շարունակեց նրանց գործը:

Գր. Նարեկացու դաստի հարցը

Գրիգոր Նարեկացու կյանքի ու գործունեության մասին մեզ կցկտուր տեղեկություններ են հասել: Հայտնի է, որ նա Խոսքով Անձևացու որդին է, որ մանկությունից կրթվել ու դաստիարակվել է Նարեկա վանքում՝ ժամանակի նշանավոր ուսուցչապետ, իր մոր հորեղբայր Անանիա Նարեկացու մոտ: Ստեղծագործել սկսել է պատանեկությունից: 977 թվականին, իր հարուստ գիտելիքների և անբասիր վարքի շնորհիվ, արդեն հոչակ ձեռք բերած Գրիգորը լուրջ պատվեր է ստանում՝ Վասպուրականի Գուրգեն թագավորը նրան առաջարկում է գրել «Երգ երգոցի» մեկնությունը: Գր. Նարեկացին գրել է ճառեր, գանձեր, տաղեր, բայց նրա ստեղծագործական պսակը «Մատյան ողբերգության» անմահ պոեմն է, որն ավարտելուց մեկ տարի անց՝ 1003 թվականին վախճանվել է:

Մեզ է հասել մի շատ հետաքրքիր տեղեկություն այն մասին, որ Գրիգորը ժամանակին մեղադրվել է հերձվածողության մեջ, հալածվել, որ անգամ հոգևոր և աշխարհիկ մեծավորները հավաքվել են մի վայրում նրան դատելու, սակայն նա, իբր՝ հրաշագործությամբ,

¹ Տես. Վարազ Առաքելյան, Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975թ.:

ապացուցել է իր անմեղությունն ու սրբությունը և այդպիսով խույս է տվել դատարանին ներկայանալուց. «Եւ զի ջան և փոյթ էր սրբոյն վասն միաբանութեան եկեղեցեաց, զի զեղծեալ և անփոյթ արարեալ կարգս եկեղեցոյ սրբոյ ի ծուլից և ի մարմնասէր առաջնորդաց. կամէր հաստատել և վերստին նորոգել: Վասն որոյ՝ այլանէին զնա բիրտ և սոպո մարդիկք և համբաւէին զնա ծայթ: Եւ ժողովեալ ի մի վայր եպիսկոպոսունք և իշխանք՝ ազատանօք տանուտերօք, եւ յղեալ կոչեցին զնա՝ առ ի դատեալ և յանդիմանել հրապարակաւ, և աքսորել զնա պատուհասի՝ որպէս զհերձուածող: Եւ եկեալ առ սուրբն հրավիրակքն զի տարցեն զնա: Իսկ սուրբն զհտացեալ զխորհուրդս նորցա եւ կամեցավ յանդիմանել զանմտութիւն նոցա: Ասաց. Նախ կերիցուք հաց, և ապա զնասցուք: Եւ ետ տապակել երկու աղանիս և բերեալ եղ առաջի նոցա սեղան: Եւ օրն այն՝ ուրաթ էր: Ընդ որ ևս առաւել զայթակղեցան հրավիրակքն և ասեն. Վարդապետ՝ ո՞չ է օրս ուրբաթ, և նա իբրև յանգեալ եղեալ ասաց. Թողութիւն արարէք եղբարք, ես ոչ զհտացի թէ պահս է օրս այս: Տայնժամ ասէ ցտապակեալ աղանիսն. Արիք զնացէ ի տեղիս ձեր և յերամս, զի պահս է օրս այս: Եւ նոյն ժամայն ընդ՝ ասել սրբոյն կենդանացան աղանիքն և թևս առեալ թռեան առաջի ամենեցուն: Եւ տեսեալ զգարմանալի սքանչելիսն որ եղեն, և ապուշ մնացին. և յարուցեալ անկան յոտս յերկիր պագին, և թողութիւն անձանց հայցէին:

Եւ զնացեալ պատմեցին զհրաշն որ եղեն: Եւ նոքա լռեցին ի չար խորհրդոցն և անուանեցին զնա յերկրորդ Լուսավորիչ և երկրորդ սքանչելագործ»¹:

Պրոֆ. Մ. Մկրյանն իրավացիորեն նշում է, որ այս, իչպէս և շատ ուրիշ հրաշքներ, որ պատմվում են Նարեկացու մասին ստեղծված մի շարք լեգենդներում և վիպական երգերում, ապացուցում են այն, որ

¹ «Յայսմաւորք» 1706, էջ ԵՃԺԹ 16:

պատմական ճշմարտություն է պաշտոնական եկեղեցականության կողմից նրա հետապնդվելը: Եվ եթե այդպես է, շատ կարևոր է պարզել, թե ինչի համար է հետապնդվել մեծ մտածողը: Նարեկացու ազատախոհությունը, իրականությունից դժգոհությունը, նրա ընդգծված միստիցիզմը հիմք են տվել հոգևորականության որոշ շրջաններին՝ մեղադրելու իրեն իբրև թոնդրակեցու, թեև ինքը՝ բանաստեղծը, իրեն թոնդրակեցի չի համարում, և ինչպես իր ուսուցիչը, գրավոր հանդես է եկել այդ շարժման մեջ: Սակայն ժողովրդական այդ շարժման շատ գաղափարների ազդեցությունը Նարեկացու աշխարհայացքի վրա ակնհայտ է: Ինքը՝ բանաստեղծն էլ, չի ժխտում այդ ազդեցությունը. «Մատյանի» ՀԵ գլխում նա նշում է, որ ժամանակին ինքն էլ է տարվել հերձվածողական չարափառությամբ: Գործնականում Նարեկացին իսկապես դեմ էր թոնդրակեցիների «ծայրահեղություններին». չէ՞ որ նա կրթվել և դաստիարակվել էր Նարեկի դպրոցում և չափավոր բարեփոխումների կողմնակիցների հոսանքն էր ներկայացնում: Նա ոչ թե եկեղեցիներն ու վանքերը քանդելու, ավերելու կողմնակից է եղել, այլ, ինչպես Հայսմավուրքն է վկայում, ձգտել է ծույլ ու մարմնասեր առաջնորդների կողմից զեղծված ու անփույթ դարձած եկեղեցական կարգը հաստատել և վերստին նորոգել, որոշ բարեփոխումների միջոցով վերականգնել եկեղեցու խարխլված հեղինակությունը, ժողովրդից կտրված և ժողովրդին հակադրված եկեղեցին նորից «մոտեցնել» ժողովրդին, որպեսզի ժողովրդի արդեն երերացող հավատը նորից ամրապնդվի: Ի դեպ, այդ հարցը մտահոգել է տասներորդ դարի հայ պատմիչ Ուխտանեսին ևս, որը կրում է Նարեկի դպրոցի խոր ազդեցությունը: Դա չէ՞ արդյոք ստիպել պատմիչին բացականչելու. «և դարձեալ, երանի որ խորհի յաղբատն և ի տնանկն և գայն ևս իւր համարի Աստուած»:

Իր հոր՝ Խոսրով Անձևացու նման, Գր. Նարեկացին նույնպես մեղադրվել է իբրև ծայթ, այսինքն՝ քաղկեդոնական, հունադավան՝ միայն և միայն այն պատճառով, որ նա, որպես ժամանակի ամենակրթված անձնավորություն, մեծ սիրով ու հարգանքով էր վերաբերվում հունական մշակույթին, և հարևան քաղկեդոնական ազգերից որոշ դրական բաներ ուզում էր ներմուծել հայ եկեղեցի: Վերստին հիշենք Խոսրով Անձևացու խոսքերը. «Որ ոք այլոց ազգաց իրաւունս տացէ յիրս ինչ վասն ճշմարտութեան՝ ծայդ կարդան՝ թերի ի հավատս, ծանակ առնեն և հալածեն և ի մահ սպառնան, մինչ գրեթէ մազապուրծ լիցի»:

Գրիգոր Նարեկացու մասին ականավոր պատմաբան Միքայել Չամչյանն ասում է. «Հերձուածօղ համարեցաւ նա վասն կամելոյ միաբանել զհայս ընդ այլ եկեղեցեաց՝ ընդ յունաց և ընդ վրաց, որք էին քաղկեդոնականք. ևս և վասն բարեկարգութիւն առնելոյ ի նոցանէ»¹: Այն նորամուծություններից մեկը, որ «չափավորականներն» ուզում էին փոխառնել հարևան քաղկեդոնական եկեղեցիներից, սրբապատկերներն էին:

Սյունիքի Վահան եպիսկոպոսի մասին, որը Անանիա Մոկացուց հետո ընտրվում է հայոց կաթողիկոս, Օրբելյանը գրում է, «Նա մեկ տարի (կաթողիկոս) մնալուց հետո սկսեց Վրաստանից պատկերներ բերել ու դնել սեղանի վրա: Հրամայեց նույնն անել բոլոր եկեղեցիներում՝ ըստ հույների սովորության, սեղանները զարդարել

¹ Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. ք, էջ 1023: Չամչյանը այդ «միաբանությունը» այլ կերպ է հասկանում և մեկնաբանում՝ ցանկալին իբրև իրականություն մատուցելով. ըստ նրա՝ Նարեկացին իսկապես քաղկեդոնականություն է ընդունել: Մինչդեռ, ճշմարտությունն այն է, որ քաղկեդոնական չլինելով հանդերձ՝ Նարեկացին ցանկացել է համերաշխություն հատատել հարևան քրիստոնյա եկեղեցիների ու ազգերի միջև:

սրբապատկերներով, պատարագ չմատուցել առանց սրբապատկերների: Այս պատճառով բոլորը կասկածեցին, թե հույների հետ դաշինք է կնքել և կամենում է նրանց աղանդը (մեր) եկեղեցին խցկել: Թագավորի մոտ բողոք բարձրացրին: Եվ նա հրաման տվեց ժողով գումարել Անի քաղաքում՝ իսկությունը քննելու նպատակով: Վահանն այդ իմանալով՝ ժողովին չներկայացավ, այլ ելավ գնաց Վասպուրական աշխարհը, Գագիկ թագավորի որդի Համագասպի մոտ ու նրան իր հետ համաձայնության բերեց՝ ասելով, որ ինքը զրպարտված է նախանձոտ մարդկանց կողմից»¹:

Ներսես Լամբրոնացին Գրիգոր Նարեկացուն Վահան կաթողիկոսի համախոհն է համարել²: Հետաքրքիրն այն է, որ Նարեկացին իր «Մատյան ողբերգության» պոեմի ՀԵ վիճելի գլխում ևս խոսում է սրբապատկերների նշանակության մասին, և ընդգծում է, որ Աստվածամոր պատկերը նկարելը հանցանք չպետք է համարել. «Եթե Աստուածածնին իսկ պատկեր գտյն ոք գրեսցէ, ոչ անարիինի: Իբր զնշան իաչին փրկութեան՝ զարութիւնս զարմանազանս եւ արուեստս բազմարիւնակս կատարեալ հրաշագործէ: Բեմ ահաւորին ատենի ի սմա հաստատեալ տեսանի: Սովաւ խորթաբարոյիցն հերձուածողաց մոլեգնաճառ բերանք կարկին»³: Ինչպես երևում է մեջբերումից, Նարեկացին սրբապատկերների անհրաժեշտությունը հիմնավորում է՝ հակադրվելով թոնդրակեցիներին, որոնք ընդհանրապես չէին ընդունում դրանք:

Վահան կաթողիկոսը (ինչպես և Խոսրով Անձևացին, Անանիա և Գրիգոր Նարեկացիները) քաղկեդոնական չի եղել և զրպարտություն է համարել իր հասցեին նմանօրինակ մեղադրանքը: Հայկական

¹ Ստեփանոս Օրբելյան, Մյունիքի պատմություն, Եր., 1986 թ., էջ 249-250:

² Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 1024:

³ Գր. Նարեկացի, «Մատենան ողբերգության», Եր., 1985, էջ 553:

Ռեֆորմացիայի այդ գործիչների ներկայացրած թեր առանձնահատուկ դիրքորոշում ուներ 10-րդ դարի հայ-քաղկեդոնական հարաբերություններում: Մթափ դատող հայ ռեֆորմիստ-միաբնակները տեսնում և հասկանում էին, որ դավանաբանական վեճերը վերածվում են քաղաքական բռնությունների, ազգամիջյան բախումների, հակամարտության և ջլատում են հարևան քրիստոնյա ժողովուրդների ուժերը, վնասում նրանց հորգևոր-մշակութային, տնտեսական ու քաղաքական միասնությանը, իսկ դրա արտաքին ընդհանուր սպառնալիքի պայմաններում մեծ դժբախտությամբ էր հղի: Դրանով միայն պետք է բացատրել վերոհիշյալ գործիչների ձգտումը և ձեռնարկած ջանքերը՝ հայ-քաղկեդոնական սրված հարաբերությունները մեղմելու, այդ հողի վրա ծագող ազգամիջյան ընդհանրումներին վերջ տալու ուղղությամբ: Այսպես, չափավոր բարեփոխումների կողմնակիցների գործունեությամբ, հարևան երկաբնակ եկեղեցիների ու ժողովուրդների նկատմամբ իրենց առանձնահատուկ վերաբերմունքով փաստորեն ձևավորվեց միջնադարյան իրականության համար բոլորովին մի նոր մտայնություն, նոր գաղափար՝ դավանաբանական հանդուրժողականության և ազգամիջյան համերաշխության գաղափարը: (Ինչպես տեսնում ենք՝ խաղաղ գոյակցության սկզբունքը պատմական անցյալ ունի): Այդ գաղափարը հետագայում մշակվում և տեսականորեն հիմնավորվում է Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու թղթերում. «Համոզվելով, որ անկարելի է հանգել միասնական քրիստոսաբանական եզրակացության, 12-13-րդ դարերի հայ մատենագիրներ Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին հայոց էթնիկական աշխարհի տարբեր ծայրերում (Գոշը՝ Վրաստանին ենթակա Հյուսիսային Հայաստանում, Վարդանը՝ Կիլիկյան Հայոց թագավորությունում), միմյանցից անկախ, բայց հավասարապես նույն մտահոգությունից

դրված, հանդես եկան բացառապես ինքնատիպ և քրիստոնեական մշակութային աշխարհում իր նախօրինակը չունեցող կոչերում: Այդ դիմում-կոչերի հիմքում դավանական հանդուրժողականության և ազգամիջյան համերաշխության գաղափարն է դրված»¹:

Վահան կաթողիկոսը, ինչպես և Գրիգոր Նարեկացին, ձգտելով քաղկեդոնական եկեղեցիների հետ համերաշխության, երբեք չեն նպատակադրվել հանուն այդ միասնության զոհաբերել հայ եկեղեցու ինքնությունը: Վահան կոթողիկոսն անձամբ շահագրգռված չէր հայ եկեղեցին դարձնել քաղկեդոնական և այդպիսով այն կախման մեջ դնել բյուզանդական եկեղեցուց: Նրանք դավանական հանդուրժողականության հիման վրա փորձում էին խաղաղեցնել առանց այդ էլ սրված հարաբերությունները հարևան եկեղեցիների հետ: Դավանական հանդուրժողականությունը Գրիգոր Նարեկացու՝ հանճարեղ բանաստեղծի ու մտածողի, հումանիստական աշխարհայացքի դրսևորումներից մեկն է: Դրանով միայն կարելի է բացատրել, որ նա իր «Մատյանը» գրել է բոլոր քրիստոնյա ազգերի համար անխտիր, առանց հաշվի առնելու միաբնակ են, թե երկաբնակ («առ բոլոր գումարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից»): Սակայն հասկանալի է, որ հայ եկեղեցու արտաքին քաղաքական հարաբերությունների հարցում Նարեկացու նման դիրքորոշումը պահպանողականների կողմից կարող էր որակվել և որակվել է իբրև նահանջ «ուղիղ հավատից» և, անգամ, դիտվել որպես դավաճանություն, մանավանդ այն ժամանակ՝ 10-րդ դարի 80-ական թվականների կեսերին, Բյուզանդիայի հայահալած քաղաքականության սաստկացման նոր փուլում:

¹ Հայ միջնադարյան գրականության միջազգայն գիտաժողով (գեկուցումների դրույթներ) - Եր., 1986, էջ 148:

Ուստի շատ հավանական է, որ պահպանողական հոգևորականությունը ցանկանար Նարեկացուն դատել: Ցավոք, դատի մասին, Հայսմավուրքից բացի, հայ մատենագրությունից մեզ կոնկրետ ոչ մի տեղեկություն չի հասել: Հայտնի չէ, թե որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ հանգամանքներում է տեղի ունեցել այդ դատը կամ ընդհանրապես եղե՞լ է այն, թե՞ ոչ: Եվ ամենակարևորը. «Մեզ ոչինչ հայտնի չէ, թե ինչպես է Նարեկացուն հաջողվել ազատվել իր համար կազմված դատարանին ներկայանալուց կամ, եթե ներկայացել է, ինչպես է արդարացել»¹:

Հայսմավուրքի՝ Նարեկացուն վերաբերվող տեղեկությունների մեծ մասը համապատասխանում է ճշմարտությանը: Մենք հիմք չունենք չհավատալու այն բանին, որ դատ իսկապես եղել է, որ եպիսկոպոսներն ու իշխանները հավաքվել են մի տեղ՝ Նարեկացուն դատելու: Այս տեղեկության ճշմարտությանը կասկածել չի կարելի, որովհետև, թեև Նարեկացուն դատելու նպատակով մեծավորների հավաքվելու փաստարկն ինքնին անցանկալի էր պաշտոնական եկեղեցու համար (սրբին դատելու փորձն իսկ պատիվ չի բերում եկեղեցու սպասավորներին), բայց դրա մասին, այնուամենայնիվ, բացեիբաց ասվում է Հայսմավուրքում: Ինչո՞ւ, որովհետև այդ տհաճ փակուղուց դուրս գալու հնարը նախապես արդեն հորինվել էր. թեև դատի հավաքվել էին, բայց սուրբ Նարեկացին չի դատվել, իր հրաշագործությամբ ապացուցել է իր սրբությունը և այդպիսով իբր սուրբը չի ստորացվել, նրա դատավարությունը չի կայացել:

Դատ լինելու փաստն ընդունում է և Մ. Չամչյանը, որը նույնիսկ կոնկրետացնում է ժողովը գումարվելու տեղը և տարեթիվը, «Տեսեալ սորա (Գրիգորի) զտարապարտ բաժանումն հայոց յազգեն յունաց՝ պատճառաւ սրբոյ ժողովոյն Քաղկեդոնի, ընդ տեղեկութեան՝ գոր

¹ Մ. Մկրյան, «Գրիգոր Նարեկացի» Եր., 1955, էջ 122:

ունէր ի Վահանայ կաթողիկոսէ ի գալ նորա ի Վասպուրական, և ամ իրոք ի վրա հասեալ ճշմարտութեան՝ ջան գործեաց հավանեցուցանել զազգն ի միաբանութիւն ընդ եկեղեցոյն յունաց և այլոց ազգաց քաղկեդոնականաց, և անհետ առնել զգրգռութիւն ասեալ թէ յաւուրց անտի աւերանց և ամայութեան յազգին հայոց պէսպէս խանգարմունք սպրդեալ են ի տեղիս յեկեղեցական կարգի, փոյթ կալաւ ինսամով զգուշութեան ուղղել զնոսին:

Ձայսպիսի բարի խորհուրդ սրբոյն իմացեալ ոմանց ի ետսամիտ անձանց՝ սկսան ընդ ակամբ հայիլ ի նա. և կոչեին զնա ծայթ, իբր թէ պակասեալ ի հաւատոց և շրջեալ յայլ կրօնս, և ոչ այսչափ միայն, այլև յետ մահուն Վահանայ կաթողիկոսի ոմանք ի տգիտաց և յանոպայից յարուցին ի վրա նորա հալածանս, և գնացեալ ամբաստան եղեն ի գաւառն Շիրակայ ի թագավորական քաղաքն յԱնի. և արկին աղմուկ և շշուկ յամայն Հայոց, մինչև հարկ եղև ժողով լինել քանի մի վարդապետաց ի իշխանաց անդ ի յԱնի, զի տեղեկացեալ մտաց և բանից սրբոյն, եթէ գտցեն զնա հերձեալ յուղիղ հաւատոյ՝ պատուհասիվք արքութեցեն...»¹: Չարմացնում և հիացնում է Չամչանն իր նրբագիտությամբ, նրբազգացությամբ, ավաղ, մինչ օրս անհայտ է մնում, թէ ինչ աղբյուրների հիման վրա է նա պնդում, որ դատը գումարվել է Անիում, 987 թվականին (լուսանցքում է նա նշում հայոց ՆԼԶ թվականը): Թերևս հենց դա է եղել պատճառը, որ բանասիրության մեջ Մ. Չամչանի հաղորդած այդ կոնկրետ տեղեկություններն ըստ արժանվույն չեն գնահատվել և, փաստորեն, լռության են մատնված մինչև օրս²: Մինչդեռ, եթէ Չամչանի այդ շատ

¹ Մ. Չամչանց. Պատմութիւն, հ. Բ. էջ 852:

² Բացառությամբ 19-րդ դարի վերջերի բանասեր Բարսեղ Սարգսյանի «Ուսումնասիրութիւն Մանիքեա-Պուղիկեան թոնդրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացվոյ թուղթը» աշխատության:

կարևոր տեղեկությունները համադրենք 10-րդ դարի 80-ական թվականների կեսերի պատմական իրադարձություններին, կտեսնենք, որ հայագիտության մեծ երախտավորի հաղորդումը բոլորովին էլ անհիմն չէ, ընդհակառակը՝ շատ արժանահավատ ու վստահելի է:

Բյուզանդիան միշտ էլ իր նվաճողական քաղաքականությունը մատուցում էր որպես արդարացի պայքար հանուն «ուղիղ հավատի»: 10-րդ դարում էլ բյուզանդական կայսրերն իրենց հայահալած քաղաքականությունը վարում էին՝ օգտագործելով դավանական տարաձայնությունները: Այսպես, 10-րդ դարի 30-40-ական թվականներին, Ռոմանոս կայսրի հալածանքներից հետո, հայքաղկեդոնական հարաբերությունները համեմատաբար խաղաղվեցին: Սակայն 986 թվականին հայ միաբնակների նկատմամբ բռնությունների նոր ալիք բարձրացավ: Այդ մասին հետաքրքիր մանրամասներ է հաղորդում 10-րդ դարի հայ նշանավոր պատմիչ Ասողիկը. «Եւ կանացի հովիւքն և մետրապօլիտն Սեբաստիոյ սկսան նեղել զագգն հայոց վասն հաւատոյ. և զբռնութիւն ի ձեռն առեալ՝ սկսաւ տանջել զքահանայս վասն հավատոյ, և զգլխաւոր քահանայս Սեբաստիոյ քաղաքին երկաթեղեն կապանօք հասուցանէր ի դուռն թագաւորին: Եւ ի բանտի չարչարեալ զաւագն երիցանցն զԳաբրիէլ սպանին, զի էր այր ծեր և իմաստիւք լի և քաջապինդ ի հաւատս աստուածեղենս: Այս եղևի ի ՆԼԵ թուականին: Իսկ այլք յաննշան քահանայիցն և երկու եպիսկոպոսունք Սեբաստիոյ և Լառիսոյ, Սիօն և Յովհաննես, ի ձեռն նոյն մետրապօլիտին ընկալան զժողովն Քաղկեդոնի, ի բաց կալով ի միաւորութենն Հայոց եւ յայնմհետև արգելին զյամաձայն Հայոց ի քաղաքէն Սեբաստիոյ, մինչև ցգալ թագաւորին Վասլի յաշխարհն արևելից, զոր յիւրում տեղուջն ասասցուք: Եւ ապա մետրապօլիտն այն և այլ մետրապօլիտք սկսան թուղթս մեծամեծս գրել առ Տեր Խաչիկ՝ Հայոց

կաթողիկոս: Որոնց ընդդեմ պատասխանեալ քաջակորով իմաստիւք յառաջ ասացեալ վարդապետքն...»¹: XI դարի պատմիչ Մատթեոս Ուռհայեցին այդ կապակցությամբ գրում է. «Հոռոմոց պատրիարք Թեոդորոսը, որ նստում է Մելիտենէ մայրաքաղաքում, խորամիտ և սուրբ գրոց գիտակ մի մարդ, սրան (Խաչիկ կաթողիկոսին-Ս.Պ.) նամակ գրեց. Հայոց Սամվել վարդապետը նրան վայելուչ և սիրալիր պատասխան ուղարկեց: Նրա նամակը բոլոր ուկնդիրներին դուր եկավ. այդ պատճառով էլ (Սամվելը) հոռոմոց Թեոդորոս պատրիարքի և Հայոց Խաչիկ կաթողիկոսի առավել մեծ հարգանքին արժանացավ»²: Այս տեղեկություններից պետք է ենթադրել, որ Անիում կամ Արգինայում, ուր այդ ժամանակ նստում էր Խաչիկ Արշարունի կաթողիկոսը, 987 թվականին գումարվել է եկեղեցական մի ժողով՝ վերոհիշյալ դեպքերի հետ կապված հարցերը քննարկելու, հայ եկեղեցու ամրության կարիքները հոգալու համար: Ուռհայեցու՝ «նրա նամակը բոլոր ուկնդիրներին դուր եկավ» արտահայտությունից պետք է եզրակացնել, որ բյուզանդական եպիսկոպոսին Սամվել Կամրջաձորեցու գրած պատասխան նամակը ևս քննարկվել է այդ ժողովում և ժողովակաների հավանությանն արժանացել: Շատ հավանական է թվում, որ դա հենց այն ժողովն է, որին, հավատաքննության նպատակով, կանչվել է իբրև «ծայթ» մեղադրվող Գրիգոր Նարեկացին: Նարեկացու հակառակորդները Խաչիկ Արշարունի կաթողիկոսի մոտ նրան վատաբանելու համար ժամանակ էին ընտրել: Հակաքաղկեդոնական կրքերի բորբոքման այդ շրջանում աննշան կասկածը բավական էր եկեղեցու անողորմ դատի առաջ կանգնելու համար:

¹ Ստեփանոս Տարոնցի Ասողիկ, Պատուօրին տիեզերական, Պետերբուրգ, 1985, էջ 201:

² Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Եր., 1973, էջ 25-26:

Ընդունելով, որ դատի հավաքվելու փաստը պատմական իրողություն է, անցնենք այն հարցին, թե Նարեկացին դատին նեկայացե՞լ է, թե՞ ոչ:

Այս հարցը պարզելու համար բոլոր դեպքերում պետք է հաշվի առնել 10-րդ դարի երկրորդ կեսի գաղափարական պայքարի բնույթը և Նարեկացու տեղը այդ պայքարում: Թեև հանդգնություն է, բայց ուսումնասիրողը մի պահ իրեն պիտի դնի Գրիգորի տեղը, մտնի նրա վիճակի մեջ: Բարձրագույն ատյանին չներկայանալը կնշանակեր հաստատել իր հասցեին բոլոր մեղադրանքները: Եվ դրա հետևանքը կլիներ այն, որ Նարեկացին կենթարկվեր հալածանքի, կբանադրվեր ու կաքստրվեր իբրև հերձվածող: Եվ, եթե ոչ նրա կեղանության օրոք, ապա նրա մահից հետո հաստատ կոչնչացվեին նրա կյանքի իմաստը կազմող ստեղծագործությունները: Մարդկությունն այսօր չէր ունենա «Մատյան ողբերգության» անմահ կոթողը, որի ստեղծագործական հիմքերը մեծ բանաստեղծն այն ժամանակ արդեն դրել էր: Հետևանքը կլիներ այն, որ Նարեկացին կհեռացվեր հայ եկեղեցուց և, ընդհանրապես, հայ հասարակական-քաղաքական ասպարեզից դուրս կգար. մի բան, որ բոլորովին չէր մտնում մեծ բանաստեղծի ստեղծագործական և գործնական ծրագրերի մեջ: Նարեկացին, ինչպես զարմանալիորեն ճիշտ կերպով նշված է Հայամավորքում, երբեք չի ձգտել անջատվել հայ եկեղեցուց և միանալ քաղկեդոնականներին: Նա իր առջև մեծ խնդիր էր դրել՝ ամրապնդել հայ եկեղեցու խախուտ դարձած հիմքերը ու մեղմացնել հայ-քաղկեդոնական հարաբերությունները: Այդ ուղղությամբ նա շատ անելիքներ ուներ: Այնպես որ նա ուրիշ էլք չուներ: Այդ քայլին մեծ մտածողը դիմում է հարկադրված, գիտենալով, որ այլ կերպ վարվելն անիմաստ է: Իսկ փորձել մեկ անգամ ևս համոզել եկեղեցու առաջնորդներին էական բարեփոխումներ անցկացնելու էական

անհրաժեշտությունը, մանկամտություն էր, քանզի Վահան Սյունեցին իր կաթողիկոսության շրջանում չկարողացավ հասնել այդ բանին:

Նարեկացին, հավանաբար, իսկապես ներկայացել է իրեն դատելու համար գումարված ժողովին, մեղադրվել է, հանդիմանվել, սակայն կարողացել է արդարանալ: Որքան էլ զարմանալի թվա, բայց այն հանգամանքը, որ Հայսմավուրքը ժխտում է դատին Նարեկացու ներկայանալը, հենց վկայում է այն մասին, որ նա իսկապես գնացել է դատին մասնակցելու: Ընդունելով դատ գումարվելու փաստը, ցավոք, անվանի պատմաբան Մ. Չամչյանը ևս կրկնում է հրաշագործությամբ դատից Նարեկացու խույս տալու մասին Հայսմավուրքի լեզենդը:

Ինչպե՞ս է արդարացել Գր. Նարեկացին

Հասկանալի է, որ Գր. Նարեկացին դատարկ ձեռքով դատին չպիտի ներկայանար: Նա պետք է որ իր հետ տաներ իր «ուղղադավանությունը» հավաստող մի գրվածք: Միջնադարում դա ընդունված կարգ էր, հերքել իր հասցեին արված մեղադրանքները, ապացուցել իր անմեղությունը կամ, եթե ականա տարվել է որոշ անթույլատրելի գաղափարներով, պիտի մեղայական գրով խոստովաներ այդ և կրկին հաստատվեր ուղիղ հավատին, ճիշտ այնպես, ինչպես Անանիա Նարեկացին է ստիպված եղել մահամերձ վիճակում գրել իր «Խոստովանության գիրը»:

Այս ենթադրությունը, որ Նարեկացին դատին ներկայացել և արդարացել է իր ուղղահավատությունը հիմնավորող երկով, դեռ 19-րդ դարի վերջերին հայտնել է բանասեր Բ. Մարգարյանը: Նարեկացին Կճավա ուխտի առաջնորդին ուղղված հայտնի նամակը գրել է դատի կապակցությամբ. «Գրիգոր Նարեկացին իսկ՝ որուն սրբութեան հոտը ինն դարուց հետե իբրև խունկ անուշ կը զմայլեցնէ զմեզ, և ամէն հայի սիրտ անուշութեամբ կը լեցնէ, չազատեցավ անոնց

ամբաստանութենէն, բայց եթե գրելով ինքն իր ջատագովական թուղթը,–թեպետ և ազգային պատմագիրներ՝ խորովեալ աղանձներու հրաշքով կենդանանալուն և թոչելուն կընծայեն զայն»¹:

Իր բովանդակությամբ, հակաթոնդրակյան և հակաքաղկեդոնական ուղղվածությամբ՝ Կճավա ուխտի առաջնորդին հասցեագրված նամակը Նարեկացու ձեռքին, իսկապես, հոյակապ միջոց էր հարձակումներից ու մեղադրանքներից պաշտպանվելու համար: Այդ նամակի պահպանվելու փաստն իսկ շատ հետաքրքիր է և խոսուն: Քիչ հավանական է, որ կճավցիները պահպանեին այդ մեղադրական «թուղթը», մինչդեռ այն հասել է մեզ: Ավելին, ժամանակին այն ընդգրկվել է հայ եկեղեցու «Գիրք թղթոց» պաշտոնական ժողովածուում: Այդ փաստը, որ կճավցիների դեմ գրած նամակը տեղ է գտել նման հեղինակավոր ժողովածուում, արդյոք չի՞ վկայում այն մասին, որ այդ նամակի պատճենը (կրկնում ենք, նամակը դժվար թե պահպանվեր) ինչ-որ կերպ հայտնվել է կաթողիկոսարանում, ուր և մտցվել է «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ: Մի թե անհավանական է, որ հենց հեղինակը՝ Գրիգորը, այդ թղթի պատճենը տարած լիներ կաթողիկոսին:

Ի՞նչն է մեզ մղում այդ մտքին: Ամենից առաջ թուղթը գրելու բուն պատճառը: Բ. Սարգսյանն այդ առիթով հետաքրքիր դիտողություններ ունի իր «Ուսումնասիրութիւն Մանիքեա-Պաղիկեան թոնրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացոյ թուղթը» աշխատության մեջ: Նարեկացու «թուղթը» գրելու իրական դրդապատճառի մասին Բ. Սարգսյանը գրում է. «Դիտելու ենք, որ

¹ Սարգսյան, «Ուսումնասիրութիւն Մանիքեա-Պաղիկեան թոնրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացոյ թուղթը»: Վենետիկ, 1893, էջ 74:

յամի Տեան 987 ժամանակամիջոցը կը յիշեցնէ մեզ, յորում կեղծաւոր Թոնդրակեցոց աղանդին պատճառաւ և աղանդաւորաց մեջ՝ սրբասունքն անգամ ի Հարս վանորէից ամբաստանուեցան իբրև անոնց համախոհներ: Ասոնց մեջ էր և սուրբն Գրիգոր, գոր թշնամիք ծայթ կանուանէին, այն է ուրացեալ ի հաւատոց: Այս բանս քննելու համար նշանաւոր վարդապետաց և իշխանաց ժողով մ՝ եղավ ի թագաւորանիստն Անի, ուր և Գրիգոր արդարացավ: Բայց որովհետև ամենուն ծանօթ չէր իր անմեղութիւնն, անոր համար ստիպեցաւ ասոր անոր թուղթեր ալ գրել, թէն այս թուղթս անձնական ջատագովութիւնն չերկիր»¹: «Թղթի» հորինումը Բ. Սարգսյանը կապում էր Նարեկացուն դատելու համար գումարված ժողովի հետ, ըստ նրա (համենայն դեպս ինքն այդ է ակնարկում) Նարեկացին «Թուղթը» գրել է ոչ նրա համար, որ, իբր, խիստ անհանգստացած էր Կճավի վանականների՝ թոնդրակեցիներին համակրելու կամ հարելու հանգամանքով: Նարեկացին իր այդ նամակը գրելիս այլ նպատակ է հետապնդել. ստեղծել գրավոր մի այնպիսի փաստաթուղթ, որը պետք է եկած ժամանակ դիտվեր, օգտագործվեր որպէս հեղինակի ուղղադավանության կամ անմեղության ապացույց: (Որ «թուղթը» գրելու իրական նպատակը այդ է եղել, երևում է նրանից, որ կճավցիներին թողնրակեցության մեջ մեղադրում է մեկը, որն ինքը մեղադրվել է այդ նույն բանում):

Ուշագրավ է, որ, ըստ Բ. Սարգսյանի, Նարեկացին իր անմեղությունն ապացուցելու տարօրինակ եղանակ է ընտրել. փոխանակ «Թղթի» մեջ խոսելու և հիմնավորելու իր ուղղադավանությունը, «Ճշմարիտ հավատին» իր

¹ Սարգսյան, «Ուսումնասիրութիւն Մանիքեա-Պաղիկեան թոնդրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացոյ թուղթը», Վենետիկ, 1893, էջ 106-107:

հավատարմությունը», նա անցնում է հարձակման, կճավցիներին մեղադրելով թոնդրակեցության մեջ և շարադրելով այդ շարժման գաղափարախոսության անգամ մանրամասները, անիծում և հայհոյում է դրան հետևողներին:

Ըստ երևույթին, Կճավի ուխտը, որպես թիրախ, պատահականորեն չի ընտրված Գր. Նարեկացու կողմից: Բ. Սարգսյանը Նարեկացու «Թղթի» «...յոր գիրս հրամայէ նգովել գոք, և զերջանիկ տեառն մերոյ Անանիայի զգարմանագիծ հակաճառութիւն նամակին, զրաբանականս ասել», - խոսքերի կապակցությամբ նկատում է, «Գրիգորի այս խօսքերէն կերևի, թէ Կճաւայ վանահայրը, բանի կամ գրով դէմ խօսած էր Անանիայ Նարեկացոյն և մեկ կողմէն համարձակութիւն տուած էր թոնդրակեցոց, միւս կողմէն ալ գայթակղեցուցած էր ողջամիտներէն զոմանս: Այս բանէս, այսինքն է Կճաւայ վանահօր՝ Անանիայ Նարեկացոյ դէմ ցուցուցած հակառակութենէն,- եթէ ստոյգ է,- կարելի է հետևեցնել, թէ կամ Ժ Դարուն Կճաւայ և Նարեկայ վանքերն իրարու նախանձ ընդդէմ դիրքի մեջ էին, և կամ այն վանահայրն ստուգիւ իր միաբանութեան մեջ ևս տարածել կուզէր Թոնդրակեան աղանդը»¹: Այս երկու վանքերի հակառակության փաստը անկասկած է: Շատ հնարավոր է, որ կճավցիները Անանիա Նարեկացուն մեղադրած լինէին թոնդրակեցիների դէմ ուղղված իր հայտնի գրվածքում ոչ բավարար անկեղծ լինելու մեջ, ինչը և առիթ տար կաթողիկոսին՝ ստիպելու, պարտադրելու մահամերձ Անանիա Նարեկացուն գրել իր «Խոստովանության գիրը»: Ավելին, հնարավոր է, որ Անանիա Նարեկացու մահից հետո կճավցիների հարձակումների ու բամբասանքի սլաքը ուղղված լինէր Գրիգոր Նարեկացու դէմ: Գուցե

¹ Բ. Սարգսյան, «Ուսումնասիրություն», էջ 108:

հենց կճավցիներն են Խաչիկ Ա կաթողիկոսի մոտ վատաբանել մեծ քանաստեղծին:

Անհաշտ գաղափարախոսական պայքարի, հետապնդումների և հալածանքների պայմաններում ստիպված պիտի հակառակորդի դեմ կիրառես նրա իսկ զենքը: Օգտագործելով այն առիթը, որ Կճավում միառժամանակ հանգրվանել է ոմն Մուշեղ, որը երևի թոնդրակյան որոշ գաղափարներ է քարոզել, Նարեկացին կճավցիներին ուղղված իր «Թուղթ» այն ձևով է գրում, թե իբր ինքը խիստ անհանգստացած է, որ Կճավում ընդունել են Մուշեղին և համակրում են նրան: Գուցե կճավցիները բոլորովին էլ թոնդրակեցի չեն եղել. Նարեկացին ուղղակի վրեժխնդիր է եղել: Իսկ եթե կճավցիները կարողանային արդարանալ, ապացուցել իրենց անմեղությունը, այդ դեպքում Նարեկացին կարդարանար նրանով, թե իբր իրեն այդ լուրը հասել է, և ինքը պարզապես կասկածել է ու դրա համար էլ թղթում ուղղակի առաջարկել է Կճավա վանահորը՝ ևս անիծել թոնդրակեցիներին և գրավոր հանդես գալ նրանց դեմ: Այդպիսով հարցը կփակվեր. և՛ գայլերը կուշտ կլինեին, և՛ գառները՝ ողջ:

Նարեկացու այդ նամակը տարբեր կերպ է գնահատվել հայագիտության մեջ: Հետազոտողներից ոմանք այն նույնիսկ Նարեկացու ծայրահեղ հետադիմական լինելու ապացույց են համարել (Լեո, Ա. Հովհաննիսյան): Այդ կարծիքի կողմնակիցները հաշվի չեն առել «Թուղթ» գրելու կոնկրետ պատմական պայմաններն ու հանգամանքները, իրական դրդապատճառները:

Նարեկացին թոնդրակեցի չէր, նա դեմ էր այդ շարժման «ծայրահեղ» դրսևորումներին, բայց, միևնույն ժամանակ, նա այդ շարժման շատ գաղափարների խոր ազդեցությունն է կրել: Նրա «Մատյանը», թերևս, այդ գաղափարների հայելին է: Նարեկացին «չափավոր» ռեֆորմիստ էր, դրանով է պայմանավորված նրա առանձնահատուկ դիրքորոշումը մի կողմից՝ թոնդրակեցիների

(ամենահեղափոխական շարժման) և մյուս կողմից՝ պահպանողականների նկատմամբ: Մակայն, ընդհանուր առմամբ, չմոռանանք, որ Նարեկացին հայկական Ռեֆորմացիայի խոշոր գործիչն ու գաղափարախոսն էր: Այնպես որ, նա, թեև ամբողջությամբ չի հանգում, բայց, այնուամենայնիվ, ավելի մոտ է կանգնած թոնդրակեցիներին, քան թե պահպանողականներին: Որպես ճշմարիտ արվեստագետ՝ Նարեկացին հայկական Ռենեսանսի իսկական «հայելին» է:

Եթե համեմատությունների մեջ հեռու գնանք, ապա պետք է ասենք, որ Նարեկացին հայ իրականության Մարտին Լյութերն էր: Քրիստոնեության ազգայնացման ճանապարհին Լյութերի ստեղծագործական մեծ սխրանքը ս. Գրքի գերմաներեն թարգմանությունն էր, իսկ հայ իրականության մեջ նույնաբնույթ ստեղծագործական մեծ սխրանքը՝ Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի ստեղծումը:

Գր. Նարեկացու՝ կճավցիների դեմ գրած նամակը հեղինակի անմեղության մի տեսակ «գործնական» ապացույցն էր. այն կարող էր վկայել, որ հեղինակը ժամանակին հանդես է եկել աղանդավորների դեմ, բայց այդ թղթում հեղինակն ավելի շուտ հարձակվում է, քան պաշտպանվում: Բ. Մարգարյանը ճիշտ է նկատել, որ այդ թղթում հեղինակը չի շարադրում, ինչպես ընդունված էր միջնադարում, իր հավատամքը, որից ժողովականները տեղեկանային՝ նա շեղվել է հավատի հիմունքներից, թե՞ ոչ: Այսինքն՝ Նարեկացին անհրաժեշտաբար իր հետ դատի տարած պիտի լիներ այդ թղթից բացի նաև մի այլ գրվածք, իր ուղղադավանությունը վկայող տեսական մի ապացույց, որի մեջ շարադրած լիներ իր հավատի հիմունքները:

Մեր կարծիքով, այդպիսի աշխատություն կարող էր լինել Նարեկացու «Մատյանի» վիճելի գլուխների ամբողջությունը, որը,

օգտվելով հեղինակի իր իսկ ասածից, պայմանականորեն անվանենք «Հաւատոյ սահմանք»: Գր. Նարեկացու «Մատյանի» խիստ կրոնադավանաբանական բովանդակություն ունեցող, հռետորական ոճով գրված ԼԴ, ՀԵ, ՂԲ, ՂԳ գլուխները նախապես մի ամբողջական երկ են կազմել, որի մեջ Նարեկացին շարադրել է հայ եկեղեցու դավանանքի հիմունքները՝ իր խիստ բացասական վերաբերմունքը ցուցադրելով այդ հիմունքներից՝ ժամանակակից գրեթե բոլոր շեղումների նկատմամբ:

Այդ գլուխները փաստորեն ուղղված էին ոչ միայն թոնդրակեցիների դեմ, այլև՝ երկաբնակների: Դա երևում է նրանից, որ Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» ժողովածուում, երկաբնակների դեմ ուղղված՝ հեղինակավոր վարդապետներից կատարված մեջբերումներից մեկը Նարեկացու «Մատյանի» վիճելի ԼԴ գլխից է հենց. «Իսկակիցն Հոր) աննուազ գոլով, ընդ անփառացն հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի՝ Աստուածածին Կուսին մաքրութեան, յորում աճեցոյց զբոյսն արհնութեան ի լուսասահման անդաստանին անարատութեան...»:

Այդ գլուխները գիտության մեջ բուռն վեճերի առիթ են տվել: Վիճելի է եղել դրանց հեղինակության հարցը, սկզբից նեթ «Մատյանում» դրանց լինել-չլինելու հարցը, դրանց միտումնայնության հարցը և այլն¹: Իր մենագրության մեջ մանրամասն քննարկելով այդ հարցերը՝ Մ. Մկրյանը հանգել է այն եզրակացության, «որ Նարեկացին ՂԲ և ՂԳ ոչ բանաստեղծական գլուխները, ինչպես և ՀԵ ու մի քանի այլ գլուխների վերջին հատվածները կամ բոլորովին ինքը չի գրել, կամ եթե երբևէ ինքն է գրել, ապա դրանք հորինել է անկախ իր պոեմից, այլ նպատակներով, որոնք սակայն, հետագայում գրիչների կողմից ինչ-ինչ

¹ Մ. Մկրյան, «Գրիգոր Նարեկացի»: Եր., 1955, էջ 174-177:

նկատառումներով խառնվել են բուն պոեմի տեքստին»: Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի վերջերս կատարած ձեռագրագիտական արժեքավոր հետազոտությունը հիմք է տալիս այսօր կասկածներից վստահորեն անցնելու այն համոզման, որ այդ գլուխների հեղինակը Գրիգորն է և ոչ թե մեկ ուրիշը, որ դրանք հենց սկզբից եղել են «Մատյանի» մեջ¹: Այս կապակցությամբ ձեռագրագետները գրում են. «Նարեկացի²ն է արդյոք այդ գլուխների հեղինակը, թե՞ ուրիշը: Կարո՞ղ էր արդյոք դրանք գրած լինել նրա Հովհաննես եղբայրը: Ձեռագրերը ոչ մի հիմք չեն տալիս դրանք ուրիշին վերագրելու: Այդ գլուխների հեղինակը Նարեկացին է: Եղբոր գործակցության մասին բանաստեղծի հիշատակությունը, կարծում ենք, վերաբերում է ոչ թե Հովհաննեսի ստեղծագործական, այլ գրչական կամ խմբագրական բնույթի օգնությանը: Նարեկացին ոչ մի ակնարկ չունի այդ գլուխներից որևէ մեկն ինքը գրած չլինելու մասին»²:

Այդ վիճելի գլուխների հենց սկզբից «Մատյանում» լինելն ընդունելով որպես ճշմարտություն, ստեղծվում է որոշ հակասական իրավիճակ. եթե Նարեկացին է դրանց հեղինակը, ապա ինչո՞ւ դրանք ոչ միայն ոճով, այլև «իրենց բովանդակության բնույթով» են տարբերվում մյուս գլուխներից (այդ տարբերության վրա ստորև առանձին կանգ կառնենք): Այդ հակասությունը Մ. Խերանյանը, Վ. Գևորգյանը լուծել են նրանով, որ Նարեկացուն չէին համարում այդ գլուխների հեղինակը. «Պոեմի ՀԵ, ՂԲ և ՂԳ գլուխներն ամբողջությամբ, ինչպես և առանձին ենթամասեր՝ ԼԳ, ԼԴ և ԼԶ

¹ Գրիգոր Նարեկացի, Մատենանոց տպարան, Աշխատասիրությամբ Պ.Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, ծանոթագրություններ, էջ 973-1122:

² Գրիգոր Նարեկացի «Մատենանոց տպարան», Եր., 1985, էջ 1112:

գլուխներում ունեն գուտ դավանաբանական և կրոնափիլիսոփայական բնույթ ու բովանդակություն, որոնք իրենց ոճով և ոգով անհարիր լինելով ընդհանուր պոեմի հետ,- գրում է Մ. Խերանյանը,-մեր կարծիքով, հազիվ թե հանճարեղ հեղինակի գրչին պատկանեն»¹: Բայց ձեռագրագիտական ուսումնասիրություններն այսօր հիմք չեն տալիս կասկածելու, որ այդ գլուխների հեղինակը Նարեկացին է:

Պ. Խաչատրյանը և Ա. Ղազինյանը այդ հակասությունը փորձում են հիմնականում լուծել հետևյալ կերպ. այն փաստը, որ ՂԲ և ՂԳ գլուխները, ինչպես նաև ԼԳ, ԼԴ և ՀԵ գլուխների մի քանի հատվածներ ունեն կրոնադավանաբանական բովանդակություն, ուրույն վերնագրեր ու ենթախորագրեր և խախտում են Մատյանի քնարական-հուզական ընդհանուր տրամադրությունը, չեն կարող հիմնավոր կովան հանդիսանալ այդ գլուխները Մատյանի կազմից հանելու, ավելին՝ դրանք Նարեկացունը չհամարելու համար: Այդ գլուխներն ամբողջացնում են Նարեկացու աշխարհայեցողությունը՝ արտահայտելով նրա կրոնական մտածողությունը, դարաշրջանի աշխարհընկալման սահմանափակությունն ու աստվածաբանական սխալաստիկայի և եկեղեցու գաղափարախոսության ուժեղ ազդեցությունը²: Ինչպես տեսնում ենք, նրանք հակասությունը լուծում են նրանով, որ վիճելի գլուխները մյուս գլուխներին լրացնող, դրանց բովանդակությունը կոնկրետացնող են համարում («Նարեկացին ընդարձակում, մանրամասնում է Նիկիայի տիեզերական ժողովի 325թ. ընդունած հավատո հանգանակը» այդ գլուխներում), այսինքն՝ իբրև Նարեկացու գաղափարական

¹ Գր. Նարեկացի, «Մատյան ողբեգության», գրաբարից թարգմանեց Սկրտիչ Խերանյան, Եր., 1960, էջ XXXIV:

² Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 186:

համոզմունքի արտահայտություն են դիտվում այդ վիճելի գլուխները: Այդ է հաստատում հետևյալ մեջբերումը. «Այստեղ (ՀԵ գլխում) որոշակի էր Նարեկացու դիրքորոշումը՝ հանուն եկեղեցու խորհրդի, ընդդեմ այն անարգողներին: Արհամարհել եկեղեցու կարգը, խորհուրդը, ըստ Նարեկացու, նույնն է, ինչ մեկը ձեռք բարձրացնել Աստծո դեմ՝ «ձեռն չարութեան ի վերինն արքայութիւն յանդգնաբար յամբառնայցե» (բան ՀԵ)¹: Ըստ էության, Խաչատրյանը և Ղազինյանը հարցի լուծումը այսպես են պատկերացնում. ապացուցելով, որ այդ գլուխների հեղինակը Նարեկացին է, պետք է ընդունել, որ դրանց բովանդակությունը Նարեկացուն անհարազատ չէ, ընդհակառակը, կազմում է նրա գաղափարական համոզմունքը, հետևապես. այդ գլուխների հորինումը նախապես մտնում էր Նարեկացու պոեմը գրելու ընդհանուր գաղափարա-գեղարվեստական մտահղացման մեջ և ոչ թե այդ գլուխները հորինվել են «անկախ իր պոեմից, այլ նպատակներով»: Նման մոտեցումը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ վիճելի գլուխները պոեմի մյուս քնարական գլուխներից տարբերվում են ոչ միայն ռճով, այլև բովանդակության բնույթով, նույնիսկ կրոնա-դավանաբանական հարցերի կտրվածքով, ավելին. դրանք գրված են 10-րդ դարի երկրորդ կեսի գաղափարախոսական պայքարի տարբեր դիրքերից, բայց մինևույն մարդու կողմից: Ճիշտ է Մ. Մկրյանը, որ հնարավոր է համարում, թե Նարեկացին վիճելի գլուխները «հորինել է անկախ իր պոեմից, այլ նպատակներով...»: Անվանի բանասերը խորքից է կռահել դրանք հորինելու դրդապատճառները. «...Եթե նույնիսկ հավանական համարենք, որ այդ գլուխները (սրանք գերազանցապես վերաբերում են Նիկիական հավատո հանգանակին) կարող էր և գրած լինել թոնդրակեցիության մեջ մեղադրված ու դրա համար հետապնդված

¹ Նույն տեղը, էջ 153:

Նարեկացին, բայց, միննույնն է, բոլորովին անհնար է պատկերացնել, որ նրա նման հանճարեղ բանաստեղծն իր պոեմի նպատակասլաց կառուցվածքը երկու-երեք անգամ խախտեր դավանաբանական պրոզայիկ «միջարկումներով»¹: Բայց ինչո՞ւ չէ, մի՞թե քիչ հավանական է, որ մեծ բանաստեղծն ինչ նպատակով որ գրել է այդ գլուխները (մեղադրանքներից իրեն ապահովագրելու համար), այդ նույն նկատառումներով էլ հարկադրված է եղել ընդգրկել դրանք իր պոեմի կազմում՝ ապահովելու պոեմի հետագա գոյատևումը...

* * *

Նարեկացու Մատյանի կրոնա-դավանաբանական բովանդակություն ունեցող ԼԳ, ՀԵ, ՂԲ և ՂԳ գլուխներից ՀԵ գլուխն առանցքային նշանակություն ունի, այն իր շուրջն է միավորում մնացած գլուխները: Այդ առանցքային գլուխը ս. Երրորդության դավանանքին վերաբերող դ-գ մասերով հարասում է ԼԴ գլխին, իսկ նյութական եկեղեցու խորհրդի առանձնահատուկ մեկնությանը վերաբերող հատվածներում այդ գլուխը կապվում է ՂԲ, ՂԳ գլուխներին: Այդպիսով այդ վիճելի գլուխները մի ամբողջություն են կազմում: Այն, որ մինչև Մատյանի մեջ տարբալուծվելը դրանք մի առանձին երկ են կազմել, որ Նարեկացին դրանք գրել է Մատյանից անկախ, այլ նպատակով, երևում է նրանից, որ դրանք կազմում են մի ընդհանուր մտահղացմամբ գրվածք՝ հայ եկեղեցու դավանաբանությանը վերաբերող ամբողջական մի աշխատություն: Ո՞րն է այդ գաղափարական մտահղացումը, որ վիճելի գլուխները միավորում է մի ամբողջության մեջ: Նարեկացին անտարակույս տեղյակ էր, թե իրեն կոնկրետ ինչ հարցերում են մեղադրում. այդ հարցերից առաջինը ս. Երրորդության խորհրդի և դրան խիստ

¹ Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, էջ 175:

առնչվող Քրիստոսի բնույթի հարցն է: Նարեկացին մեղադրվել է որպես երկաբնականների համախոհ, իսկ երկաբնականներին հայ միաբանները անվանում էին մարդադավան (նեստորականներ), ինչը նշանակում էր Որդի Աստծուն Հայր Աստծուց ստորադաս համարել, չընդունել Երրորդության միաբնույթ և համագոյ լինելը: Երկրորդ հարցը եկեղեցու դերը նսեմացնելու, այն արհամարհելու մեջ է (մի բան, որ բխում էր Նարեկացու միստիցիզմից և նրա Մատյանի կարևոր արժանիքներից մեկն է) և երրորդ՝ եկեղեցու սիմվոլիկան արհամարհելու, քամահրելու փորձի մեջ: Վիճելի գլուխներում Նարեկացին հենց ձգտում է հերքել իր հասցեին արվող այդ մեղադրանքները կետ առ կետ և արդարանալ, հավաստել իր հավատարմությունը հայ պաշտոնական եկեղեցու դավանանքին: Իրականում այս է եղել այդ գլուխները գրելու ընդհանուր մտահղացումը, նպատակը:

* * *

ա) Վիճելի գլուխների և Մատյանի մյուս՝ լիրիկական գլուխների համեմատական քննությունից պարզ երևում է, որ դրանք տարբեր են ոչ միայն լեզվառճական առանձնահատկություններով, այլև բնույթով, բովանդակությամբ կամ, ինչպես Մկրյանն է ավելի խորը նկատում՝ «բովանդակության բնույթով»: Ակնհայտ է, որ վիճելի գլուխները կրոնա-դավանաբանական են, բայց թեև նման բնույթի խնդիրներ շոշափվում են Մատյանի գրեթե բոլոր գլուխներում, այնուամենայնիվ, առաջին իսկ հայացքից աչքի է ընկնում դրանց տարբերությունը. քնարական գլուխներում շոշափված դավանաբանական բնույթի հարցերը, շնորհիվ բանաստեղծական խոսքի բազմամեկնելիության, բազմանշանակության, տրված են իրենց լուծումների բազմազանության, երբեմն՝ տրամաբանորեն հակադիր մեկնությունների մեջ, մի բան, որ հետևանք է հեղինակի

ստեղծագործական անկաշկանդության, ազատախոհության, իսկ մյուս կողմից՝ կույր հավատի, եկեղեցու դոգմատիկայի դեմ անհնազանդության, ինչը և ընթերցողին մղում է բարձրացվող հարցերի շուրջն ազատ մտածելու: Ի տարբերություն դրա, վիճելի գլուխները տառապում են միակողմանիությամբ, տաղտկությամբ: Այս տեսակետից ԼԴ գլխի գ, դ, ե, զ, է հատվածներն ավելի մոտ են քնարական գլուխներին: Պետք է ենթադրել, որ Նարեկացին դրանք հորինել է «Հաւատոյ սահմանքը» Մատյանի մեջ տարրալուծելիս: Այս կարծիքին է հանգեցնում այն հանգամանքը, որ ԼԴ գլխի այդ մասերը և ՀԵ գլխի դ, ե, զ հատվածները, թեև նույն թեմայի շուրջ են գրված, բայց զգալիորեն իրարից տարբեր են. ԼԴ գլխի այդ հատվածներն ավելի հարուստ բովանդակություն ունեն, բազմամեկնելի են, քան ՀԵ գլխի հիշյալ հատվածները: Եվ, հետո, միևնույն հարցի (ս. Երրորդության խորհրդի) շուրջը երկու շարադրանք դժվար թե միևնույն երկի՝ «Հաւատոյ սահմանքի» մեջ լիներ: Դրա համար էլ մտածելի է, որ «Հաւատոյ սահմանքի» մեջ եղել են ՀԵ գլխի նշված հատվածները (որոնք ավելի մոտ են եկեղեցու դոգմատիկային, և որոնց մեջ հեղինակի ինքնուրույն մտքերը, դատողություններն ավելի քիչ են), որոնց անմիջապես հաջորդել են ԼԴ գլխի ը, թ հատվածները...

բ) Քնարական գլուխներում բարձրացնելով Աստծուն, մարդու փրկության հույսը անմիջականորեն Աստծո հետ կապելով, Նարեկացին իսկապես արհամարհում է եկեղեցին ու նրա ատրիբուտները: Ավելին, անգամ Երրորդության դեմքերի մեջ խտրություն է դնում՝ ավելի շատ շեշտելով, բարձրացնելով Որդի Աստծուն... և ամենազարմանալին այն է, որ նույնիսկ Աստվածությունն է երբեմն նսեմացվում, իսկ վիճելի գլուխներում՝ ընդհակառակը. Նարեկացին չի շեղվում, խիստ հետևում է, հարազատ է մնում կրոնական դոգմատիկայի պահանջներին՝

դրսևորելով ս. Գրքի խորագիտակություն և, ամենակարևորն է, հասկապես շեշտվում է մարդու փրկության գործում եկեղեցու դերի մեծ կարևորությունը:

զ) Մատենագետներ Պ. Խաչատրյանը և Ա. Ղազինյանը, ինչպես արդեն ասացինք, գտնում են, որ վիճելի գլուխները Մատյանի մեջ են եղել սկզբից նեթ և որպես դրա վկայություն մեջբերումներ են անում այդ գլուխներից՝ ցույց տալու, որ դրանք Մատյանի անկապտելի բաղադրիչներն են և «գրվել են Մատյանի համար»: Համաձայնելով այն կարծիքին, թե Մատյանի ստեղծման հենց սկզբից այդ գլուխները եղել են նրա մեջ, սակայն գտնում ենք, որ դրանք գրվել են շատ ավելի առաջ, քան Մատյանը, և «անկախ իր պոեմից, այլ նպատակներով» և ոչ թե, հեղինակի մահից հետո, գրիչների կողմից «խառնվել են բուն պոեմի տեքստին», այլ իր իսկ հեղինակի կողմից որոշ նկատառումներով, Մատյանը հորինելու պրոցեսում, մտցվել են պոեմի մեջ: Այս նպատակով հեղինակը զգալի խմբագրական ջանքեր է գործադրել վիճելի գլուխները քնարական գլուխներին «կապելու» համար:

Այսպես, ԼԴ գլխի սկզբում հեղինակը հորինում և դնում է հետևյալ հատվածը. «Արդ, առ այսոքիկ թշուառացեալ շնչոյս իմոյ իղձք, եւ առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես բանիւ զամենայն, Աստուած, զոր ի նախնին ճառեալ եւ յերկրորդումս ցուցից: Իսկ յանդիմանութիւնս գրաբանականս՝ ի կոյտս բազմութեան ազգաց եւ թարգմանութիւնս ժողովրդոց, զայս արգահատութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք»¹: Դրանով ԼԴ գլուխը կապվում է ԼԳ գլխին: Նիկիական հավատո հանգանակի ս. Երրորդության դավանանքը շարադրելուց հետո բանաստեղծը գրում է. «Արդ, զայս

¹ Գր. Նարեկացի, Մատենանոցերգութեան, էջ 385:

գոչումն ծածուկ խորհրդոց՝ կերպաւորելոց յայսմ մատենի, ամենալուր ականջաց մեծիդ Աստուածոյ ընծայեցուցի, սովիմբ սպառազինեալ եւ սպա մտի ի հանդէսն: Այլ ոչ եթէ կարատեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչ չեւ ստեղծեալ էր քո զամենայն՝ նախքան զլինելն երկնի փառաբանչաւքն անմահից եւ երկրաստեղծս բանաւորաւք դու քեզէն ի քումդ լրութեան փառաւորեալ իսկ էիր, - այլ զի զմերժեալս՝ զիս յարգեսցես, անճառ քաղցրութիւն, ճաշակել զքեզ բանիս հաղորդութեամբ: Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ՝ կենաց կանոնիդ ասել Անդոնայի տէր, եւ զհրամայեալ պատուէրդ ոչ առնել: Որ ինձէն իսկ զիս՝ զոսկեղէն տախտակս խաւսուն, նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ Աստուծոյ, եղծի, որ եւ խորտակելն է իրաւացի, եւ եւ տխրատեսակ մրով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ: Այլ արդ, քանզի բազմաւք պաղատեցայ դրուատաւք խանդաղատականաւք, որ ոչ է գրեալ ի յայս կարգ ձայնի, լո՛ւր, բարեգութ, ըստ ամին բանի այնմ ամենայնի: Եղիցի՛ եւ այս աղերս, բարբառոյ հայցման աղաւթից յաւղեալ ընդ նոսին, թերեւս ի մաքրոց եւ ի կամարարից այս նուէր հացի պանից բաղարջոց՝ իւղով զանգելոց ի սեղան փառացդ քոց մատիցէ»¹: Այս հատվածը ևս շատ կարևոր կապ է: Այս կապակցությամբ Խաչատրյանն ու Ղազինյանը նշում են. «Նարեկացին ԼԳ և ԼԴ գլուխներում գլխավորապես շարադրում է իր հավատո հանգանակը, իր դավանանքը: Դա պահանջում է այլ ոճ, խոսքի այլ կարգ, այլ եղանակ: Այլ կերպ ասած՝ դրանք սրտահույզ բողոքական ու զղջման արցունքներով գրված տողեր չեն, և բանաստեղծը դիմում է Աստծուն՝ իր դավանության խոստովանության հետ ընդունել նաև այն խոսքերը, այն բազում պաղատանքները, որոնք ասված են «դրուատաւք

¹ Նույն տեղը, էջ 389:

խանդադատականաք»՝ խանդադատագին դրվատանքներով և որոնք ոչ են «գրեալ ի յայս կարգ ձայնի» (տես Բան ԼԴ, տ, 134-135)¹: Այո, ակնհայտ է, որ հեղինակը ԼԴ ոչ բանաստեղծական գլուխը փորձում է «կապել» բանաստեղծական գլուխներին: Ավելին, վերը բերված հատվածում բանաստեղծը նրբորեն փորձում է այդ դավանաբանական գլխի «հովանու» տակ անցկացնել իր քնարական քերթվածքները, դրանով իսկ ապահովագրել բանաստեղծական հորինվածքների ապագան: Դրա վկայությունն է այն, որ փոխանակ խնդրելու «Ամենակարողին»՝ նախկինում գրվածների հետ ընդունել, ընկալել նաև «այս» գրվածքը (ԼԴ գլուխը), մեծ բանաստեղծը հակառակն է խնդրում՝ սրա հետ ընկալիք նաև մնացածները...

ՀԵ գլխի համար «կապ» են հանդիսանում ա և բ հատվածները: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ա հատվածը: Խաչատրյանն ու Ղազինյանը ՀԵ գլխի մասին այն կարծիքի են, որ դա ևս գրվել է Մատյանի համար և ոչ թե հորինվել է անկախ պոեմից: Այս կապակցությամբ նրանք գրում են. «Գ. Ավետիքյանը կարծում է, որ այս գլուխը պետք է դրված լիներ ԼԴ գլխից հետո, քանի որ այն նվիրված է Սուրբ Երրորդության հավատի դավանությանը՝ ըստ Նիկիական հանգանակի, իսկ այս գլուխը՝ եկեղեցու դավանության խորհրդին՝ ըստ առաքելական և Կոստանդնուպոլսի հանգանակների... դա զուտ տրամաբանական հետևություն է, ոչ թե հիմնավոր փաստարկ: Նարեկացին եկեղեցին համարում է Քրիստոսի մաքուր մարմինը, որը հավասարապես պետք է պաշտվի նրա գլխի՝ մարդացած Աստծո Բանի՝ Քրիստոսի հետ, և որ այս գլուխը նա գրում է՝ հիշատակելով նաև իր այն ճառը (բան ԼԴ), որ նվիրված է Երրորդության դավանությանը: Եվ քանի որ եկեղեցին,

¹ Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, ծանոթագրություններ, էջ 1042-1043:

ըստ Նարեկացու, յուրաքանչյուր հավատացյալի հոգևոր ծննդի ճշմարիտ ու պանծալի մայրն է, առանց որի անհնարին է մաքրվել մեղքերից և հաղորդվել սրբերին ու արժանանալ երկնային փրկագործության, ուստի ինքը իր Մատյանում անհրաժեշտ է համարում բացատրաբար արտահայտել իր դավանությունը թե՛ Սուրբ Երրորդության և թե՛ հատկապես եկեղեցու մասին¹: Իհարկե, կարիք չկա ՀԵ գլուխը Մատյանի մեջ դնել ԼԴ գլխից անմիջապես հետո, բայց և չի կարելի անտեսել այն գորեղ փաստը, որ ՀԵ գլուխը ԼԴ-ի տրամաբանական շարունակությունն է կազմում, մի բան, որ վկայում է այն մասին, թե այդ գլուխներին իսկապես հորինվել են անկախ պոեմից և մինչև պոեմի մեջ մտնելը մի ամբողջություն են կազմել: Քանի որ հենց ինքը՝ հեղինակն է վիճելի գլուխները (մեր կարծիքով) մտցրել պոեմի տեքստում, այն էլ, ըստ երևույթին, պոեմը հորինելու պրոցեսում, ուստի կարիք չկա այդ գլուխները հանելու կամ տեղափոխելու հարց բարձրացնել, բայց բանասիրական գիտությունը պիտի պարզի դրանց հիմնական պատմությունը, նպատակը, որպեսզի դրանք գնահատելիս և արժեքավորելիս պահպանի օբյեկտիվությունը:

Ինչ վերաբերում է ՂԲ և ՂԳ գլուխներին, ապա դրանք գրեթե «կապված» չեն պոեմի հյուսվածքին: Այս ամենը ցույց են տալիս, որ վիճելի գլուխներն իսկապես հորինվել են պոեմից անկախ և նախքան պոեմի ստեղծվելը կազմել են մի ամբողջական երկ՝ բովանդակության կուռ կառուցվածքով:

* * *

Մատյանի վիճելի գլուխների բովանդակությունն ունի հակաաղանդավորական ուղղվածություն:

¹ Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 1089:

Ինչպես արդեն ասվեց՝ այդ գլուխներում ամփոփված է հայ եկեղեցու դավանանքի էությունը, 1) Աստծո հասկացությունը, 2) Եկեղեցու խորհուրդը, 3) Հայ եկեղեցու խորհրդանիշները... Այսինքն՝ Նարեկացին այդ գլուխներում շարադրում է հայ եկեղեցու հավատի հիմունքները, արմատները՝ հավաստիացնելով, որ դրանք կազմում են նաև իր անձնական համոզմունքը:

Նարեկացին ժամանակին մեղադրվել է իբրև հերձվածող, աղանդավոր, ծայթ, թոնդրակեցի, պավլիկյան, մանիքեական... Եվ դա պատահական չէ: Հայկական Ռեֆորմացիայի շարժումը գաղափարական տարբեր հոսանքների ամբողջություն էր: Հայ պաշտոնական եկեղեցուն հակադրվող տարբեր բնույթի հոսանքները հավասարապես համարվում էին պաշտոնական եկեղեցու թշնամիներ և կազմում էին ընդդիմության ճակատը: Այստեղ մոտավորապես նույն պատկերն ունենք, ինչ գերմանական ռեֆորմացիայի ժամանակ. հայկական ռեֆորմացիայի մարտնչող թեևր (հայ իրականության Թ. Մյունցերի՝ Սմբատ Զարեհավանցու գլխավորությամբ) ավելի արմատական վերափոխությունների խնդիր է դնում, իսկ չափավոր ռեֆորմի կողմնակիցները փորձում էին պարզեցնել եկեղեցական հիերարխիան, բարեփոխել, աշխուժացնել եկեղեցական ծիսակատարությունները, եկեղեցու կարգը: Նարեկացուն մեղադրել են ռեֆորմացիոն շարժման՝ միջնադարյան Հայաստանի այդ հզոր հակաֆեոդալական, հակաեկեղեցական շարժման գաղափարախոսության երեք հանգուցային հարցերում. ա) Աստծո հասկացության աղավաղման՝ ս. Երրորդության դավանանքի խճողման, Քրիստոսի փրկչական դերի գերազնահատման, ընդհանրապես մյուս դեմքերից՝ ս. Հորից ու ս. Հոգուց Որդի Աստծուն գերադասելու միտումնավորության մեջ: Նարեկացին առանձնապես շատ է շեշտում Քրիստոսի մարդասիրությունը, մարդամոտությունը, այսկողմնայնությունը, մի բան, որ դիտվում էր որպես թեքում դեպի

քաղկեդոնականությունը: Եվ ոչ միայն այդքան. Որդի Աստծո մեջ ընդգծվում, շեշտվում է մարդկայնությունը, իսկ մյուս կողմից՝ Նարեկացին շատ է վեր հանում Մարդուն՝ հասցնելով աստվածայնության, նույնիսկ հասնում է մարդու պաշտամունքին (և ոչ միայն աստվածն է մարդ, այլև մարդն է աստված): Մի խոսքով, Նարեկացուն ազատ կերպով կարելի է մեղադրել մարդադավանության մեջ և անգամ աստվածամարտության, անաստվածության մեջ, բ) և գ) Նարեկացուն մեղադրել են այն բանում, որ նա արհամարհել է եկեղեցին և նրա կարգն ու խորհրդանիշները: Նա մեղադրվել է որպես համախոհ թոնդրակեցիներին, «որք սակս խառնակութեան զանազան աղանդոց՝ զանազան անուանս ընկալան, այսինքն մանիքեցիք, պոլիկեանք կամ պալիկեանք և այլն, որք զեկեղեցի արհամարեին, և զամենայն որ յեկեղեցվոջ կատարի, ծաղր առնէին»¹:

Եվ ահա Նարեկացին «Հաւատոյ սահմանքի» կամ «Մատյանի» վիճելի գլուխներում ձգտել է «հերքել» այդ բոլոր մեղադրանքները՝ շարադրելով այդ հիմնական հարցերում պաշտոնական եկեղեցու տեսակետը և հատկապես շեշտելով իր «բացասական, անհանդորժողական» վերաբերմունքը հնարավոր ամեն տեսակ շեղումների նկատմամբ: Եվ դա Գրիգոր Նարեկացին՝ Մատյանի հեղինակը: Մի մարդ, որ տրամաբանական մտածողությունը կույր հավատից բարձր է դասում, որը ցանկացած հարցի շուրջ շատ թե քիչ բանական թվացող բոլոր հնարավոր տեսակետները հարգող մտածող է, հանգարծ այդպիսի միակողմանի ու շեշտակի մոտեցում է դրսևորում:

Շարադրելով Նիկիական հավատո հանգանակը՝ Նարեկացին «արգելում է այդ դոգմատիկայից շեղվել, սպառնում է շեղվողներին,

¹ Գ. Ավետիքյան, Նարեկյուն, էջ 382:

խոտորյալներին. «Այլ եթե որ հակաճառական բանի յաւակնի կատել զՀայր ի յիւրմէ Բանէն, որ թէ էր երբեմն, յորժամ եւ չէր, եւ անբանութեան բամբասանաւք պատուել վարկանի զվեհին մեծութիւն, եւ կամ ստրկութիւն տացէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգեւոր, որով այլ իմն գոյութիւն աստար մուծանել եւ կամ ամբոխումն ինչ այլայլական յանարատ պատիւ միութեան սուրբ Երրորդութեանն, զայնպիսիսն քարամբք պարսից հաւատոյ բանից, իբր զղժնդակ դէս դիմամարտիկս զազանականս, հերքեալ ի միջոյ՝ ի բաց հալածեմք, եղեալ ի նզովս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի: Ուստի զսուրբ Երրորդութիւնն փառաւորելով ի նոյն տէրութիւն միակցորդ հաւասարութեան, զուզաձայն սրբաբանութեամբ, հանգունատիպ հարթութեամբ, արհնեալ և փառաւորեալ յերկնի եւ յերկրի, ի ժողովս անդրանկացն եւ յայգգս երկրածնացս բանականաց յախտեանս յախտենից»¹:

Սուրբ Երրորդութեան դավանությունը և այդ հարցում հնարավոր շեղումների անթույլատրելիությունը «հիմնավորելով», Նարեկացին անցնում է եկեղեցու խորհրդի ու կարգի մեկնությանը: «Չոգևոր եկեղեցի ասելով Նարեկացին հասկանում է հավատացյալներին, - գրում են Խաչատրյանը և Ղազինյանը, - նյութական եկեղեցի ասելով՝ եկեղեցու նյութակերտ տաճարը, որը, սակայն պաշտելի է ոչ թե որպէս նյութեղէն շինվածք, ինչը աղանդավորություն կլինէր, այլ որպէս Աստծո բնակարան, սրբավայր, մի դուռ, որը տանում է երկնային արքայություն... Եկեղեցու խորհուրդը, ըստ Նարեկացու, այլ է, տաճարինը՝ այլ: Այնտեղ կուռք էին պաշտում, այստեղ՝ ամենակալ Աստծուն: Քրիստոնէական աստվածապաշտությունը խորտակեց կռամոլության պաշտամունքը, նրանց

¹ Գր. Նարեկացին, Մատենանոց տպագրութեան, էջ 388-389:

բազմաստվածությանը հակադրեց Սուրբ Երրորդության հավատը: Նարեկացին այստեղ՝ հակադրվում է աղանդավորական պավլիկյան և թոնդրակյան այն հայացքներին, ըստ որոնց՝ եկեղեցին այլ բան չէ, քան հեթանոսական տաճարի կամ մեհյանի փոխակերպություն»¹:

Նյութական եկեղեցու խորհրդի նարեկացիական մեկնության մեջ կա ոչ միայն թոնդրակեցիների, այլև երկաբնակների քննադատությունը: Այստեղ, ըստ էության, մատնանշվել է թոնդրակեցիների և երկաբնակների գաղափարական որոշ ընդհանրությունը: Միջնադարյան Հայաստանում պաշտոնական եկեղեցին և՛ թոնդրակեցիներին, և՛ քաղկեդոնականներին նախատում էր իբրև մարդադավանների, նյութապաշտների: Ինչպես տեսանք, ըստ Նարեկացու՝ նյութական եկեղեցին ինքնին պաշտվել չի կարող և պաշտվում է շնորհիվ նրա մեջ Աստծո բնակության: Նարեկացին հնարամտորեն օգտագործում է հայ միաբնակ եկեղեցու կողմից Որդի Աստծո բնության յուրօրինակ մեկնության եղանակը. Քրիստոսի մարմինը պաշտվում է ոչ թե որպես սովորական մարմին, այլ որպես Աստծո մարմին: Նարեկացու կողմից թոնդրակեցիների քննադատությունը միաժամանակ ուղղված է երկաբնակների դեմ: Երկու դեպքում էլ մեծ մտածողը փորձել է «հավաստել», որ ինքը նյութապաշտ չէ, այլ աստվածապաշտ: Դրանով Նարեկացին ապահովագրում է իրեն իբրև ծայթ և թոնդրակեցի մեղադրվելուց:

Նարեկացին նույն եղանակով մեկնում է եկեղեցու խորհրդանիշները՝ ժամհարի փայտի, մյուռոնի, սրբապատկերների և այլնի խորհուրդները: Սա ընդհանուր գիծ է, որ զարգացվում է Նարեկի վիճելի գլուխներում: Այնպես որ, Նարեկացու տրամաբանությամբ, եթե ոք սրբապատկերները, մեռոնը, ժամհարի փայտը, եկեղեցու շինությունը համարում է սոսկ նյութական,

¹ Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 1091, 1093:

նյութեղեն, ապա այդպիսի մեկը փաստորեն Քրիստոսին էլ համարում է զուտ մարդ և ոչ Աստված, ինչը միաժամանակ ս. Երրորդության խորհրդի ժխտումն է. «Իսկ եթե ոք ձեռն չարութեան ի վերինն արքայութիւն յանդգնաբար համբառնայցէ, զիւտ ինչ մարմնաւոր եւ կամ հնարք մարդկային եւ կամ արուեստ երկրակենցաղ զսահմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, եւ ոչ պարգեւ առաւել կենաց, եւ ակնարկութիւն աստուածային, եւ Հոգւոյ Սրբոյ յայտնեալ լուսանորոգ նախագրութիւն, եւ երախտեաց բարձրելոյն ամենատուր լիականաթիւն, եւ կամաց Արարողին խնկաւորեալ խորհրդարան, եւ առաքելոց ձեռինն աջոյ բարեհանճար հիմնարկութիւն, եւ միանգամայն ասել դուռն երկնից եւ քաղաք Աստուծոյ կենդանւոյ եւ մայր կենդանեաց, ազատ ի պարտեաց, եւ ճշգրիտ տեսակ կերպի երեւակիս բանականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, եւ շաւշափելին՝ պատկեր մարմնոյս, եւ սրբութեանցն անդ անձառից գերազանցեալ նոր սրբութիւն, եւ Քրիստոսեանն նշանաւ պայծառապարծ պսակեցեալ,- զայնպիսի ոչ խոստովանողսն մերժէ յերեսաց իւրոց Հայրն ամենակալ ի ձեռն Բանին իւրոյ էակցի, բարձեալ ի նմանէ եւ զաւանդ շնորհի Հոգւոյն փառակցի՝ փակեցէ զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին: Իսկ մեք, զորս զրեցաք, սմին եւ վկայեմք հաւատացեալ որում կարգեցաքս, յանուն եւ ի փառս ամենակալ Երրորդութեանն եւ միում աստուածութեանն յաւիտեանս յաւիտենից»¹:

Պարզորոշ նկատվում է, որ վիճելի զլուխները շարադրելիս Նարեկացին մի տեսակ կեցվածք է ընդունել: Եկեղեցու դերն ու նշանակությունն արհամարհելու իր հասցեին մեղադրանքը հերքելու նպատակով հեղինակը սկսում է պանծացնել եկեղեցին: Դրա հիմքը

¹ Գր. Նարեկացի, Մատենանոց տպարան, էջ 554:

ուներ. հայտնի է, որ Նարեկացին մանկությունից կրթվել և դաստիարակվել է եկեղեցում, հետևապես, «երախտամոռ որդի» չհորջորջվելու համար բանաստեղծը գովում ու բարձրացնում է եկեղեցին, այն համարելով յուրաքանչյուր հավատացյալի հոգևոր ծննդի ճշմարիտ ու պանծալի մայրը, առանց որի անհնար է մաքրվել մեղքերից և երկնային արքայության արժանանալ (տես բան ՀԵ, է, ք, թ, է և մյուս հատվածները):

Գր. Նարեկացու Մատյանի վիճելի գլուխների ամբողջությունը, իր գաղափարական բովանդակությամբ, ոճով, ոգով, անգամ հեղինակի տոնով ու «կեցվածքով» և, ամենակարևորը՝ հակաաղանդավորական ուղղվածությամբ հակասում է Նարեկացու՝ թոնդրակեցիների դեմ գրված «Թղթին»: Իսկ երկուսը միասին վերցրած, շոշափվող հարցերով, թեմատիկայով՝ որոշ ընդհանրություն ունեն Սեբաստիայի և Մելիտենեի եպիսկոպոսներին գրած պատասխան նամակների հետ:

Այսպես, բավականաչափ հիմք կա եզրակացնելու, որ վիճելի գլուխները, նախքան Մատյանի մեջ ընդգրկվելը, մի ամբողջական երկ են կազմել, որը տարվել է Անի կամ Արգինա, և որի շնորհիվ Նարեկացին կարողացել է արդարանալ դատի ժամանակ: Այո, մեծ բանաստեղծը, ինչպես ժամանակին մեծ Գալիլեյը, առերես որոշ չափով նահանջել է իր գաղափարական դիրքերից, բայց միայն ու միայն այն դիտավորությամբ, որ բանադրանքից ու աքսորից խույս տա և շարունակի իր նորարական գործունեությունը: Նրա այդ ժամանակավոր նահանջի և, ընդհանրապես, դատի հետ կապված պատմության ուղղակի ակնարկությունը պետք է համարել Նարեկացու հետևյալ խոսքերը. «Զի որպես երբեմն հերձուածականին չարափառութեամբ, ամենապատիրն խաբէութեամբ նենգողին կարթիւ հատուծեալ ի բաց հերքեցայ՝ ելեալ ի դրախտէն, արդ, միաւորականաւս այսու ուղիղ ամբօութեամբ և. յաւանդ իսկապէս

շնորհի անդրէն միւսանգամ համբարձեալ սովիմբ, ի թռիչս թեւոց լուսոյ ահա յերկինս ժամանեցից հետեւեալ¹: Այս խոսքերը պետք է խիստ կենսագրական համարել, որովհետև դրանք քնարական ընդհանրացում չեն, որ կասկածի տեղիք տան: Այս մեղայական խոստովանությունն արդէն ապացույց է, որ վիճելի գլուխները գրվել են դատի կապակցությամբ:

Այս ամենից հետո պարզ է դառնում, թե ինչու կաթողիկոսական դիվանում եղած «Հաւատոյ սահմանք» երկը չի պահպանվել և ոչ էլ հիշատակվել է անգամ հետագա մատենագիրների կողմից, մինչդեռ ԿՃավա ուխտին Գրիգոր Նարեկացու գրած Թուղթը պահպանվել է իր սկզբնական տեսքով՝ տեղ գտնելով «Գիրք թղթոցի» մեջ: «Հաւատոյ սահմանքը» չէր էլ կարող պահպանվել որպէս առանձին երկ, ըստ երևույթին այն պատճառով, որ հետագայում հեղինակն անձամբ գնացել է, կաթողիկոսական դիվանից վերցրել այդ երկը և մտցրել Մատյանի մեջ: Գուցէ հենց այդ իրողությունն է ակնարկվում Մամուէլ Անեցու հետևյալ՝ աննշան թվացող տեղեկության մեջ. «Աստանօր տիեզերալոյս և մեծն վարդապետն Հայոց Գրիգորիս Նարեկացին՝ որդի Տեառն Խոսրովու յԱնձաւեաց եպիսկոպոսի, յայսմ վայրի շինեաց զիւր գիրքն»²: («Շինեաց զիւր գիրքն» պետք է հասկանալ կազմեց իր գիրքը): Ըստ երևույթին դատից տարիներ անց, երբ ձեռնամուխ է եղել Մատյանը գրելու, Նարեկացին գնացել է Անի, ուր այդ ժամանակ (Մարգիս Անեցու կաթողիկոսության օրոք) Արգինայից տեղափոխվել էր կաթողիկոսարանը, և հենց այդտեղ էլ, վերցնելով դիվանից «Հաւատոյ սահմանքը»՝ տարրալուծել է իր Մատյանում...

¹ Գր. Նարեկացի, Մատենան ողբերգութեան, էջ 546:

² Մամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 104:

Ուխտանեսն և Գրիգոր Նարեկացի

Նարեկի դպրեվանքի հետ Ուխտանեսն պատմիչի կապը, Ուխտանեսնի և նրա պատվիրատուի՝ Արգինայում հանդիպելու խորհրդավորությունը և նշմարվող որոշ համընկնումներն ու գուգահեռներն ստիպում են վարկածի կարգով առաջարկել հետևյալը.

Ուխտանեսնի պատվիրատուն Գրիգոր Նարեկացին է եղել:

10-րդ դարի հայ պատմիչ Ուխտանեսը, իր «Հայոց պատմության» Ա հատվածի Ա գլխում, որը, փաստորեն, ամբողջ երկի նախաբանն է, ասում է, թե իր աշխատությունը, մասնավորապես՝ «Պատմության» ամենաարժեքավոր մասը, ինչպես ինքն է անվանում՝ Բ հատվածը, որ կոչվում է «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», գրել է Նարեկա վանքի վարդապետի պատվերով: Տեքստում ոչ մի տեղ Նարեկացու կոնկրետ անունը չի նշվում: Միայն վերնագրերում ասվում է. «Զպատմութիւնս յերիս հատուածս, զոր ասացեալ է Տեառն Ուխտանեսնի ՍԵ (բաստացոյ) Եպիսկոպոսի՝ ի խնդրոյ Հարն Անանիայի Նարեկավանաց Առաջնորդի և նախաշար Վարդապետի...», «Պատասխան թղթոյն Անանիայի և խոստումն կատարել զհայցուած նորս»¹:

Մակայն հայտնի է, որ այդ վերնագրերը հեղինակինը չեն, այլ ավելացվել են ուշ շրջանի գրիչների կողմից, մի հանգամանք, որ թյուրիմացության կամ դիտավորության հետևանք է: Եվ այդպես՝ ավանդաբար, հայագիտության մեջ հաստատվել է այն կարծիքը, թե Ուխտանեսնի պատվիրատուն Անանիա Նարեկացին է եղել:

¹ Ուխտանեսն, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871:

Հայագետներից միայն Պ. Պետերսն է թերահավատորեն վերաբերվել այդ տեսակետին, կասկածի ենթարկել դրա ճշմարիտ լինելը, ընկնելով սակայն մեկ այլ ծայրահեղության մեջ: Ժխտելով այդ տեսակետը, նա պնդում էր, թե Ուխտանեսի պատվիրատուն, ընդհանրապես, Նարեկա դպրոցի ներկայացուցիչ լինել չէր կարող:

Իր իսկ՝ Ուխտանեսի «Պատմության» նախաբանից իմանում ենք, որ իր պատվիրատուն՝ Նարեկա վանքի վարդապետը, եղել է կաթողիկոսական նստավայր Արգինայում, հանդիպել և խոսել է հեղինակի հետ. «Արդ քանզի ի ժամանակին յայնմիկ, յորժամ երկիր առ աստուածապատիւ և սուրբ հայրապետն մեր Խաչիկ՝ բերելով նմա ընծայ և պատարագ հոգևոր զգիրս Հաւատարմատ՝ որ ընդ դեմ երկաբնակացն, զոր քո ինքնին խաւսեալ ի խորհուրդ հաւատոյ ի ձեռն հոգւոյն սրբոյ ի քեզ բնակելոյ, և բերան ի բերան խաւսեցար ընդ իս յաղագս պատմութեանս. զոր եթէ խնդրես զտեղին ուսանեալ, ասացից նաև զբանից նշանն տայցէ թե ախորժես, և զյեղանակս ժամանակին յայտ արարից զի յորժամ անցեալ գնացեալ ի միասին՝ և նստաք յեզր գետոյն՝ որ կոչի Ախուրեան, և ասեաք զպատարագամատոյցն Տեառն զարութեանց, զոր ասեն Աթանասի, և էր յաւուրս ամարայնոյ, յամսեանն Տրէ, որ ար տասն ու մին էր ամսոյն, յաւուր կիրակէի յիններորդ ժամուն»¹:

Պատմիչը նշում է նաև, որ այդ հանդիպումը տեղի է ունեցել Սմբատ Գ Բագրատունու (977-989 թթ.) թագավորության օրոք:

Հայագետ Զազա Ալեքսիձեն կարծում է, որ Ուխտանեսի երկում նշված դեմքերն ու տարեթվերը նրա (Անանիա Նարեկացու – Ս. Պ.) գործունեությանն են վերաբերում»: «Ճիշտ է,- գրում է նա,- Ուխտանեսի երկի վերնագիրը ուշ շրջանի պետք է կարծել, սակայն առաջաբանից, այնուամենայնիվ, որպես պատմիչի թղթակից,

¹ Ուխտանես, Պատմութիւն, էջ 1-15:

Անանիա Նարեկացին է ենթադրվում: Նրանում ասված է, որ պատմության ստեղծման նախաձեռնողը Նարեկա վանքում էր նստում, որ նա ուխտի առաջնորդ է»¹:

Նախապես նկատենք, որ Անանիա Նարեկացուց հետո Գրիգորն է առաջնորդել Նարեկա վանքի վարդապետարանը: Իսկ ժողովրդական ավանդություններից մեկում ասվում է. «Եւ սուրբն Գրիգոր նստուցին յաթոռն առաջնորդ վանիցն և հանապազ վարդապետեր ժողովրդեանն»: Այնպես որ, անցնենք ավելի լուրջ կովանների քննարկմանը՝ «երկում նշված դեմքերին ու տարեթվերին»:

* * *

Ուխտանեսի և Նարեկա վանքի վարդապետի հանդիպման տարեթիվը:

Մ. Բրոսեի հաշվումներում այդ հանդիպումը կարող էր տեղի ունենալ 973, 980 կամ 987 թականներին, երբ Տրե ամսի 11-ը կիրակի օրն է ընկնում: Հայագետները վիճարկում են հիմնականում երկու տարեթիվ: Մ. Օրմանյանը և Հր. Աճառյանն ընդունում են 973 թվականը, իսկ Ն. Ակինյանը՝ 987 թվականը²: Գրականագետ Հրաչյա Թամրազյանը, որի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Անանիա Նարեկացու կյանքին և ստեղծագործությանը, նույնպես գտնում է, որ Արգինայի հանդիպումը 980-ական թվականներին պիտի եղած լիներ, քանի որ Սմբատ Բ-ն գահակալել է 977 թվականից, հետևապես, 973-ին այդ հանդիպումը լինել չէր կարող: 980 կամ 987 թ.: Այս երկու տարեթվերից ամենահավանականը 987

¹ «Ուխտանես, Հայերից վրացիների բաժանման պատմությունը», աշխատասիրությամբ Զազա Ալեքսիձեի, Թբիլիսի, 1975, էջ 227:

² Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 791: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ, 1, էջ 191:

թիվն է և ահա թե ինչու: Նարեկա վանքից Արզինա գնացած վարդապետը Խաչիկ Արշարունի կաթողիկոսին իբրև ընծա է տանում «Հաւատարմատ» վերնագրով մի երկ՝ գրված երկաբնակների դեմ: Այդ նույն ժամանակ Ուխտանեսը հանձն է առնում գրել հայ-վրաց բաժանման պատմությունը, մի երկ, որը նույնպես ուղղված էր քաղկեդոնականության դեմ: Պետք է ենթադրել, որ այս ամենը ուղղակիորեն կապված էր 986 թվականից սկիզբ առած հայ-քաղկեդոնական հարաբերությունների ծայրաստիճան սրման հետ:

* * *

Մինչև վերջերս հայագիտության մեջ տիրապետում էր այն տեսակետը, որ Անանիա Նարեկացին մահամերձ վիճակում իր «Խոստովանագիրը» գրել էր Անանիա Մոկացի կաթողիկոսի պարտադրմամբ (Գ. Տեր-Մկրտչյան, Բ. Սարգսյան, Գ. Հովսեփյան, Մ. Աբեղյան, Մ. Մկրյան), «Նրա (Անանիա Նարեկացու) խոստովանության Գրից տեղեկանում ենք, որ նա սննդակից և կենակից է եղել Անանիա Մոկացուն և մերձ ի մահ վիճակում՝ ոչ ինքնաբերաբար, այլ կատարելով կաթողիկոսի պահանջը, անիծել է թոնդրակեցիներին»¹:

Սակայն Հր. Թամրազյանը «Խոստովանագրի» մեջ բովանդակվող կենսագրական տվյալների վերլուծությամբ այն հետևությանն է հանգում, որ Անանիա Նարեկացու այդ նամակն ուղղված էր ոչ թե Անանիա Մոկացի կաթողիկոսին, այլ Խաչիկ Արշարունուն: Թամրազյանի կարծիքով՝ Անանիա Նարեկացին Խաչիկ Ա-ի հետ ազգակցական կապերի մեջ է եղել: Նրանք երկուսն էլ մինևույն գավառից են, հավանաբար՝ Արշարունիքից, միասին անցկացրել են մանկության և ուսման տարիները և այլն:

¹ «Արարատ», Էջմիածին, 1987, էջ 94:

Հր. Թամրազյանի այս կարծիքը շատ հավանական է թվում, թեև աչքաթող չպիտի արվեն նաև հետևյալ հանգամանքները, ա) Անանիա Մոկացին Խաչիկ Արշարունու մորեղբայրն էր, այնպես որ, Անանիա Նարեկացին կարող էր ազգակցական կապերի մեջ լինել ինչպես Խաչիկի, այնպես էլ Անանիա Մոկացու հետ: ք) Անանիա Նարեկացին ավելի շուտ Անանիա Մոկացու սերնդակիցն ու հասակակիցն է, քան թե Խաչիկ Ա-ի: Անանիա Մոկացին և Խաչիկ Արշարունին մահացել են գրեթե միևնույն տարիքում, երկուսի մասին էլ Ասողիկն ասում է. «Մա լցեալ աւուրքք, կատարեալ ժամանակաւ, ի բարւոք ծերութեան փոխի յաշխարհէս»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մոկացին մահացել է 968 թվին, իսկ Խաչիկ Արշարունին՝ 992, հանգում ենք այն հետևության, որ Խաչիկն իր մորեղբորից շուրջ 20-25 տարի փոքր էր և ծնված պիտի լիներ 920-ական թվականներին: Այս դեպքում Անանիա Նարեկացին Խաչիկի հասակակիցը լինել (որպեսզի մանկությունը միասին անցկացնեին) չէր կարող: Որովհետև, եթե Անանիա Նարեկացին նույնպես ծնված լիներ 920-ական թվականներին, ապա Նարեկա վանքի հիմնադրման ժամանակ (943թ.) նա պիտի լիներ շուրջ 20 տարեկան, իսկ այդ հասակում դժվար թե նրան վստահեին Նարեկա վանքի առաջնորդությունը:

Նարեկա վանքը հիմնադրվել է մինչև 943 թիվը, մինչև Գագիկ Արծրունու մահը, որովհետև Հայամավուրքի պահպանված ձեռագրերից մեկում (Մատենադարան, ձեռ. թիվ 7359) պահպանվել է մի մանրանկար, ուր պատկերված է Գագիկ Արծրունին՝ Անանիա Նարեկացուն նորաբաց վանքի բանալիները հանձնելիս: Անանիա Նարեկացին այդ ժամանակ պիտի որ լիներ շուրջ 40 տարեկան, քանի որ մինչև Նարեկա վանքի հիմնադրումը նա, Պետրոս կրոնավորի հետ, ծառայել է Հավնունիքի Անտակ և Արշարունիքի Խավարաձոր վանքերում և արդեն այդ ժամանակ անվանի վարդապետ էր:

Այսինքն՝ Անանիա Նարեկացին ծնված պիտի լիներ 900-ական թվականներին, մինչդեռ Խաչիկ Արշարունին՝ 920-ական:

Հր. Թամրազյանի այն կարծիքը, թե Անանիա Նարեկացու «Խոստովանագիրը» ուղղված է Խաչիկ Արշարունուն, հենվում է հետևյալ դատողության վրա. Անանիա Մոկացի կաթողիկոսը չէր կարող միննույն հեղինակին պատվիրել թոնդրակեցիների դեմ երկ գրել, իսկ հետո նրան մեղադրել թոնդրակեցությանը հարելու մեջ և ստիպել գրելու «Խոստովանագիրը»: Ուրեմն, տրամաբանորեն ճիշտ հետևություն է անում Հր. Թամրազյանը. ոչ թե Անանիա Մոկացին է ստիպել Անանիա Նարեկացուն՝ թոնդրակեցիներին անիծել, այլ Խաչիկ Արշարունի կաթողիկոսը: Սակայն այդ ճիշտ տրամաբանությամբ եթե հետևողականորեն առաջ գնանք, կանգ կառնենք մի փակուղու առջև. դժվար թե Խաչիկ Ա կաթողիկոսը, միննույն հեղինակից ստանալով «Հաւատարմատ» հակաքաղկեդոնական, հակաաղանդավորական երկը՝ որպես այդ հեղինակի ուղղադավանության վկայություն, նույն հեղինակին կասկածեր աղանդավորության, հերձվածողության մեջ: (Մեզ գուցե հակաճառեն, թե «Հաւատարմատը» քաղկեդոնականների դեմ էր ուղղված, իսկ Խաչիկ Ա կաթողիկոսն Անանիային մեղադրել է թոնդրակեցության մեջ: Դրան կպատասխանենք. նախ թոնդրակեցությունը իր ժամանակի գրեթե բոլոր աղանդների խառնուրդն էր, և երկրորդ՝ Անանիա Նարեկացին, ըստ էության, մեղադրվել է նաև իբրև քաղկեդոնական, հենց այդ պատճառով էլ «Խոստովանագրի» մեջ անիծում է նաև քաղկեդոնականներին):

Այդ փակուղուց դուրս գալու միայն մի ելք կա. ընդունել, որ Անանիա Նարեկացու «Խոստովանագիրը» իսկապես ուղղված էր Խաչիկ կաթողիկոսին, բայց այդ դեպքում էլ բացառվում է «Հաւատարմատի» գոյությունը: Եվ, իսկապես, եթե Անանիա Նարեկացին Խաչիկ Ա-ին որպես նվեր մատուցած լիներ նման մի

աշխատություն, ինչո՞ւ կաթողիկոսը քիչ ժամանակ անց նորից պիտի մեղադրեր նրան: Եվ հետո, մի շատ կարևոր հանգամանք ևս: Ա. Նարեկացին «Խոստովանագրի» մեջ ասում է. «Եւ որ սուտ նգովէ գնոսա (աղանդավորներին) և կամ կեղծավորութեամբ և կամ քողասուզեալ խորամանկութեամբ, կամ լոկ լեզուով բերանոյ և շրթամբ ձայնիւ և ոչ սրտիւ, և նա նգովեալ լիցի յամենեցուն վերոգրեալ սրբոց»¹: Սրան համադրենք Գրիգոր Նարեկացու՝ Կճավի ուխտին ուղղված թղթից մի հատված. «Եւ թէ յո՞րս զիրս հրամայէ նգովել գոք, և զերջանիկ Տեառն մերոյ զԱնանիայի զգարմանագիծ հակաճառութիւն նամակին, զրաբանականս ասել կամ անպատեհս, կամ ոչ Աստուծով խաւսեցեալ»²: Պարզ երևում է, որ ժամանակին կճավցիներն են բամբասել կաթողիկոսի մոտ, Անանիայի՝ «Հակաճառանք ընդդէմ թոնդրակեաց և այլ աղանդավորաց» երկը համարելով ոչ անկեղծ հորինվածք: Հենց դա էլ առիթ է տվել կաթողիկոսին կասկածելու Անանիա Նարեկացու ուղղադավանությանը: Ա. Նարեկացու նույն «Հակաճառանքն» է հիշատակվում «Խոստովանագրի» վերջում. «Արդ զայսոցիկ սակաբանից. յայտարարութիւն՝ ոչ եթէ վայրաբար և առանց խորհրդոց, կամ վարկպարագի մտածութեամբ, կամ մարդահաճոյ լինելով՝ արարի իմով ձեռամբ, քեզ, որ լսեսդ, այլ զի գիտասցես զինէն ստուգագոյն, վերձանելով զվերոգրեալս, ընդունակ գոլով բարեպաշտութեան ի ստորասութիւնս: Զբոլոր արիւնադրութեան ճշմարտութիւնն առանց զամենայն կարծեաց ընկալեալ և ընդունիմ առաջի Աստուծոյ և հրեշտակաց սրբոց, ի բոլոր սահմանեալ ամբարշտացն դաւանութեանց հեռի գոլով, ըստ յառաջագոյն գրելոց վասն նոցա: Եւ այժմ նոյն եղիցի վճիռ. եթէ հաւանեալ ոք և

¹ «Արարատ», Էջմիածին, 1892:

² «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 496:

հաւատացեալ յինէն գրելոցդ, գոհութիւն Աստուծոյ, և ես ասացից. Անիծեալ որ դնէ գոյս իւր (ի) մարդ և ոչ ի տէր Աստուած երկնի և երկրի, և անիծեալ որ յուսայ ի զաւրութիւն բազկի իւրոյ»¹: Այսպիսով, հարց է ծագում, եթէ Անանիա Նարեկացին որպէս իր ուղղադավանութեան վկայություն «Խոստովանագրի» մեջ հիշատակում է իր «Հակաճառանք» աշխատությունը, որը գրել էր շատ տարիներ առաջ, Անանիա Մոկացու պատվերով, ապա ինչո՞ւ չի հիշատակվում «Հաւատարմատ» երկը, որը գրել էր ավելի ուշ և տարել նվիրել էր նույն Խաչիկ Արշարունի կաթողիկոսին: Այստեղից հետևում է, որ «Հակաճառանքի» ու «Խոստովանագրի» միջև ընկած ժամանակահատվածում Անանիա Նարեկացին «Հաւատարմատ» վերնագրով երկ չի գրել, այլապէս մահամերձ վիճակում գրած «Խոստովանագրի» մեջ կհիշատակէր այն:

Եթէ Անանիա Նարեկացին «Հաւատարմատ» աշխատություն ունենար գրած, ապա դրա մասին գոնէ որևէ տեղեկություն կպահպանվէր, այն գոնէ կհիշատակվէր հայ մատենագրության մեջ: Ոչ Գր. Նարեկացուն, ոչ Ասողիկին, ոչ Գր. Մագիստրոսին, ոչ Լամբրոնացուն և Շնորհալուն, ոչ ոքի հայտնի չի եղել Անանիա Նարեկացու անունով «Հաւատարմատ» երկը: Մինչդեռ «Հակաճառանքը» քաջ հայտնի է եղել և հույժ տարածված միջնադարի հայ մտավորականության շրջանում: «Հակաճառանքն» էլ մեզ չի հասել, բայց նրանից պահպանվել են հատվածներ:

Հայագիտության մեջ փորձեր են արվում գտնելու Անանիա Նարեկացու «Հաւատարմատից» հատվածներ. Այսպէս, Հ. Քյոսեյանը իր Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւնը»² հոդվածում իրավացիորեն հիմնավորում է, որ Վարդան Այգեկցու կազմած

¹ Արարատ, 1892, էջ 18:

² Պ. Բ. Հ. 1982, հ 2:

«Արմատ հաւատոյ» կրոնադավանաբանական ժողովածուում Անանիա հայոց վարդապետի անունով պահպանված հատվածները պատկանում են Անանիա Նարեկացուն: Ելնելով այն հանգամանքից, որ այդ հատվածները հիմնականում վերաբերվում են Քրիստոսի բնույթի հետ կապված հարցերին, հեղինակը կարծում է, թե դրանք Անանիա Նարեկացու հենց «Հաւատարմատ» երկից մեզ հասած պատատիկներն են: Այս կարծիքը անհամոզեցուցիչ է նախ այն պատճառով, որ Վարդան Այգեկցին այդ հատվածները քաղել է, ինչպես ինքն է ասում, «Ի մեծափառ հավատոյ գրոցն Անանիայի հայոց վարդապետի»: Անանիա Նարեկացու «մեծափառ հաւատոյ» գիրքը միայն և միայն «Հակաճառանքը» կարող է լինել, քանի որ միայն այդ աշխատությունն է հեղինակին մեծ փառք բերել և խիստ հանրահայտ եղել: Եվ հետո, Ա. Նարեկացու «Հակաճառանքն» ուղղված է եղել ոչ միայն թոնդրակեցիների, այլև ուրիշ աղանդավորների դեմ: Այդ աշխատության մեջ հեղինակը ձաղկել է ոչ միայն թոնդրակեցիներին, այլև, մասնավորապես, քակեղոնականներին՝ պաշտպանելով և հիմնավորելով հայ եկեղեցու դավանանքի միաբնակության սկզբունքը: Դա բխում է նրանից, որ Անանիա Մոկացի կաթողիկոսը «Հակաճառանքը» պատվիրել էր գրելու ոչ միայն թոնդրակյան շարժման ակտիվացման, այլև Ռոմանոս կայսեր ժամանակ հայ-քաղկեղոնական հարաբերությունների ծայրաստիճան սրման կապակցությամբ:

Բերենք այգեկցու շնորհիվ մեզ հասած և Անանիա Նարեկացուն վերագրվող հատվածներից մեկը. «Եւ խառնումն որպէս հուր ընդ ոսկի և ընդ երկաթոյ, որ ոչ յեղաշրջէ գնիւթոյն բնութիւն, այլ յիւրն փոխարկեսցէ բնութիւն և հավասար է իւրում լուսոյն, և կամ որպէս պարզութիւն լուսոյ ընդ օդս խառնեալ, և կամ որպէս հոգի և մարմին, զի միաւորեալ են անշփոթ և մի կոչի բնութիւն մարդոյս, այդպէս և Բանն Աստուծոյ միաւորեալ է ի վեր քան զմիտս և անշփոթ

մնացեալ»¹: Հ. Քյոսեյանը պարզել է, որ «հուր ընդ ոսկի և ընդ երկաթոյ» և «լոյս ընդ օդ» համեմատությունները նախկինում ոչ մի տեղ միաժամանակ հանդես չեն գալիս: Ա. Նարեկացուց հետո այդ համեմատությունների համադրությունը առկա է Ասողիկի «Պատմության» մեջ պահպանված՝ Սեբաստիայի մետրապոլիտին ուղղված նամակում (986թ.) և Անանիա Սանահնեցու «Հակաճառանքում»: Պետք է ասել, որ այդ նույն համեմատությունների համադրությունը տեսնում ենք նաև Գր. Նարեկացու «Մատյանում», այն էլ մատյանի վիճելի ԼԴ գլխում. «...անապական խառնութեամբ կերպացեալ զմերս ի մարմնի, ըստ արիւնի հոգւոյ՝ ընդ մարմնոյ, եւ ոսկւոյ ընդ հրոյ, եւ կամ, յայտնապէս իսկ ասել, լուսոյ՝ ընդ աւոյոյ, ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ»²:

Այս ամենից տրամաբանական է կարծել, որ Սեբաստիայի մետրոպոլիտին ուղղված նամակի հեղինակը և Գր. Նարեկացին այդ համեմատությունները վերցրել են միննույն աղբյուրից՝ «Ի մեծափառ հավատոյ գրոցն Անանիայի հայոց վարդապետի»: Անանիա Նարեկացու այդ մեծափառ հավատո գիրքը Ուխտանեսի հիշատակած «Հաւատարմատը» լինել չի կարող, քանի որ, ինչպես պարզեցինք, «Հաւատարմատը» Արգինա՝ Խաչիկ կաթողիկոսին է տարվել 987 թվին, իսկ Սեբաստիայի մետրապոլիտին ուղղված նամակը գրվել է 986 թվին: Սա ևս վկայում է, որ «մեծափառ հաւատոյ» գիրքը Անանիա Նարեկացու «Հակաճառանքն» է՝ գրված ընդդէմ թոնդրակեցիների և այլ աղանդավորների:

¹ Վերցրել ենք Հ. Քյոսեյանի վերոհիշյալ հոդվածից:

² Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 387:

Դժվար է համաձայնել Հր. Թամրազյանի այն կարծիքի հետ, թե Անանիա Նարեկացին, ծնված լինելով 10-րդ դարի սկզբներին, ապրել է մինչև 10-րդ դարի վերջերը և իր «Խոստովանագիրը» մերձիմահ վիճակում գրել է 980 (987) և 992 թվականների միջև ընկած շրջանում: Ոչ մի հիմք չկա Ա. Նարեկացու կյանքը երկարացնելու, հասցնելու մինչև 10-րդ դարի վերջերը: Նախ, պարզեցինք, որ Ա. Նարեկացին «Հաւատարմատ» երկ չի ունեցել, հետևապես՝ Նարեկա վանքից մեկ ուրիշն է Արգինա գնացել Խաչիկ կաթողիկոսի մոտ: Ուրեմն, անիմաստ է «Խոստովանագրի» հորինման տարեթիվը դնել Արգինայում հանդիպումից հետո՝ մինչև Խաչիկ Արշարունու մահը (992թ.): Երկրորդ՝ Ա. Նարեկացին՝ ծնված լինելով 10-րդ դարի սկզբներին, դժվար թե 80-նն անց հասակում ի վիճակի լիներ Արգինա գնալ: Երրորդ՝ Ա. Նարեկացին, ըստ երևույթին, արդեն 977 թթ. կամ մահացել էր, կամ մահամերձ վիճակում էր, որովհետև Արծրունյաց Գուրգեն թագավորը «Երգ երգոցի» մեկնության շատ պատվաբեր ու դժվարին գործը հանձնում է տակավին երիտասարդ Գրիգոր Նարեկացուն: 983 թվականին գրած «Ապարանից Խաչի պատմութեան» մեջ Գր. Նարեկացին գրում է, որ Մոկաց աշխարհի խոշոր կրոնական տոնակատարությանը Նարեկա վանքից մասնակցել են իր եղբայր Հովհաննեսն ու ինքը: Մ. Չամչյանը այդ կապակցությամբ նշում է, որ Հովհաննեսն այդ ժամանակ Նարեկա վանքի առաջնորդն էր, իսկ Գրիգորը՝ Նարեկա դպրոցի ուսուցչապետը¹: Իր այդ պատմության հիշատակարանում Գր. Նարեկացին Անանիա Նարեկացու անունը հիշատակում է անցյալով:

¹ Մ. Չամչեանց. Պատմություն, հ. ք, էջ 857:

Այս ամենից հետևում է, որ Անանիա Նարեկացին «Խոստովանագիրը» գրել է Խաչիկ Արշարունու կաթողիկոսության առաջին տարիներին և հենց այդ ժամանակ էլ մահացել է:

Մ. Օրմանյանը, վկայակոչելով Ասողիկին, ահա թե ինչ է գրում կաթողիկոսության առաջին իսկ տարիների Խաչիկ Արշարունու գործունեության մասին. «Խաչիկի գործունեության առաջին արդիւքն եղաւ կաթողիկոսական աթոռին պատակտումը վերջացնել, որովհետև կրցաւ ամէն կողմերը համաձայնութեան բերել և «միապետեալ իսղացացոյց զաշխարհս Հայոց»¹: Հավանաբար հենց այդ շրջանում էլ նոր ընտրված կաթողիկոսին կճավցիները բամբասել են Անանիա Նարեկացուց, ինչը և հիմք է տվել կասկածելու նրա ուղղադավանությանը, և, ընդհանրապես՝ օրինապահությանը: Մանավանդ, եթե հաշվի առնենք Վասպուրականում և, մասնավորապես, Նարեկա վանքում Վահան կաթողիկոսի ազդեցության հանգամանքը, ապա պարզ կդառնա, թե ինչու Ա. Նարեկացին «Խոստովանագրի» մեջ անիծում է ոչ միայն թոնդրակեցիներին, այլև քաղկեդոնականներին: Որ Ա. Նարեկացին մահացել է Խաչիկ Ա-ի գահակալության առաջին տարիներին, երևում է նաև նրանից, որ Ասողիկը Ա. Նարեկացու գործունեությունը վերագրում է Անանիա Մոկացու կաթողիկոսության ժամանակներին. «Զայսու ժամանակաւ էր յաթոռ Հայրապետութեանն Տէր Անանիա, ամենաերջանիկ սրբութեամբ գերապատուել, բարեշնորհ իւրոց վիճակելոցն»:

Յայսմ ժամանակի ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնավորական հանդիսից յաշխարհիս Հայոց: Եւ ի յոլով տեղիս շինեցան եղբայրանոցք, եւ ժողովեցան միաբնակեացք սիրովն Քրիստոսի:

¹ Մ. Օրմանեան, Ազգապատում, Կ. Պ., 1912, էջ 1125:

Էին եւ վարդապետք վարժեալք վարդապետութեամբ Տեառն և ուսուցիչք ճշմարտութեան. Բասիլոս ծերունին, քաջակորովն ի խօսս և քաջակորովն ի պատմել զօրէնս Տեառն, և Գրիգոր քահանայ յամուսնացելոց, յորդախօսն և առատաբանն ի պատգամս Տեառն. և Ստեփանոս, աշակերտ Բարսեղի, որ հոգևորն կոչեցաւ առաքելաշնորհ բանիւ և գործով. ընդ սմա և մեծանունն ի գիտութեան յառաքինութեան Մովսէս, որ քառասուն աւուրքք ձգտեցուցանէր զանսուաղութիւն. Եւ Դաւիթ աղքատակերպ և զծծասէր գիտնականն, որում անուն Մաշկոտն կոչի. և Պետրոս, հաւաստի մեկնիչ Գրոց սրբոց. և Անանիա, փիլիսոփայն մեծ, որ և վանական Նարեկի: Սորա և գիրս է ասացեալ ընդդէմ աղանդոյն Թոնդրակաց և այլոց հերձուածոց»¹: Եվ բոլորովին Անանիա Նարեկացու անունը չի հիշատակվում Խաչիկ Ա-ի կաթողիկոսության շրջանում գործող անվան վարդապետների ցուցակում:

Այսպիսով, դժար է համաձայնել հայագետ Զաքա Ալեքսիձէի այն տեսակետին (հայագիտության մեջ ավանդական դարձած տեսակետին), թէ իբր Ուխտանեսի երկում նշված դեմքերն ու դրանց համապատասխան տարեթվերը Անանիա Նարեկացու գործունեությանն են վերաբերում: Խաչիկ Ա-ի կաթողիկոսության և Սմբատ Բ-ի թագավորության ժամանակ հայ հոգևոր կյանքի երկնականարում փայլատակում էր Գրիգոր Նարեկացու աստղը. «Յաւուրս յայտսիկ փայլեր իբրև զարեգակն իմաստութեամբ և առաքինութեամբ սուրբ այրն Աստծոյ Գրիգոր Նարեկացին...»²: Ողջ ասվածը հիմք է տալիս պնդելու, որ Ուխտանեսի պատվիրատուն եղել է ոչ այլ ոք, քանց հենց ինքը՝ Գրիգոր Նարեկացին:

¹ Ասողիկ, Պատմութիւն, էջ 184-186:

² Սամուէլ Անեցի, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103:

Ուխտանեսի «Պատմության» նախաբանում իր պատվիրատուին վերաբերող կենսագրական տեղեկությունները և բարձրահոն գովեստները ևս ավելի շուտ վերաբերում են Գրիգոր Նարեկացուն, քան թե Անանիային.

ա) «... Արդ զայսուսիկ գրեալս ի քեզ տեսանեմք կատարեալ, և աստուածային շնորհիւ պայծառացեալ, և ձրիւք սուրբ Հոգւոյն առլցեալ գիտութեամբ, և հոգևորական երգով գեղգեղմամբ գեր ի վերոյ քան զամենեսեան, և ամենայն պատուիրանաց Աստուծոյ հասեալ և հաստատեալ քան զբազումս՝ ով աստուածագարդ և վսեմական տէր իմ՝ տէր և տիեզերական վարդապետ, իբր ծառ իմն բազմապտուղ՝ և բարձր ի մեջ վայելուչ և աստուածատունկ դրախտիդ Նարեկայ կոչեցեալ ուխտի՝ սաղարթ առեալ և վարսաւորեալ վարուք առաքինութեամբ, և ապա ծաղկեալ ի տան Տեառն և ի գաւիթս Աստուծոյ, և բերեալ պտուղ արդարութեան...»: Պատմիչը ակնհայտորեն խոսում է Գրիգորի՝ Նարեկավանքում սնվելու և դաստիարակվելու, աճելու, հասունանալու, այդ դպրոցում ծաղկելու ու «պտղաբերելու»՝ իր ստեղծագործական կյանքը սկսելու, ապա նաև այդ դպրոցի սյունը, ուսուցչապետը դառնալու մասին: Մի բան, որ Ա. Նարեկացուն չես վերագրի, քանզի Աստղիկից հայտնի է, որ Նարեկա դպրոցը հիմնադրել է հենց ինքը՝ Անանիա վարդապետը՝ Անանիա Մոկացու ժամանակ: Անանիա Նարեկացին Նարեկա վանք է եկել արդեն որպես հայտնի գիտնական: «Պահպանվել են արժեքավոր տեղեկություններ,- գրում է այդ կապակցությամբ Հր. Թամրազյանը,-Անանիա Նարեկացու կյանքի նաև մինչնարեկյան շրջանի մասին: Նրա գործունեության այդ շրջանը կապված էր Արշարունյաց գավառի Խավարաձոր վանքի և Հավնունյաց գավառի Անտակ վանքի հետ: Արդեն այդ շրջանում Անանիա Նարեկացին համարվում էր իր ժամանակի աչքի ընկնող

գիտնականներից մեկը և մասնակցում էր կրոնա-դավանաբանական բանավեճերին:

բ) «... և բազում ճգնութեամբ և առաքինութեամբ գեր ի վերոյ ելեալ ի մեջ բազմած և կանխաւ առաջնորդեալ զքեզ ինքն անդաստանս հոգեվորս ընդ արթնեալ և ընդ զգուշացեալ մշակս ըսպասես գալստեան Տեառն»: Ուխտանեսը «արթնեալ և զգուշացեալ մշակ» ասելով արոյ՞ր ք չի ակնարկում Նարեկացու «Գրիգոր» անունը, որն ինչպես ինքը՝ հանճարեղ բանաստեղծն է իր «Մատյանում» մեկնում, նշանակում է Արթուն, Հսկող:

գ) Իր պատմության նախաբանում Ուխտանեսն իր պատվիրատուին անվանում է «հոգևոր հեղինակ և հռչակավոր հռետոր», «պուետիկոս» և այլն: Ինչպես հայտնի է, բանաստեղծական, ինչպես նաև երգ-երաժշտական ակնառու ունակություններ դրսևորել է ոչ միայն Ա. Նարեկացին, այլև, առավել ևս, Գրիգոր Նարեկացին:

դ) Գրիգոր Նարեկացու հետ ունեցած սերտ փոխհարաբերությամբ և նրանից կրած զգալի ազդեցության վկայությունն է Ուխտանեսի «Պատմության» ոճի որոշ նմանությունները Գրիգորի ստեղծագործությունների ոճին: Ինչպես նկատում է Ջ. Ալեքսիձեն, Ուխտանեսն իր պատմության որոշ գլուխներ ձգտել է գրել ռիթմիկ արձակով՝ դրսևորելով ալիտերացիայի զգալի ունակություն: Այդ ամենը պատմիչն արել է իր երկը պատվիրողի գրական-գեղարվեստական բարձր ճաշակը բավարարելու ձգտումով: Ջ. Ալեքսիձեն Գրիգորի ոճին Ուխտանեսի երկի լեզվաոճական հարազատության, մոտիկության, նմանարկման որպես օրինակ բերում է հետևյալ հատվածները, «խոհեմ և խորհրդական մտաւղ իւրովք խորհուրդ արեալ՝ խափանեաց զխարդախութիւն խորհրդոցն թիւրեալ եպիսկոպոսացն», «...չարանդակ և չարահնար չար մտածմունս չարիմաց առն, քովանդակ ուսուցանեն քեզ թուղթք իւր և բանք»:

ե) «...աղաչեմ զկենաց տուողն, զի մշտնջենաւոր ձգեսցես զԺամանակս կենաց քոց, որքան հաճելի է Ստեղծչին և մեզ խնդրելի, և եկեղեցւոյ Աստուծոյ առ ի լրումն պսակաւոր նորոգման մախթելի է, գոր ասեմս, եթէ եղիցի եղիցի»: Այստեղ պատմիչն իր պատվիրատուին գնահատում և արժևորում է որպէս խոշոր եկեղեցական-հասարակական գործչի, որի հետ է կապում հայ եկեղեցու նորոգման և ամրապնդման հույսերը: Այս հատվածը որոշ իմաստնային աղերս ունի Գրիգոր Նարեկացու գործունեության գնահատման մասին «Հայամաւորքի» այն հատվածի հետ, որտեղ ասվում է. «... Եւ զի ջան և փոյթ էր սրբոյն վասն միաբանութեան եկեղեցեաց, զի զեղծեալ. և անփոյթ արարեալ կարգս եկեղեցւոյ սրբոյ, ի ծուլից և ի մարմնասէր առաջնորդաց. կամեր հաստատել՝ և վերստին նորոգել»:

զ) Եվ, վերջապէս, վրաց իրականության նկատմամբ որոշակի հետաքրքրություն դրսևորել է Գրիգոր Նարեկացին (տես՝ Չամչյան), այնպէս որ, ավելի շուտ հենց Գրիգորն է հայ-վրաց բաժանման պատմության նախաձեռնողը:

* * *

Ընդունելով, որ Գրիգոր Նարեկացին է եղել Ուխտանեսի թղթակիցը, որ նրանք համախոհներ են եղել, որ 987 թվին Արգինայում հանդիպել և գործնական զրույց են ունեցել, գուցեև բավարարվեինք այդքանով, եթէ ինքնաբերաբար չծագեին հետևյալ հարցերը:

1) Ինչո՞ւ, այնուամենայնիվ, չի հիշատակվում, չի նշվում Ուխտանեսի իր պատվիրատուի անունը, ինչո՞ւ է խուսափում բացեիքաց նրա անունը տալուց, թէև այդքան շատ է պանծացնում, մեծարում և բավականաչափ տեղեկություն է տալիս նրա

անձնավորության մասին, նրա մտավոր ունակությունների, բանաստեղծական շնորհքի մասին և այլն:

2) Պակաս կարևոր չէ պարզել այն հարցը, թե ինչո՞ւ չի նշում պատմագիրը իրենց հանդիպման տարեթիվը, թեև հիշատակում է հանդիպման տարվա եղանակը, ամիսը, ամսաթիվը, այն, թե շաբաթվա որ օրն էր և անգամ՝ ժամը:

3) Վերջապես, ամենագլխավորը. ինչո՞ւ Ուխտանեսը նախաբանում չի խոսում Նարեկացու՝ Արգինա՝ Խաչիկ կաթողիկոսի մոտ նման երկար ճանապարհորդության բուն պատճառի մասին, որովհետև պարզ երևում է, որ Նարեկացին հազիվ թե Արգինա գնար հասներ միայն և միայն նրա համար, որ հանդիպեր Ուխտանեսին ու առաջարկեր նրան գրել «Պատմությունը»:

Այս հարցերը պարզելու համար անհրաժեշտ է Նարեկացու Արգինա գնալու և իր հետ երկաբնակների դեմ գրած «Հաւատարմատ» երկը տանելու մասին տեղեկությունը դիտել, քննել 10-րդ դարի երկրորդ կեսին սոցիալ-քաղաքական և գաղափարախոսական պայքարի ֆոնի վրա՝ համադրելով, հարաբերելով մեծ մտածողի, հանճարեղ բանաստեղծի կյանքին ու գործունեությանը վերաբերող կցկտուր տեղեկությունները 10-րդ դարի 80-ական թվականների կեսերի եկեղեցա-քաղաքական իրադարձություններին:

Չիշյալ ժամանակամիջոցում հայ եկեղեցու դիրքերը նեղում էին հարևան քաղկեդոնական եկեղեցիները: Եկեղեցադավանաբանական պայքարը թեժանում է Խաչիկ Ա կաթողիկոսի ժամանակներում, երբ գործը հասնում է բռնություններին. «Եւ աւուրս սորա էին վարդապետքն Յովհաննէս՝ խաչակիրն Քրիստոսի, որ տկար բանիւ և մեծ գիտութեամբ բացահայտէր զգիտութիւն գրոց սրբոց: Սա մեռաւ ի մոլեալ ազգէն Վրաց և թաղեցաւ ի վանս, որ Ակսիգոմս ասի, ի Բասեան գավառի, և. այժմ սուրբ Յովհանն առ ստորոտով լերինն

ծիրանեաց...»¹: Նույն պատմիչը խոսում է հայադավան եկեղեցական գործիչների հալածանքների մասին Մեբաստիայում և Բյուզանդիայի հայաշատ այլ քաղաքներում: Եթե այդ փաստերին համադրենք Ուխտանեսի տեղեկությունն այն մասին, որ, հայոց Սմբատ Բ թագավորի հրամանով, եպիսկոպոսների, իշխանների և ուրիշ մեծամեծների միջամտությամբ ու օրհնությամբ միայն հնարավոր եղավ հաղթահարել ամեն տեսակի սպառնալիքները իր հասցեին և սկսելու իր «Պատմությունը» գրել, ապա շատ հավանական է թվում, որ հենց 987 թվականին Արգինայում տեղի ունեցած ժողովում, ուր հրավիրված են եղել նաև Սմբատ թագավորն ու իշխանները, պատմիչը իր «Պատմությունը» (կամ դրա երկրորդ և երրորդ հատվածները) գրելու պաշտոնական թույլտվություն է ստացել:

Այսպես ուրեմն. մեր կարծիքով, Գր. Նարեկացու և Ուխտանեսի հանդիպումը տեղի է ունեցել 987 թվի Տրե ամսի 11ին, Արգինայում, Խաչիկ Արշարունի կաթողիկոսի մոտ հրավիրված եկեղեցական ժողովի կապակցությամբ: Մի ժողով, ուր հրավիրվել էր Գր. Նարեկացին հավատաքննության համար: Կարելի է ենթադրել, որ հենց դրա համար էլ Ուխտանեսը խորհրդավոր ձևով լռության է մատնում այդ տհաճ դեպքը, իր պատմության նախաբանում չի նշում իր պատվիրատուի անունը անգամ՝ չի խոսում Արգինայում իրենց հանդիպման բուն պատճառի մասին:

Ո՞րն է, սակայն, «Հաւատարմատ» վերնագրով այն երկը, որը Նարեկացին տարել է Արգինա: Հայ մատենագրությանը Գրիգոր Նարեկացու անունով նման երկ հայտնի չէ: Բայց Նարեկացու Մատյանի վիճելի գլուխների ամբողջությունը, որ մենք պայմանականորեն «Հաւատոյ սահմանք» անվանեցինք, իր

¹ Ասողիկ, պատմութիւն, էջ 184:

բովանդակությամբ և հակաաղանդավորական ուղղվածությամբ, թերևս կարող էր Արգինա տարվել «Հաւատարմատ» վերնագրի տակ:

Ամփոփենք ողջ ասվածը: Ըստ առաջարկվող վարկածի. Ուխտանեսի պատվիրատուն եղել է ոչ թե Անանիա Նարեկացին, այլ Գր. Նարեկացին, որի հետ էլ հանդիպել է Ուխտանեսը Արգինայում 987 թվականին: Այդ հանդիպումը պատահական բնույթ չի կրել. Գրիգորը գնացել էր Արգինա՝ իրեն դատելու համար գումարված ժողովին մասնակցելու: Որպես իր ուղղադավանության ապացույց, Գր. Նարեկացին իր հետ Արգինա է տարել «Հաւատարմատ» վերնագրով մի երկ՝ գրված ընդդեմ հերձվածողականների: Այդ աշխատությունը կարող էր լինել Նարեկացու մատյանի վիճելի գլուխների ամբողջությունը:

Անվանի մատենագետ Ն. Պողոսյանը իր «Հայ գրողներ, Ե-Ժ է դար» աշխատության մեջ հիշատակում է Երուսաղեմի հայկական ձեռագրերի մատենադարանում պահվող՝ Անանիա Նարեկացու «Ընդդեմ երկաբնակաց» վերնագրով մի ձեռագիր¹: Իսկ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում պահպանվել է Սամվել Կամրջաձորեցու «Տոնապատճառի» ամբողջական եզակի ձեռագիրը, որից ժամանակին Մ. Չամչյանն ու Ղ. Ալիշանը Անանիա Նարեկացու մասին հետաքրքիր տեղեկություններ են քաղել: Այս երկու և ուրիշ աղբյուրների հետագա ուսումնասիրությունը գուցե վերջնական լույս սփռի Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» վերնագրով առանձին երկ ունենալու կամ չունենալու, մեր այս վարկածի սխալ կամ ճիշտ լինելու վրա:

Սակայն, անկախ այս վարկածից, պետք է ընդունել, այն փաստի ճշմարիտ լինելը, որ Նարեկացու դատը եղել է Անիում կամ

¹ Ն. Պողոսյան «Հայ գրողներ, Ե-Ժ է դար», Երուսաղեմ, 1971:

Արգինայում 987 թվականին, ուր և Նարեկացին արդարացել է իր երկու ջատագովական գրվածքներով:

Գրիգոր Նարեկացու «Հավատարմատ» երկը

Բան ԼԳ

ՎԵՐՄՏԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՄԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ
Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽԱԻՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա

Արդ, զյարմարութիւն պաշտաման բանիս
Ի խայրեաց հոգոյս քեզ նուիրելոյ, արհնեալ բարեգութ,
Կցորդելով ընդ ինկազգեստիցն զուգամասնապէս`
Խառնեցես ի յանուշութիւն կազմութեան
Իւղոյն Սարիամու կնոջ բարեպաշտի,
Յոր հաւասարեալ նոյնութեամբ ընդ երջանիկ պոռնկացն`
Ի քէն ընկալելոց յաւետահրաշ յարգանաւք,
Պարարեսցիս մեծապէս իմովս բանիւ նուաստիւ`
Ընկալեալ յանհաս եւ ի բարեբանեալդ գլուխ բարձրելոյդ,
Անկշտամբելի ի բամբասանաց սաղմոսին`
Մի աւծցէ զտերեւ ոստոց գագաթան իւղ մեղաւորին:

Բ

Այլ արասցես զաւրանալ կրկին յաճախութեամբ բուրման
Խոստովանութեան այսր մատենի` ի բազումս ազդեալ,
Համասփիւռ, ամենատարած եւ աշխարհալիբ տանն տեսակաւ,
Ըստ արիինակի համեմատութեան նոցայն յիշատակի:

Քանզի դու նոյն Տէր զգաստացուցիչ
Նախնի չարախորհից կանանց մեղաւորաց,
Որոց առակեալ զմարգարէին կերպարան՝
Քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր,
Անդուստ առ սոսին անճառ ներգործութեամբ՝
Ի յիս վերաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն.
Ընդ անասնական գարւոյն կերակրոյ՝
Զբազմահամբար պտուղ ցորենոյդ կենացդ հացի,
Ընդ ապականացու արծաթոյն՝ զարքունականդ պատկեր,
Ընդ յիմարարար թմբրութեան զինւոյն՝ զբաժակդ արեան
արարչիդ,
Ընդ իւղոյն առելոյ ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն՝
Զաւծումն շնորհին առ իս դարձելոյ,
Ընդ զերծման զլիաշուք կտաւոյն՝ զանապականութեան
վերարկուն,
Ապարանջանին պճնութեամբ՝ զթռիչս բարեմասնութեան,
Աւրինին եւ Աւետարանաւն՝ հանդերձ գործնական
առաքինութեամբն,
Ընդ ունկանն զնդի վայելչականն զարդու՝
Զանստուեր յիշատակ տէրունականդ ձայնի,
Ընդ քայոս պերճութեան լանջացն՝
Զյոզնահաւաք աւանդս ուղղութեան քոյինակրան լծոյդ
քաղցրութեան:

Գ

Բայց զի՞ է յայտոսիկ ինձ պարծել
Եւ ոչ վերստին ի սոյն պատկառել.
Այլ յայլ արինակ փոխեալ զմատեան մաղթանաց այսր
ողբերգութեան,
Որ ինչ ինձ է յարմարաւոր,
Ամենայնի հատուցից զպատիժ պարտուցս իմոց մեղանաց,
Ի մարգարէիցն տառից բերեալ համառաւոսս՝
Ի սոյն յարկ մուծից սաստիկ դատախազ՝
Ընդ ողբոց նոցին լծակցեալ,

Քան թե ընդ բերկրումն նոցա պարեալ,
Յորս հառաչանս, ձայնս հեծութեան, բողոքս բարկութեան,
Նախատինս խորտակման, լալումն կարեւոր:
Այլ մեծիդ Աստուծոյ գթութիւն ամենաժաման
Կանուխ ազդեցաւ յիմ յուսատրութիւն,
Առ որս` զղջմունս, խոստովանութիւնս,
Աւետիս, պարգեւս, լուսոյ երեւմունս,
Խրախոյսս աստուածայինս, փառաց ժառանգութիւնս,
Հրաշից յայտնութիւնս, սքանչելեաց տեսութիւնս,
Յորոց ոմանք յոյս ընձեռեն,
Եւ ոմանք վիատութիւնս բագումս մատուցանեն,
Յորս ես կամաւ կործանեալ` կորստեանն վիճակեցայ:
Դ

Ձի եթէ զգեստ Աստուծոյ զվարագորին պատրուակ ասաց Եզեկիէլ,
Յորում արար ժողովուրդն կուռս կարկատունս,
Որով պոռնկել ասէ ի նոսա,-
Իսկ ո՞րքան պատիժ անմաքրութեանս եղիցի`
ԶԱստուած զզեցողիս ներքոյ եւ արտաքոյ:
Զարմանամ, թէ զիա՞րդ ոչ կիզում,
Հիանամ, թէ ի՞բր ոչ այրիմ,
Ապշիմ, թէ ո՞րպէս ոչ յափշտակիմ`
Տանջեալ, լքեալ, չարչարեալ, ջաղխեալ,
Մանրեալ, խորտակեալ, կտրեալ, բաժանեալ
Ի յարինակէ ժանեաց կորուսչին, ըստ Գրոյն:
Այլ այս միայն է պահեցեալ ինձ
Նշոյլ յիշատակի փրկութեան յուսոյ,
Ձի քրիստոսեան Աւետարանն կեանս է ամենեւին,
Ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ,
Որով առ մեղանսն` դարձն, առ պարտիսն` շնորհն,
Առ եղծումն` նորոգութիւնն, առ անաւրէնութիւնն` քաւութիւնն,
Առ վերն բժշկութիւնն, առ վտանգն` անդորրութիւնն,
Առ պատիժն` ներումն, առ պատերազմն` հանդարտանալն,
Առ հուրն` անձրեւն, առ պատուհասն` պարգեւն,

Առ ակնկալութիւն սատակմանն՝ ձիրն,
Առ գործարան մահուն՝ կենացն ազատութիւն:

Ե

Եւ զի՞նչ է ինձ գայսքանեաց յիշմանց ի թիւ արկանել,
Եւ ոչ զանճառելիսն աստանար դասել:
Յիշատակաւ Հաւրն բարձրելոյ՝ յՈրդին կցորդութիւն,
Յանուն միածնին՝ առ Հայրն ընտանութիւն,
Սոցին ակնարկութեամբ՝ ընդ Հոգւոյն հաղորդութիւն,
Խաչին փրկանք, բանին սփոփութիւն,
Բարութք վարձ կամացս՝ առ կշռութիւն գիտողին,
Աւագանն կենդանարար՝ հաշտութեանն միջնորդութիւն,
Եւ այլք ամենայնք անթիւք բարիք ի բարերարէն բարդեցեալք,
Ազատք ի հարկէ, արձակք ի լծոյ,
Իշխանականք, եւ ոչ իշխեցեալք:

Այսոքիկ են, որ ինձ ի մէջ դառնութեանս մահու
Կեանս անտարակոյսս աւետարանեն.

Քանզի եթէ ոչ գայսոսիկ ունէի,

Կանխաւ արդէւք կորուսեալ էի իսկ եւ իսկ, ըստ բանի երգողին:

Ոչ փոքրկութեամբ Որդոյ զՀայր փառաւորեմ,
Ոչ նուաստութեամբ Հոգւոյ զՈրդի նախադասեմ,
Համափառ ունիմ զերեսեան եւ նոյն արարչութեամբ:
Քանզի եւ ի դէմս Հոգւոյն Սրբոյ այս են աղաչանք,
Նախընծայ սկզբան պատարագին,
Յորում գառնդ երկնաւոր զենանի, գայս աղալթեցի:

Զ

Ամենակալ, բարերար, մարդասէր Աստուած բոլորից,
Յարինող երեւութից եւ աներեւութից,
Փրկող եւ հաստատող, ինձամող եւ խաղաղարար, Հաւր հզաւր
Հոգի,
Հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան՝
Յանդիման եղեալ քեզ՝ ահաւորիդ:
Մատչիմք մեծաւ դողութեամբ, սաստիկ երկիւղիւ

Մատուցանել նախ զբանականս զայս պատարագ քում անգնին
 զարութեանդ,
 Իբր աթոռակցի, փառակցի եւ արարչակցի հայրենի անկապուտ
 պատուոյդ,
 Եւ քննողի ծածկութեան խորոց խորհրդոց
 Ամենակատար կամաց Հարդ Էմմանուէլի՝
 Զքեզ Առաքչի, Փրկչի եւ կենդանատուի եւ Արարչի ամենայնի:
 Ի ձեռն քո ծանուցաւ մեզ
 Երբեակ անձնաւորութիւն միասնական աստուածութեանդ,
 Յորոց մի եւ դու ճանաչիս, անհաս:
 Քեւ եւ ի ձեռն քո առաջինքն՝
 Նահապետական տոհմին շառաւիղք, տեսանողք
 անուանակոչեալք,
 Զանցեալսն եւ զգալոցսն, զեղեալսն եւ զոչ գոյացեալսն
 Անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին:
 Ոգի Աստուծոյ քարոզեալ զքեզ Մովսեսի,
 Որ ի գնալն քո ի վերայ ջրոյն, անպարագիր զարութիւն,
 Ահեղ շրջարկութեամբ տածողականաւ, թեւապարփակ
 պաշտպանողաւրէն,
 Գթասիրեալ ի ծնունդս նորոգս, զաւագանին խորհուրդ ծանուցեր:
 Յոր կերպարան արինակութեան,
 Նախ քան զկատուցանելն զլոյծոյ մածուած վերջնում վարագուրիդ,
 Յարինեցեր, կարող տիրապէս, զբովանդակ բնութիւնս
 Ամենից բնաւից բոլորից գոյից, ամենայն էից՝ յանէից:
 Քեւ ստեղծանին ի նորոգութիւն յարութեան
 Ամենայն եղեալքս առ ի քէն յայնմ ժամանակի,
 Որ է ար վերջին այսմ կենցաղի
 Եւ ար առաջին՝ երկրին կենդանեաց:
 Քեզ հնագանդեցաւ միութեամբ կամացն, որպէս Հարն իւրում,
 Ազգակիցն քո՝ էակիցն Հար անդրանիկն Որդի՝ մերովս կերպի:
 Զքեզ աւետարանեաց ճշմարիտ Աստուած՝
 Հաւասար եւ համագոյ Հարն իւր հզարի,
 Զառ ի քեզ հայիոյութիւնն անքաւելի քարոզեաց

Եւ, իբր զաստուածամարտից, զքո հետեւընցն
Չարաբանական բերանս կարկեաց եւ զիւրն շնորհեաց
Արդարն եւ անարատն, գտիչն ամենայնի,
Որ վասն մեղաց մերոց մատնեցաւ
Եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ:
Նմա փափոք ի ձեռն քո, եւ քեզ բարեբանութիւն
Ընդ Հաւր ամենակալի յաւիտեանս յաւիտենից:
Ամէն:

Է

Դարձեալ կրկնեցի ի նոյն կարգ բանի,
Մինչեւ վստահութիւնն լուսոյ հրաշապէս յայտնեցի ազդեալ՝
Աւետարանել վերստին զկրկին խաղաղութին:
Աղաչեմք եւ աղերսեմք արտասուալից հառաչմամբ
Յամենայն անձնէ զփառատրեալ արարչութիւնդ
Անեղծ եւ անստեղծ, անժամանակ Հոգւոյդ զթածի,
Որ բարեխաւսդ եւ վասն մեր յանմոռնչ հեծութիւնս առ ողորմածդ
Հայր,
Որ գտորբսն պահես եւ զմեղուցեալսն մաքրես եւ տաճարս
կազմես
Կենդանի եւ կեցուցիչ կամաց բարձրեալդ Հաւր:
Արդ ազատեա զմեզ յամենայն անմաքուր գործոց,
Որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան,
Եւ մի շիջիցին առ ի մենջ լուսոյդ շնորհաց փայլմունք
Ի տեսականացս աչաց իմաստից,
Վասն զի զքեզ ուսաք միանալ ի մեզ
Ի ձեռն աղաթից եւ ընտիր վարուց խնկելոց:
Եւ քանզի մինդ յԵրրորդութենէդ պատարագի, եւ միւսդ ընդունի՝
Հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ,
Իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս
Եւ յարդարեցես զմեզ աւթեվանս պատուականս ամենայն
պատրաստութեամբ՝
Ի վայելումն ճաշակման երկնաւոր գառնիդ,
Առանց պատժոց դատապարտութեան ընդունել

Ձայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան:
Եւ հալէսցի ի հրոյս յայսմանէ գայթակղութիւնս մեր,
Որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն
Ի ձեռն ունելեացն մատուցման,
Ձի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն,
Որպէս Որդուվդ Աստուծոյ՝ Հաւրդ քաղցրութիւն,
Որ զանառակ որդին մերձեցոյց ի հայրենի ժառանգութիւնն,
Եւ զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն
Երանութեան:

Ը

Այո, այո, եւ ես մի եմ ի նոցանէ,
Եւ զիս ընկալ ընդ նոսին՝
Իբր մարդասիրութեան կարատեալ մեծի,
Շնորհաւք քո ապրեալ, զարեամբդ Քրիստոսի ստացեալս,
Ձի յայսմ ամենայնի յամենայնի ծանիցի քո աստուածութիւնդ՝
Ընդ Հաւր փառաւորեալ համապատուաբար
Ի մի կամս եւ ի մի իշխանութիւն գովութեան:
Ձի քո է գթութիւն եւ կարողութիւն եւ մարդասիրութիւն,
Ձաւրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից:
Ամէն:

Բան ԼԴ

ՎԵՐՍՏԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՅ ԲԱՆԻ
Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻՑ ԽԱԻՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ
Ա

Արդ, առ այսոքիկ թշուառացեալ շնչոյս իմոյ իղձք եւ առ քեզ
դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակէս բանիւ զամենայն,
Աստուած, զոր ի նախնին ճառեալ՝ եւ յերկրորդումս ցուցից: Իսկ
յանդիմանութիւնս գրաբանականս՝ ի կոյտս բազմութեան ազգաց
եւ թարգմանութիւնս ժողովրդոց, զայս արգահատութիւնս
մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն
գոհաբանութիւնք:

Բ

Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազար շոգոյդ հզարի, առաքեա զցաւդ քաղցրութեան քոյ եւ բարեգործեա ի յանձին եւ յիշխանական ազգման զգայութեան զամենայից շնորհ բազմապարգեւ քո ողորմութեան: Եւ հերկեա զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս՝ յընդունակութիւն արգասեաց հոգեւոր սերմանդ: Քում ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զամենայն պարգեւս ի մեզ ծաղուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համերս եւ բանաս զկեալ եւ աճեցեալ, որ ձեռնադրես առաքեալս, լցուցանես մարգարես, փակեալ ականջս խլից, որպէս ազգակիցն քո՝ էակիցն Հաւր անդրանիկն Որդի, քոյին գործակցութեամբ ներգործելով զայս ամենայն, քարոզեաց զքեզ Աստուած հաւասարակից իսկութեանդ Հաւր: Շնորհեա եւ ինձ՝ մեղաւորիս խաւսել համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց Աւետարանիդ՝ հետեւել արագաթոյիչ ընթացիւք մտաց ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց: Եւ ի մատչել իմ ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի՝ նախաժամանեցէ առ իս գթութիւն քո՝ խաւսելով յիս զարժանն եւ զպիտանիսն եւ զհաճոյսն քո ի ժամանակի, ի փառս եւ ի գովեստ աստուածութեանդ քոյ եւ ի լրութիւն շինութեան կաթողիկէ եկեղեցւոյ: Կարկառեա ի վերայ իմ զամենամերձ աջ քո եւ զաւրացո զիս շնորհաւք գթութեանդ քոյ, փարատեա ի մտաց իմոց զմէզ մթութեան մոռացութեան՝ ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստիցս ի կենցաղոյս երկրէ ի բարձունս: Լուսաւորեա ի յիս վերստին զձագումն անստուեր հրաշից գիտութեան աստուածութեանդ քոյ, հզար, արժանի լինել առնել եւ ուսուցանել՝ յարինակ բարեաց աստուածասեր լսողաց: Եւ քեզ ամենայն փափոք յամենայնի՝ ընդ Հաւրդ ամենակալի եւ ընդ Որդւոյդ միաձնի եւ բարերարի այժմ եւ յանվախձան յաւիտեանս: Ամէն:

Գ

Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ Սուրբ Երրորդութեանն զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ:

Խոստովանիմք եւ դաւանեմք, պաշտեմք եւ երկրպագեմք
զգուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեանն.
աստուածութիւն անճառ, միշտ բարի, նոյնագոյ,
հաւասարապատիւ, անհաս իմաստից թեւոց սլացման, ի վեր քան
զարինակ եւ անդր քան զնմանութիւն, գերազանց գոլով սահմանի
անպարագիր բացարձակութեամբ, յառաջ քան զհիմն յաւիտեանցս
անտարրափակ էութեանց, ստեղծականացս կարգաց,
արհնաբանութեամբ անթարգմանելեալ, ամենահարուստ
մեծութեամբ յաւետ պսակելալ. հաստիչ ժամանակաց եւ որ ի
ժամանակի են կերպաւորեալք, ինքն պատճառ հանդերձիչ եւ
յարմարապէս յարինիչ տեսականաց եւ աներեւութից. ոչ անուամբ
չափեալ եւ ոչ յորջորջմամբ նշանակեալ, ոչ որակութեամբ
նմանեալ եւ ոչ քանակութեամբ կշռեցեալ, ոչ արինակաւ
ձեւացեալ եւ ոչ որպիսութեամբ ծանուցեալ, ոչ ի թերութենէ
տարածեալ եւ ոչ ի լրմանէ ամփոփեալ, ոչ ուրեք երբեքի գրաւեալ
եւ ոչ ի տեղուջ վայրի երեւեալ:

Դ

Հայր զթութեանց, ունող ամենայնի եւ Աստուած հանուրց, որ
յերկնի եւ որ յերկրի, բաց ի Բանէն միայնոյ, որով զամենայն ինչ
ունի, ստեղծիչ եւ տուիչ շնչոց ամենից, բաց ի Հոգւոյն իսկակցէ,
որով զհամայնն կազմեաց:

Ե

Մինն յերջանկափառ, համազար ահաւորութենէ երիցն
անձնաւորութեանց, խոնարհեալ ի վերուստ` աստուստ ի
ստորինս, որ էրն իսկ ի բնէ անբաժ ի ներքնոցս` անկապուս
մնալով փառացն աթոռոյ եւ անկարաւտ` դիմացն ծնողին սիրոյ,
մտեալ ի սենեակ կուսին արզանդի պարզաբար եւ ելեալ անտի
յաւդաւորաբար մարմին էապէս անորոշելի, անթերի
մարդկութեամբն եւ անպակաս աստուածութեամբն. մի Որդի
Հաւրն միայնոյ եւ միածին անդրանիկ Աստուածամայր Տիրածին
կուսին, Արարիչն յեղականումն մարդ ելով ճշմարիտ սկզբնածին:
Ահա ոչ զկնի եղելոց երկրաստեղծիցս նմանութեան, այլ նոր եւ
չքնաղ, թագաւորաց վեհափառ, որ ոչ ցուցաւ ի դարս եւ ոչ գոյացաւ

ի ժամանակս, անդրանիկ, ըստ սաղմոսողին, քան զամենայն թագաւորս երկրի, անապական խառնութեամբ կերպացեալ զմերս ի մարմնի, ըստ արիւնի հոգւոյ՝ ընդ մարմնոյ, եւ ոսկւոյ՝ ընդ հրոյ, եւ կամ, յայտնապէս իսկ ասել, լուսոյ՝ ընդ աւոյոյ, ոչ փոփոխեալ եւ ոչ անջատեալ:

Ձ

Նոյն ինքն, եկեալ կամաւորութեամբ ի խաչն մահու, իբր զգառն անարատ ի սպանդ վարեցաւ եւ հանդերձեաց զարեղ ինքնիշխանութեամբ զարարածոց իւրոց փրկութիւն. չարչարեալ իսկութեամբ կենդանեալք՝ եղաւ ի շիրմի անորոշելի յաստուածութենէն. եռարեայ թաղմամբն ի դժոխս սանդարամետականացն վիատելոց բանտարգելիցն քարոզեալ ցուցաւ նորոգումն եւ լոյս: Եւ աւարտեալ զոնաւրինականացն զփրկանաւորն զոնտեսութիւն՝ աստուածապէս վերակենցաղեաց, եւ կառավարեալ ի թելս հողմոց, ելեալ ի քերոբէս՝ ամպով անքննութեան ծածկեցաւ. համբարձեալ զեր ի վերոյ ամենայն երկնի՝ նստաւ ճոխութեամբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ Հաւրն հաւասարութեան, յորմէ եւ բնաւ իսկ ոչ մեկուսացաւ՝ անկորուստ առեցելովն եւ աննուագ սեպհականաւրն: Որով եւ եկեցել ի դատաստան հատուցման՝ քննել զծածկեալսն կշռութեամբ չափոյ արդար իրաւանց, որում սպասեմք եւ յոր աղաւթեմք, հաւատացեալք յամենայնի ամենայնիւ ամենակալ տէրութեան նորա, որ արդարեւ մինն է միայն ի միայնոյն՝ ի միոյն փառակցութիւն յաւիտեան երկրպագեալ:

Է

Բարեբանեմք միշտ եւ արինեմք ընդ Որդւոյ եւ Հաւր եւ զՀոգի էութեան նոցին, ամենազաւր, ճշմարիտ, կատարեալ եւ սուրբ, որ յանէից գոյացոյց զբոլոր եղեալքս ամենայն. ինքնագործ, հոմիշխան երկուցն եւս ընդ նմին անեղծ եւ անսահման թագաւորութեան. որ ինչ պատճառն առաջին եւ Բանն ահաւոր նորին ինքնութեան, նոյն ինքն եւ Հոգին բարձրացեալ. բարի ինքնակալ, ամենից բաշխիչ զՀաւրն պարգեւս՝ ի գովեստ անուան փառաց միածնին: Որ ազդեաց յԱրեւսն, շնչեաց ի մարգարէսն, փչմամբ ազգակցին

տպաւորեցաւ յառաքեալսն, կերպիւ աղաւնոյ ցուցաւ ի Յորդանան՝ ի մեծութիւն փառաց եկելոյն, փայլեաց ի գիրս աւանդականաց, արար հանճարեղս, գաւրացոյց իմաստունս, լցոյց վարդապետս, աւծ արքայութիւնս, աւժանդակեաց թագաւորս, ետ վերակացուս, հրամանատրեաց փրկութիւնս, շնորհեաց ձիրս, հանդերձաւորեաց քաւութիւնս, զմկրտեալսս ի մահն Քրիստոսի ի բնակութիւն իւր մաքրագարդեաց. գոր՝ Հայր եւ Որդի, զնոյն եւ Հոգին ներգործեաց, եւ ինքն է Աստուած, խնկեալ տիրապէս ամենայն յամենայնի:

Ը

Քանզի ոչ նախաթուելովն յԵրրորդութեանն որ մեծ ինչ, քան զմիւսն, եւ կամ զկնի անուանիլն՝ նուաստագոյն առ նմանն, եւ կամ ի մինն ասելով՝ խառնակութիւն գոլ դիմացն, եւ կամ յերիցն տրոհումն՝ ուրոյնութիւն ել կամացն: Քանզի անմեծար Հայր ամենայնիւ, եթէ ոչ զԲանն ունիցի ինքեան գաւրութիւն, որպէս ոչ գոլով ընդ նմա Հոգւոյն՝ անհագագոմն եւ անկենդան եւ առ ամենայն հրաման նուագեալ: Իսկ Բանն, եթէ ոչ անուամբ Հարն ծանիցի, որք ոմն եւ կամ լքեալ եւ կամ ի մահացուէ ումեմն ոչէի: Որպէս եւ Հոգին, եթէ ոչ ի պատճառէն նշանակեսցի, ապաշուք ոմն թափառեալ եւ իբր զունչ ինչ անդասելի:

Թ

Այլ եթէ որ հակաճառական բանիւ յաւակնի կապտել զՀայր ի յիւրմէ Բանէն, որ թէ էր երբեմն, յորժամ եւ չէր, եւ անբանութեան բամբասանաւք պատուել վարկանի զվեհին մեծութիւն, եւ կամ ստրկութիւն տացէ բղիտդին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգեւոր, որով այլ իմն գոյութիւն աւտար մուծանել եւ կամ ամբոխումն ինչ այլայլական յանարատ պատիւ միութեան սուրբ Երրորդութեանն,- զայնպիսիսն քարամբք պարսից հաւատոյ բանից, իբր զդժնդակ դէսս դիմամարտիկս գագանականս, հերքեալ ի միջոյ՝ ի բաց հալածեմք, եղեալ ի նգովս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի: Ուստի զսուրբ Երրորդութիւնն փառաւորելով ի նոյն տէրութիւն միակցորդ հաւասարութեան, զուգաձայն սրբաբանութեամբ, հանգունատիպ

հարթութեամբ, արհնեալ եւ փառաւորեալ յերկնի եւ յերկրի, ի ժողովս անդրանկացն եւ յազգս երկրածնացս բանականաց յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ժ

Արդ, զայս գոչումն ծածուկ խորհրդոց՝ կերպաւորելոց յայսմ մատենի, ամենալուր ականջաց մեծիդ Աստուծոյ ընծայեցուցի, սովիմբ սպառազինեալ՝ եւ ապա մտի ի հանդէսն: Այլ ոչ եթէ կարատեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչ չեւ ստեղծեալ էր քո զամենայն՝ նախ քան զլինելն երկնի փառաբանչաւքն անմահից եւ երկրաստեղծս բանաւորաւք, դու քեզն ի քումդ լրութեան փառաւորեալ իսկ էիր,- այլ զի զմերժեալս՝ զիս յարգեսցես, անճատ քաղցրութիւն, ճաշակել զքեզ բանիս հաղորդութեամբ: Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ՝ կենաց կանոնիդ ասել Ադոնայի տէր, եւ զհրամայեալ պատուէրդ ոչ առնել: Որ ինձէն իսկ զիս՝ զոսկեղէն տախտակս խաւսուն, նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ Աստուծոյ, եղծի, որ եւ խորտակելն է իրաւացի, եւ եւ տխրատեսակ մրով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ: Այլ արդ, քանզի բազմաւք պաղատեցայ դրուատաւք խանդաղատականաւք, որ ոչ է գրեալ ի յայս կարգ ձայնի, լուր, բարեգութ, ըստ սմին բանի այնմ ամենայնի: Եղիցի եւ այս աղերս բարբառոյ հայցման աղաւթից յաղեալ ընդ նոսին, թերեւս ի մաքրոց եւ ի կամարարից այս նուէր հացի պանից բաղարջոց՝ իւղով զանգելոց ի սեղան փառացդ քոց մատիցէ:

ԺԱ

Այլ դու, բարերար եւ յամենայնի մարդասէր, Քրիստոսդ մի Աստուծոյ միոյ, հզաւր եւ ամենակալ, որ յաղթես զթութեամբ ինամոց քաղցրութեան քոյ ոչ հասարակականաց միայն մարդկութեանս իմոց գոյակցաց, առ որս յաւէտ է ամբոխութիւն եւ բիրամասնեալ հակառակութիւն, այլ եւ հրեշտակացն անախտականութեան, նաեւ եւս քան զայս՝ սրբասնելոցն անարատութեան, յորոց մի էր եւ Հեղիաս, որոյ ցոյցք խստութեանն ի Քորէր լերինն նշանակեցաւ յերիս արիւնակս՝ ի շարժումն մեծ, ի

հողմն ուժգին, ի հուրն կիզանողական,- իսկ քոյդ հեզութիւն երկայնմտութեան՝ ի հանդարտութիւն մեղմութեան աւոյն քաղցրութեան, քանզի կամաց ողորմութեանց դու միայն ես, ըստ գրեցելումն: Վասն զի թէ եւ հաճոյք գտան մերասերքս առաքինութեամբն յեղանակեալ յայլ նմանութիւն վերնային, սակայն երկրաձինք են եւ նոքա, ընտրեալք ի մարդկանէ: Իսկ դու ոչ ունիս չարանալ, իսկութեամբ բարիդ, յամենայնի արինեալդ, ամենեւին փրկութիւնդ, ամենայնի հանգիստդ, համայնից անդորրութիւնդ, համարէն ախտացելոց դեղ առողջութեան, աղբիւր ջրոյ կենդանոյ, ըստ Երեմիայ:

ԺԲ

Ղարձ առ իս եւ ողորմեա ինձ, որ այնքան ծարաւես, պասքիս, կարաւոդ Աստուած, իմում փրկութեան, մինչ զի զուարթնոցն երկնից անմահից արինաբանողաց բան իմն ընծայեցեր մարդկարէն փրկական քահանայապէս եւ քաւչապետաբար՝ անեղծական յարակայութեամբ մշտնջենաւոր պաղատանս արինեալդ քո գթութեան ի մերոց դիմաց կենցաղականաց՝ վասն իմ լքելոյս հաշտութեան մաղթել՝ ողորմեա Երուսաղեմի, որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութեան առ հրեշտակականն թափուր տեղի ստորանկեցելոյ ի ձեռն մարդկան՝ քո կցորդութեամբ աւետարանեալ առակաւ այս արինականս Երուսաղեմի:

ԺԳ

Արդարեւ լուար, բարեգութ, անսացեր, թագաւոր,
Ունկնդրեցեր, կեանք եւ յոյս, ի միտ առեր, երկնաւոր,
Յարգեցեր, հզաւր, նկատեցեր, ծածկագէտ, տեսեր, ինամակալ,
Կարեկցեցեր, անպատում, խոնարհեցար միշտ բարձրեալ,
Նուաստացար, ահաւոր, յայտնեցար, անձառ,
Ամփոփեցար, անսահման, քանակեցար, անքնին,
Մածար, ճառագայթ, մարդացար, անմարմին,
Շաւշափեցար, անքանակ, կերպաւորեցար, անորակ,
Լցեր իսկապէս զաղաչողացն բաղձանս:

Ղու իսկ եղեր թշուառացելոյս՝ ինձ, ձայնիւ զուարթնոցն,

Բարի բարեխաւս, միջնորդ կենդանի,
Պատարագ անմահ, սպանդ անվախճան,
Նուէր մաքրութեան, ողջակէզ անծախ, բաժակ անսպառ:
Ահա, ողորմած, մարդասէր, աւրինեալ,
Միշտ կատարեսցես առ մեղուցելոյս զբարեբաստութիւն
Կամաց քոց կենդանատուաց, գովեալ երկայնամիտ:
Եւ քեզ վայել է փառք յաւիտեանս:
Ամէն:

Բան ՀԵ

ՎԵՐՄՍԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ
ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ
Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻՑ ԽԱԻՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ
Ա

Եւ արդ, ընկղմեալ, զմայլեալ եւ իսպառ ծածկեալ ի յանճառութենէ
առաւելութեան բազմամասնեայ յաճախութեան մեծիդ երախտեաց,
որ ամէնառատ լրմամբ աննուազելեալ յաջմէ եւ յահեկէ, ի դիմաց
եւ ի թիկանց համբարեալ կան անբաւութիւնք՝ մատուցանեմ,
ընծայեմ դարձեալ աստանաւր աւանդ գովեստի դաւանման
ճշմարտականի: Չի որպէս երբեմն հերձուածականին
չարափառութեամբ, ամենապատիրն խաբէութեամբ նենգողին
կարթի հատուածեալ ի բաց հերքեցայ՝ ելեալ ի դրախտէն, արդ,
միաւորականաւս այսու ուղիդ ամբձութեամբ ի յաւանդ իսկապէս
շնորհի անդրէն միւսանգամ համբարձեալ սովիմբ, ի թոխս թեւոց
լուսոյ ահա յերկինս ժամանեցից հետեւեալ: Այլ քանզի յարգանդէն,
յորում յղացայ՝ հոգեւոր երկամբք ծնիցեալ, զմեծ եւ զերջանիկ
դշխոյ անարատ՝ ամենից կուսից իսկուհի, զպանծալի մայրն իմ
գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յայսմ
մատենի, զի ծանիցի, ցուցցի եւ այլոց եւս ապագայիցն ազգաց
պատմեսցի որքանութիւն փառաց խնկելոյն՝ արժանապէս
պաշտմամբ պատուեալ իբր մաքուր մարմին ընդ զլիտոյ
մարդեղութեան Բանին Աստուծոյ՝ ի յիշատակ ճառիս հաւատոյ
Երրորդութեանն դաւանութեան:

Եւ արդ, ի յայս արհնակ հոգենկար պատկերի բանի, որ զխորանէս լուսոյ յարմարի, ընկալ զիս, գթած, արհնեալ, քաւեցեալ եւ սրբեալ ի սմին: Հան սովաւ ի հոգւոյս զնախատինս մեղացս, անմեղս եւ անբիծս ընդ հովանեաւ սորին բազմեցո, յաւել զտկարս ի տունն Դաւթի եւ անդուստ փոխեալ ի տունդ Աստուծոյ, ըստ մարգարէին ձայնի, որ ի քեզ, Յիսուս, ակնարկի: Մի սոսկ զմտիցն եւ մի անաւգուտ զելիցն հետեւութիւն արասցես: Մի զհաւատոյս ջերմութիւն ցուրտ համարեցիս եւ մի զհամբոյր ողջունիս անկարգ ինչ վարկանեցիս: Մի զպաշտաւնն ապաշնորհ գրեցես եւ մի զերկրպագութիւնն անխորհուրդ լքցես: Մի անպտուղ լիցի տեսականութիւն պատկերին, եւ մի աննշոյլ՝ կերպարանին սքանչելութիւն: Մի անհուր ողջակիզին սպանդ մոռացի, եւ մի պատարագ ուխտի այս ճառի արտաքոյ ցրեցի: Մի ճաշակո լուսոյ ինձ մահու լիցի, եւ մի բաժակ քո կողիցդ արեան ի դատապարտութիւն եղիցի:

Գ

Աղաչեմ զքեզ, Տէր Յիսուս, միդ յերթենէդ, որով զգիտութիւն Հաւր քոյ եւ Հոգւոյդ Սրբոյ ճաշակեալ ծանեաք, քանզի ի քէն իսկ վարդապետեալ զամենապարգէ կարգս եկեղեցւոյ, ի սմին աղաթանուէր լուսարան կենաց փրկութեան բարեաց, տարածեալ զսիրտս ձեռաց համբարձմամբ՝ զայս կնդրուկ բանի բնակողիդ ի սմա, տիրողիդ բնաւից երեքսրբենիդ մատուցեալ, յաւեժ ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեշնորհութեան:

Դ

Փառաւորեմք վերաձայնեալ նուագաւք արհնութեան երգոց ի հաւատ պաշտաման բանի զբարեհրաման պատճառն եղելոց՝ զԵրրորդութիւնն անսկիզբն, անհամեմատ բարձրութեամբ, անհասական խորհրդոց եւ անըմբռնելի իմաստից, անզննելի զգայութեանց եւ անբերելի եղելոց, քանակութիւն վերնականն երկնի եւ անսահման ներքնային խորոց, լրութիւն սպառմանց եւ նախադրութիւն սկզբանց, մի՝ յերից անշփոթ կերպից, եւ երիս՝ ի միոյ անհատուածելի իսկութեանց, ի վեր քան զմտաց անարգելութիւն՝ յարածգեալ ամենայն ուրեք բովանդակ:

Անփոփոխ բարի, անասանելի ուղղութիւն, անխառն կերպարան սիրոյ, մեծութիւն անյաջորդ, բարձրութիւն անխոնարհելի, անվատնելի տեսականութիւն, բարեբարութիւն աննուագելի, կամք կայուն, հրաման կենդանի, ակնարկութիւն փրկչական, երանութիւն ճշմարիտ, ակնկալութիւն հաւաստի, խոստումն անստելի, աւանդ արգասաւոր, ստոյգ աւետիս, վերամբարձութիւն անձեռնարկելի: Մի Հայր միայնոյ Որդոյ՝ միական Հոգւովն պատուեալ, ամենահարուստ բարութեամբ, ամենեւին ունայն ի չարէ, արհնաձայն գոհաբանութեամբ, անքնին ներբողիւ գովեալ:

Ե

Մին բարձրեալ ահաւոր անուն՝ համապատիւն կցորդութեանց, անպատումն ազգականութեանց, եռալուսեանն գուգակցութեանց, անյաւելուածն լրականութեանց, ինքնիշխան կամաւորութեամբ պատուասիրեալ առ Հայրն հանգունատիպ՝ գործակցութեամբ Հոգւոյն Սրբութեան խոնարհեալ իջեալ ի յերկնից, աննուագ գլով ընտանի փառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի Աստուածածին կուսին մաքրութեան, յորում աճեցոյց զբոյսն արհնութեան ի լուսասահման անդաստանին անարատութեան, ընդ ամենակատարն էութեան համասնեալ յանանջրպետ միականութիւն, թափանցական խառնութեամբ յաստուածութեանն ոգի բաղկացոյց զգոյութիւն շնչոյս հրաշապէս: Որով անստամբակելի երասանաւ սանձաց կրթութեան գստահակութիւնս ի հանդարտեցոյց, եւ կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծաղիկն պտղոյն կենաց ի ծայրս լրութեան անմահականն տնկոյ, ի մահ վիրաւորեցաւ՝ աստուածութեանն անընդմիջելի ի մերասերն մարմնոյ, որով կենսացոյց զգործին պարտեաց, արարչութեանն իսկութեան ի նմին յաւէտ անբաժանաւրէն ընդ նիւթական մարմնոյն վշտացեալ: Իջեալ ի վայրս խաւարային դժոխոց՝ եհան զկապուտն իւրաստեղծ ի կապանաց աւցտողին եւ, իբր ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ, յինքն նահանջեալ զդիմեցումն մահու, կանգնեցաւ, կենդանացաւ աստուածապէս՝ ելեալ ի յերկրէ հացն կենաց եւ հովիւն հաւտից բանաւորականաց: Հաւատարիմ եղեւ յաշխարհի եւ երեւեցեալ

նոյնութեամբ ամենեւին աննուագելի, որպէս եկն համայն՝ եւ համբարձաւ բովանդակ, բազմեցաւ նստաւ ի գերունակն զահոյս՝ նախնականին պարզութեան արարչական փառաւորութեամբ: Զոր խոստովանիմք Աստուած բարերար եւ Տէր բոլորից, որ դատի զամենայն երկիր արդար ընտրութեամբ յաւուրն մեծի, որ ինքն է սկիզբն եւ ինքն՝ կատարած, նոյն առաջին եւ նոյն առյապապ, անպակաս բովանդակութեամբ թագաւորեալ ի լոյս անմատոյց: Աւրինաբանեմք ընդ Հար եւ Որդւոյ եւ զանբաժանելի բխումն՝ նոցին փառակից Հոգւոյն տէրութեան, որ ստեղծ զբնաւս եւ կենդանածնէ զամենայն, որ անդատին իսկ ի բնէ համապարփակ մթութեան աշխարհակալն միգի շրջէր, նկարէր եւ կերպարանէր ամենունակ ջուրքքն անբաւութեան երկրատարածն ծովու՝ ի կատարումն արդեան խորհրդոյս՝ զսուրբ աւագանն լուսոյ: Նախ արար եւ այժմ գործէ, գոյացոյց եւ միշտ կատարէ արուեստս, սքանչելիս, նախատեսութիւնս սրբասնելոց, ազդմունս աստուածաւրէնս, զարութիւնս զարմանաւորս, մարգարէս, առաքեալս, վարդապետս՝ վարժողս կրթութեան հանճարոյ: Զսրբարանն մատուցման արեանն Քրիստոսի յարդարեաց, քաւութիւնս անձանց, առողջութիւնս մարմնոց ըստ նմանութեան Քրիստոսի ողորմութեամբ հրամայեաց: Մկրտեաց եւ գեր քան զջուր, ինքեան միայն բաւականութեամբ նորոգեաց, լուսաւորեաց: Հանապազ նովին բարեգործութեամբ զարանայ: Վկայեաց միածնին աստուածութեանն ի հոսանսն Յորդանանու, արինակաւ տեսութեան ամպոյ ցուցաւ ձայնիւ Հար ի լերինն Թաբորական: Ի նոյն տիպ նմանութեան հովանի եղեւ Յակոբեան տոհմին ի յելսն Եգիպտոսի, յուղեգնացութիւն զարավարութեանն Մովսեսի՝ հողմով սաստկութեան զփարաւոն ընկղմեաց: Քահանայս կատարագործէ, իմաստունս կազմէ, թագաւորս զարացուցանէ, քաւութիւնս ընձեռէ, կեանս շնորհէ մահացելոց ի նորոգութիւն յարութեանն: Նոյն ինքն է աւծումն մարդացելոյն Աստուծոյ, մշտնջենաւոր հաւասարութեամբ ընդ Հար երկրպագեալ՝ ի պատիւ մեծութեան Որդւոյ, անսահման փառաւորութեամբ արհնեալ յաւիտեանս: Ամէն:

Է

Դաւանեմք ի հաւատ ուղիղ եւ անխոտորնակ անբծութեան՝ համբուրիւ շրթանց ողջունեալ զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝ աստուածային բնակութեան եկեղեցոյս շինուածոյ, որ գերազանց գտաւ եւ երկնի ամենագարդ բարձրութեամբ, որ ի նոցին իսկ յառաքելականացն դասուց հիմնեցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, ի սպասաւորաց բանին պաշտեցաւ: Սկիզբն առեալ կենացս այս գանձու ի վերնայարկն սրահէ, խորհրդակատարն վայրէ, զոր Հոգին Աստուծոյ լցոյց՝ փայլեցուցեալ ի նմա զաւրութիւն յաւուր մեծի Պենտակոստէին. նախ զտունն բարետեսիլ՝ յարինակ սրբութեան կատարման շնորհի այսր եկեղեցոյ կանխամեծար առաւելութեան, յորում ապա եւ ի նմին բնակչացն տուաւ լուսանորոգ բարեփառութիւն: Ուստի արին հզարին Աստուծոյ բաշխեալ մատուցանի յաւետ, քան զՀաբեւիին՝ մահու գուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութեան՝ կենդանութիւն անմահութեան ի սմա ազդելով: Քանզի ոչ է կար զաւրութեան ուրուք ընդ երկնաւ յանդիման արեգական ի սպասաւորութիւն խորհրդոյ այսր ահաւորութեան ձեռնարկել, եթէ ոչ ընդ թելաւք սորին պահեսցի, նա զի ոչ երկնիւք բաւականանայ այս նուէր Տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեղուն արհնութեան ծածկոյթ ունիցի, վասն զի մահու անիծիւք հերքի այր ըստ արինին, որ արտաքոյ խորանի այս վկայութեան զաստուածային պատարագն մատուցանէ, մանաւանդ զի պարտաւոր արեան կոչեսցի, որ ոչ զանձինն արինակ արին յայս նուիրան ընծայեցուցէ: Մի ի սմա լուացումն ի մահն Քրիստոսի, զի մի յանգէտս անարգեալ աստուածութիւնն՝ ի ծանուցելումն զնախնին կրեսցէ: Մի ձեռնադրութիւն ի պատիւ աւծութեան լուսոյն, զի մի յանբծութիւնն խաբէութիւն խառնեսցի: Մի եւ շնորհաւք, քան թէ ապաշխարութեամբ քաւութիւն, զի մի ճշմարտութիւնն կերպարանաւք խորամանկեսցի: Մի յընտրութիւնն ապառնի՝ հաւատ, զի մի սպառնալիք հատուցմանն զրոյցս ինչ աւտար համբաւոյ գրեսցի: Մի երկաքանչիւրոց գոյութեանց մերոց իրաւամբք կշտամբութիւն, զի մի կիսամասնեալ

առ մարդն ներքին եւ առ արտաքին՝ չարի եւ կամ բարւոյ փոխատրութիւնն կարծեսցի՝ յանմահ գաւրութիւն արքայական որդեգրութեանն, զի ընտելութեամբ երկրայնովս առաւելութիւն վերնումն թագաւորութեան յայտնապէս ճշմարտեսցի: Մի յոյս կենդանութեան առ անեղծութիւնն սրբոց, զի աներկեւանութիւն խոստացելոցն ի միտս ունկնդրացն ծանուցեալ հաւատասցի:

Ը
Այս դշխոյ պաշտելի՝ անշնչական եկեղեցի տայ կեանս եւ մահու իշխէ, ըստ արիւնակի աղամեան պտղոյն յարմարապէս ճաշակելի, գերազանց, քան զբանականս, յանշնչութեան հրաշագործէ, մինչ զի կատարումն ընձեռէ եւ նորոգ հաստատէ՝ վերստին նկարեալ ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ: Գրեալ եւս է տեսակ մեծութեան վերնում կամարին սկզբնաւոր յառաջակառոյց, քան զբնակիչս հոգեղինացն ի նմա գաւրութեանցն: Նոր իմն ընծայէ թոյնս մարմնոց ընդ թեթեւութիւնս հոգւոց՝ պատուականին հարստութեամբ գանարգն յարգաւորեալ: Ոչ ինքնակիր մեղաւք զագրանայ, եթէ ոչ ի մարդոց չարաց եւ կամ յանհաւատից կոխիցի: Տիպ իմն է զարմանաւոր, յաղթող իմաստից մերս տեսութեանց, անբանն, ի բանաւորէն կառուցեալ, նմին աւժանդակեալ, իբր վեհագոյն՝ յաւէտ նուաստի: Մեծ է, քան զմարդ, որքան ընտրելոյն Մովսեսի՝ ցուպն յաղթողական, առաւել, քան զբանաւոր, որքան զԱհարոն՝ գաւազանն խորհրդական ծաղկեցեալ. գերազանց, քան զմտաւոր, որչափ զԵղիաս եւ զԵղիսէոս՝ գետահերձ մաշկեակն սքանչելահրաշ փայլեալ արուեստի: Աւգնութիւն պարգեւէ կրկին ամենակատար սրբասնեալ ձեռաց մաքրաբար, քան թէ զինապէս, մարմին նիւթական քարի եւ հողոյ, գոյակից հարազատ զգայականաց եւ սրբոց: Իւր զվէմն անմահ, կենդանի՝ ի կործանումն է եւ ի կանգնումն, որպէս զդատաւորն ամենից հոգւոց հանդիսանայ հրաշապէս ազոմամբ յանէծս եւ յարհնութիւնս, իբրեւ տեսող աներեւութից՝ զոմն հրապարակէ եւ զոմն տածէ, առ ինքն կոչէ, գրեալ յանուանէ՝ իբր զտիրող հրամանատար էիցս: Իբր զլեառն յաւիտենական՝ անհարուածելի է ի դիմամարտից, ըմբռնէ զհոգեւորս՝ իբր զինարադրութիւն մեծին արուեստի, անմեղս եւ

անվրիպությունս ըստ Քրիստոսի հետոցն ընթանայ, բարձր ճոխութեամբ անպատկառաբար համարձակապէս զաւրէն գովելոյ գլուխ ամբառնայ:

Թ

Այնքան մեծ ունի սրբութիւն, մինչ զի գորս ըստ պատկերի Աստուծոյ եղեն՝ կանոնաւ խտրել: Յետ յոգունց ընտրութեանց փորձից թէ համարձակեցի մարդ ոք սխալեալ ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի, այլ ընդ անպատրաստիցն թերութեանց դժուարի, ոչ նզովի, այլ տեղի տայ ոչ գիտողացն զնորհին զչափ, ոչ լքանի ինքեամբ պարտաւոր իւրովն գտեալ, այլ ի մերոց գործոց խրթնանայ, ոչ թողացուցանէ երկիցս մատչել յըմբռնումն ոտիցն կենդանատուաց, ըստ տիրական անճառ խորհրդոյն, ոչ կրկին յաւուր գնոյն ցուցանէ, զի մի անընտրաբար նուիրանն խայտառակեցի: Վշտակցէ կարեաց զաւրապէս՝ իբր անախտակիր ապականութեանց, որ ի մեզ շարժմանց, առանց բարբառոյ տիրապէս հրամանաւ դատի:

Ժ

Նա զի եւ տապան իմն է մաքրական, կրկին երջանկական, եւ հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահապան, ոչ բազմաւք անբանիւք զազանաց դասուք եւ սակաւ մարդկամբ, այլ ընդ երկայնոցս եւ զվերինսն յինքն հաւաքէ, ոչ յալիս խռովութեան բերի, այլ ի բարձրութիւնն երկնի համբառնայ: Իբր զաշակերտ հրահանգեալ Հոգւոյն Աստուծոյ՝ փախչի ի նենգութենէ, ոչ ի բողոք մահու մարմնոյ հարուածոց, այլ ի կենացն աւետիս ըմբռնեալ ածէ, ոչ Նոյի ձեռնարկեալ գործի, այլ հաստողին հրամանաւ շինի, ոչ Մովսէս ընդ Բեւելիէլ, այլ միածինն Աստուծոյ Հոգւովն Սրբով զսա հանդերձէ, ոչ յարաշարժ հանապազափոխ, այլ մշտակատոյց հիմամբ անսասանելեալ զսա հաստատէ: Դարձեալ, իբր զտապանակն անխաւս փայտեղէն մածեալ տախտակաւք, առանց զգայութեան տեսողականաց մեզ առաջնորդէ, որպէս կերպարան անքանակ էին յառաջ հետեւեալ՝ ի հանդերձանս լուսոյն կենաց տեղի պատրաստէ: Ընդ Ոգիելի անդուստ սատակէ, եթէ ոչ խաչապէս յոգի բերիցի, սպանանէ վատնեալ վաղվաղակի

առժամայն, եթէ անասնայինն լծակցութեամբ երկրասիրաբար գետնակոխ սայլիւք, իբր զանաւթ ինչ ձեռնագնին, բարձեալ տանիցի: Ոչ լեզուաւ մարմնոց, այլ բանիւ հրեշտակաց խաւսի, ոչ ունկան գոյականութիւն՝ եւ արագապէս մտառեալ լսէ, ոչ ձայն կերպաւորական բարբառոյ՝ եւ զպատգամս գործոցն Յիսուսի համարէն ազանց պատմեալ հոչակէ, ոչ խաղալէաց շարժականութիւն՝ եւ աստուածայնով իմն կենդանութեան հագագաւ ազդէ: Ոչ ոսկերաց եւ ջլաց յաւդուած՝ եւ երկուք հագարաւք կանգնաւք լայնութեամբ, իբր զգունդն անհամար բարձրեալն Աստուծոյ զկենդանական զարուն գումարտակ հեբրայական վառեալ ամբոխին՝ եւ այժմ ընդ նոսին իբր զանմաքուրս ի սրբութենէ՝ զմանս ախտիւ մեղանաց ջեռեալս հատուածեալ յինքենէ հեռի ուղեկցէ ապրեցելոյն ի տաժանաւոր աղիւսարկութեանցն: Նոյն իսկ էութիւնն Աստուծոյ մարմին եղելոյ անուամբ այս վիմի նշանակեցաւ՝ պատառմամբ կողին զբնաւս արբուցեալ: Ոչ արեան երակաց ընթացք, այլ լուսոյ վերնոյն շառաւիղք թափանցանց միութեամբ զսոյն կենդանացուցեալ նորոգ պաշտպանէ: Ոչ Սողոմոն կամ Ջորաբաբէլ մահկանացուաց ոստիկանութիւն, այլ ամենից ունողին իմաստ զսա զճագրէ: Ոչ աննուիրական, հասարակաճաշակ իւղով առ ի Յակոբայ պարարի, այլ ահաւորին արեամբ եւ փառաւք մեծին աւճանի: Ոչ տուն երկրային նիւթոյ, քան թէ մարմին երկնային լուսոյ Աստուծոյ զսորին որդիս կնքեալ ձեռնադրէ: Ոչ կենցաղոյս յերկրէ յղացմունս, այլ արքայութեանն երկնից ժառանգս կրթէ, զի ծոց իւր գրգեալսն զոգոյն Աբրահամու ընծայեցուցանէ: Փեսայ հարսնութեան սորա՝ Որդին Աստուծոյ կենդանւոյ, արիորդք խնջոյից սորին՝ հայրապետացն զումարք: Մոյն ինքն մոռացումն առնէ այսակիր բարձանցն կռամոլութեան, զի զերկնայնոյն Աստուծոյ ունի զճանաւթութիւն. աստարութիւն է ամենայնիւ դիցն դրաւջելոց, զի ի համարէն քարինս սորա Քրիստոս երկրպագի. քակտումն է յայտնապէս ուրուական ըղձիցն անտառաց, զի ի բնաւից մայրեաց աշխարհի նմանութեամբ կենացն փայտի ի սմա տէրն նուիրի. խորտակումն է համայն դիւապատիր յուրթիցն արձանաց, զի քարն

գովեալ կարկեհան ակամբք եւ վիմարք կենդանեալք այսրէն հաստատի:

ԺԱ

Այս յարկ չքնաղ եւ աստուածընկալ ազատ է միանգամայն յամենուստ ծառայութենէ. ոչ արինակ վերնոյն Սիոնի, քան թէ ճշմարտութիւն նմին ճանաչի. ոչ կռապաշտութեանն կապաւ բազին եւ կամ լծով արինին տեղի պարտաւորութեան, այլ տէրունի բարերարութեանն պարգեւարան ի մէնջ համբուրի. ոչ սասանի երբէք՝ յայլ իմն կերպարան ձեռոյ փոխարկեալ, այլ ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի. սոյն ինքն եւ երկին երկնի յերկրի լուսապայծառ կերպիւ հոչակի: Որպէս չէ առանց Հարն Քրիստոսի, եւ ոչ առանց այսր մար արգանդի յոգի կատարիլ: Անտուն շրջի անբովանդակելին, եթէ ոչ ի սմին տան տաղաւարեցի. ոչ ունի տեղի գլխոյն հանգստեան տէրն բոլորից, եթէ ոչ ի յայս կայարան կենաց մտեալ ազանիցի: Քան ի կամար վերնայինն երկնի՝ ի յայս հիւթաւոր բնակութիւն առաւել պարծի. անբաւութիւն աստուածեան լուսոյն, որպէս գղէմ մարգարէին եւ զարինակս սորին ծածկեցին, որպէս փախեան ի փառաց երեսաց նորին, եւ նմանութեան սորուն՝ որ ի տաճարին՝ ոչ հանդարտեցին,- ի տան հանդիսի մեծի գովեստի, եւ ի բանականացս դասուց խմբեալ նուագի, աստ արհնի կրկին բաղձանալք, քան ի դրախտն վայելչական:

ԺԲ

Այս մայր հոգեւոր, երկնաւոր, լուսաւոր, քան թէ երկրաւոր, շնչաւոր մարմնաւոր, զիս զգուեաց որդի: Կաթն ստեանց սորա արինն Քրիստոսի: Եթէ Աստուածածնին իսկ պատկեր գտոյն ոք գրեցէ, ոչ անարինի: Իբր զնշան խաչին փրկութեան՝ զարութիւնս զարմանազանս եւ արուեստս բազմարինակս կատարեալ հրաշագործէ: Բեմ ահաւորին ատենի ի սմա հաստատեալ տեսանի: Մովաւ խորթաբարոյիցն հերձուածողաց մոլեգնաճառ բերանք կարկին: Ունի եւ քարինս իմն իմանալիս եւ բանաւորականս, որով զգազանամիտս անմաքուրս բացուստ ի բաց տրոհեալ տարագրէ: Ծնանի եւ Աստուածս ոմանս եղանակս՝

պատկերս մաքուրս միոյն Աստուծոյ Քրիստոսի: Ունի եւ գդիրն իւր ընդ արեւելս՝ ի տեղի խոստման բնակութեանն մերոյ առաջնոյ. ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս զգաստեանն Աստուծոյ շաւիղ, զփայլականն առակ տիրական ի դէմս բերեալ՝ մեզ վարդապետէ, զփրկութիւնն ի յելից անտի ծագման արուսեկին քրիստոսեան երեւմանն ի վերջնում աւուրն արարածոց երկրի թարգմանէ: Տաւս հալածէ, ախտածէսս բժշկէ, դիւաց բռնութեանց զաւրէ: Արգանդ որովայնի սորին՝ աւագանն կենդանարար, ի պար հարսանեաց սորա՝ դասք առաքելոցն: Այնքան ճոխացաւ՝ բարգաւաճեալ երանութեամբ, մինչ զի նոյն ինքն փրկչին անուամբ վայելչապէս յորջորջեցաւ, տիրամարն լուոյ կոչմամբ ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքեցաւ: Ծփելոց մեղաւորաց՝ նաւահանգիստ հանդարտութեան, խրախճանարան՝ վերնոցն դասուց, բժշկարան անսխալելի՝ տարակուսեալ պարտաւորաց: Երրորդութիւնն անպատում ի սմա փառաւորի՝ աւրինեալ յամենայնի:

ԺԳ

Իսկ եթէ ոք ձեռն չարութեան ի վերինն արքայութիւն յանդգնաբար համբառնայցէ, գիւտ ինչ մարմնաւոր եւ կամ հնարք մարդկային եւ կամ արուեստ երկրակենցաղ զսահմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, եւ ոչ պարզեւ առաւել կենաց, եւ ակնարկութիւն աստուածային, եւ Հոգւոյն Սրբոյ յայտնեալ լուսանորոգ նախագրութիւն, եւ երախտեաց բարձրելոյն ամենատուր լիականութիւն, եւ կամաց արարողին խնկաւորեալ խորհրդարան, եւ առաքելոց ձեռինն աջոյ բարեհանձար հիմնարկութիւն, եւ միանգամայն ասել՝ դուռն երկնից եւ քաղաք Աստուծոյ կենդանւոյ եւ մայր կենդանեաց, ազատ ի պարտեաց, եւ ճշգրիտ տեսակ կերպի երեւակիս բանականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, եւ շաւշափելին՝ պատկեր մարմնոյս, եւ սրբութեանցն անդ անճառից գերագանցեալ նոր սրբութիւն, եւ քրիստոսեանն նշանաւ պայծառապարծ պսակեցեալ,- զայնպիսի ոչ խոստովանողսն մերժէ յերեսաց իւրոց Հայրն ամենակալ ի ձեռն Բանին իւրոյ էակցի, բարձեալ ի նմանէ եւ զաւանդ շնորհի Հոգւոյն փառակցի՝ փակեցցէ գրուուն կենացս այս առագաստի յանդիման

նորին: Իսկ մեք, զորս գրեցաք, ամին եւ վկայեմք՝ հաւատացեալ որում կարգեցաքս, յանուն եւ ի փառս ամենակալ Երրորդութեանն եւ միում աստուածութեանն յաւիտեանս յաւիտենից: Ամեն: Այն իմ հաւատ յԵրրորդութիւնն, եւ այս իմ մայրն իմ լուսափառ խոստովանեալ դաւանութիւն:

Բան ՂԲ

**Ի ՓԱՅՏՆ ԵՐՁԱՆԻԿ ԲԱՐԵԲԱՍՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՀԱՐԻՆ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ, ԱՂԱԶԱՆՍ ԵՂԵԱԼ ԸՆԴ ԿԵՐՈՒԱՐԱՆՍ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՆ**

Ա

Գոհանամ զքէն, բարեգութ, միայն մարդասէր, արարիչ երկնի եւ երկրի, Որդի Աստուծոյ կենդանւոյ, այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քոյ յիշատակի ի լրութիւն հնչման փայտիդ հրաւիրման, որով բախեալ զձայնարձակութեանցն զագդողարան՝ սթափեցաք, կանգնեցաք՝ ի վեր յարուցեալ ի մեռաւրինակս թմբբմանէ, ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի՝ բերեալ ձգեցաք ի ժամ պաշտաման արհնաբանութեան՝ յանդիման լինել քեզ ուրախութեամբ հանդէպ հատուցմանս բեմի:

Բ

Ահա փա՛ռք քեզ, անսահման անուն եւ անբովանդակելի զարութիւն, որ այսքանեալք հնարաւորութեամբք ընդ փրկութեան իմում հոգացար, զոհաբանեալ անեղծ իսկութիւն, որ կերպարանեցեր հրաշիւք աստստին զհանդերձելոցն նմանութիւն, հանդարտ գործեաւ վայելչականաւ փայտի անաւթոյ առ քունս անյարիբ սաստիկս որոտացեր, որպէս թէ ընդ ծուլութեանս դանդաղութիւն զյանդիմանութիւն խրատող խառնեցեր, ի հայրենի սիրոյդ հեգութիւն զուժգնութիւն ճայթմանն յարեցեր, յընդոստ զարկուած երկուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցր անձրեւեցեր, ոչ մեղմութեամբ մեղմական վանկիւ նիրհմամբ ընկղմեցեր եւ ոչ անխնամաբար ահաւորութեամբ զտառապեալ հոգիս զարհուրեցուցեր: Օնրադրական երկրպագութիւն ստեղծիչդ բոլորից, որ այժմէն ցուցեր համայն յայտնապէս զարիւնակ ահեղ բարբառոյն մեծի աւուրն յարութեան, կենդանացուցեր ի

դադարմանէ դժոխական անբանութենէ, ի խնդիր ելեալ կոչեցեր զպակասամիտս ի գինիդ ուրախութեան, արարեր զսոյն լինել հանդերձիչ անարատ հարսինն առ սեր փեսայիդ, երկուցեր փոքր այս խթանաւ զապարասանին զվիթխարութիւն, լուծ ստուար կրթութեան ստամբակին ուսոյ զայս իր գործեցեր, վարապան վանիչ չարախաւսին կզակաց եդեալ կազմեցեր: Փառատրեալ յաւետ անբաւ բարձրութիւն մեծիդ Աստուծոյ, որ փոխարկեցեր զփայտին պարտիս յազատութիւն շնորհիդ կենաց, իմաստնացուցեր վերստին դարձեալ զյիմարս ցնդեալ՝ հոգեւորական հանճարովդ, կարկառ կոճմամբ զանբժշկութիւն հարուածոց աւժին առանց մոռացման միշտ թարգմանեցեր, ընդ Երրորդութեանդ գծագրութիւն զկապն երեքկին իմ վնասակարին ի կատարածին սովիմբ կրկնեցեր:

Գ

Գովեստ ներբողից բուրմամբ խնկոց վերառաքեմ քեզ, ամենախնամ, զի ի ստապատիր կոռցն բազմաստուածութենէ առաւել յաճախագունիք որսացար զանձն իմ պարտաւոր ի քո երկրպագութիւն, խրոխտ եւ ահարկու նուիրեալ փայտիւս զճշմարտութիւնն քարոզեցեր, մեծացուցեր այսր պատճառաւ պատշաճականաւ զնոր աւետարանութեանդ պատիւ: Սոյն ինքն աղաղակ բարձրութեան գոչման սպառազինութեանդ քոյ, արքայ պետութեանդ կայսերաց երկրի Տէր Քրիստոս, նշան խրախութեան աւարտման հանդիսի մարտի քոյ, Յիսուս, յորում իմանալին փարաւոն կապեալ ըմբռնեցաւ, կռփիչ հանապագորդեան զլիտյ գագաթան հպարտացեալ չարագործին՝ շերտս այս տաշեցեալ: Սովաւ գումարին ի պատերազմի որդիք Սիոնի ընդդէմ աշխարհակալին խաւարի, տաւն իմն աստուածաւանդ կրթութեան կարգեալ ի հեռուստ այս դրաւշուած իւղեալ՝ առանց հնանալոյ եւ կամ խափանման, նշանակիչ ժամանակի ապագայիցն հատուցման՝ ի բացուստ անդր ծանուցմամբն, ազգակից հանգունանման կենացն փայտի, որ ի դրախտիդ Աստուծոյ, կոչարան բարուք հաւաքման փոյթ ընթացիք ի յարկն աւրինութեան, պատկեր տեսակի տնկոյն գիտութեան ի կարգ

ընտրութեան բարւոյն եւ չարի, յիշատակ մեծ տեսանագրութեան յերեսս կերպիս Հոգւովդ Մրբով զնշան խաչիդ, նախագեկոյց աւետամատոյց փառաց գալստեան ի դշխոյն պահեալ սուրբ թագաւորիդ, յորդորիչ քաջալերական մաքրապարիցն խրախճանութեան, անախտական սիրարկու անձնահամբոյրն կցորդութեան շքեղաշուք քողընծայ ամենածին կուսի թագուհւոյ, յարդարիչ ծածուկ պճնութեան, որ ի հոգին է վայելչութիւն, նմանութիւն պատգամին Սինայ, որ ի տէրունեացն արտաքս առաքէր, միշտ աւրիորդ պանծալի՝ անշաղախ որդւոց մայր անարատից, սովաւ փառագարդէր:

Դ

Գերագոյն քան զԵրիքովին փողովն եղջերեայ զբոնութիւնն Բելիարայ սովաւ հարթեալ տապալեցեր, քարինս արձակեցեր պարսիւս այս փայտեայ ընդդէմ Գողիաթու, գայիսոն նորոգ կառուցեր՝ վկայ ահարկու կործանմանն սատանայի, զի խոր աճեցեալ արմատս մեղացն մեքենայիւս այսու խլեցեր, զմոռացեալ գործոցս իմ պարտիս այսր երախտեալք ընդ իս կապեցեր: Զոր էթէ այլ իմն ձայն Բանիդ Աստուծոյ անուանեմ նախապատում եկաւորութեանն, ոչ սխալեմ, քան թէ ճշմարտեմ: Ի տկար ամանս այս նիւթոյ հոգեկրի՝ մեծութիւն գործոցդ Յիսուսի առաւելապէս պատմեալ հռչակի, բիրաւոր աւգնականութիւնս վերնապարգէս եւ քոյինատուրս ի յայսմ անպատսպար ապաւինութենէ երկրականաց զարմանագրեցեր:

Ե

Խոստովանեալ անունդ անքնին մարդասիրիդ բարեխնամութան, ինկեալ խորհրդով սրբամասնութեան՝ անգծագրելի կերպարան լուսոյ, որ կրկնաձիր նշանաւս այսու նետս արձակեցեր հեռաձիգս, ձայնատրականս, աղաչուս եւ յարմարաթոխչս, ունողս յինքեան հոգի կենդանի, որով անսխալ հանդիպմամբ զնպատակն խաւարային աղեղնաւորին գաղտնութեան յաւէտ կործանմամբ ի յետս ընկճեցեր: Իբր զպատնէշս ամրաբերձ բերդամարտութեան, կանգնաւորս, անվայրարկելիս՝ աստուստ անդանար զկտեալ դիպուածս այս փայտի զարկման՝ հրեշտակ կամարար թշնամւոյն

ներհակ վերյուղարկեցեր: Բանիւ հրամանի մեծիդ ակնարկութեան, աւծութեամբ շնորհիդ արեամբ քո խառնեալ, զայս եղջիւր խեթկիչ մոլի գոռոզին իբր զխաչիդ փրկանակ յեսանեալ սրեցեր: Ի մեծ ազդմանէ այսր աղաղակի գեր քան ի վերնոցն քանդեալ վերացաւ դրանդն ամրութեան կամաց անվայելուչ եւ ամեներկչոտ խենեշութեան կարճամտին՝ ընդ հրէական սրտին իմաստից եւ ստուերական տանն կործանութեան:

Զ

Փառաբանութիւն քեզ վերընծայեմ, անմահ թագաւոր, զոր արարեր եւ հաստատեցեր աջովդ քո հզաւր, աղաչեմ զքեզ, կրկին ներգործեա: Անցուցեր սովաւ, հերքեալ առ ի մենջ, զխեթ դժնդակ խորամանկութեան բանսարկուին, զտաժանական տապ մեղաց, զհողմ դառնութեան շնչման խաբողին, զտարր արկածից մահու երկիւղի, զառ ի յաւդից ցնդմանէ վնասակար բերմունս տխրեցուցիչս, զայսախառն հեծեծութիւնս թալկացուցիչս: Տրուեա վերստին քոյինազէն հեծանաւս, աւժանդակեալ թելաւք նշանիդ, զամպս հրաձինս, զորոտմունս կարկտաբերս, զցաւագին ցովմունս հրախաւար կեղծաւորութեան փչման բազմոտանի վիշապին, զսուր սատակման, զճակատամարտ դիմեցման, զյարուցելոցն ի վերայ վայրենական խորհրդոց զդիւացն կաքաւս: Յորմէ զարհուրին յայսմ իրէ փոքուէ՝ տեղի տուեալ մեծաւ դողութեամբ, կիրթ իմն ծանաւթութեամբ յայտնի գիտացեալ, թէ յայս ազգ ձայնի յառնէ տէր ի դատաստանն: Եւ իւրախուսին յոգի արութեան, զրահեալ պնդապէս սուսերաւ Հոգւոյն, աստուածարեալ մարտիկք ամենայն ի ձեւ կանոնի այսր յիշատակի, որ զամենափորձ հրոյն ընտրութենէ գոչմամբ անկերպադրելեալ համարէն ազանց քարոզէ ի յարիւնաւոր ասպարէզ երջանկաբար նահատակութեան:

Է

Հարաւ ահա փող աւագափող, համբարձաւ սովաւ Աստուած արհնութեամբ, պատմեցաւ սովիմբ ամենայն երկրի, հնչեաց ի լսելիս բաժանման հեթանոսաց, ձայն պահապանաց մեծին զաւրացաւ, ըստ բանին Եսայեայ, եւ ի նոյն բարբառ առհասարակ ցնձացուք: Յնդեցան ջրոյն առակաւ ի ձեռն սորին թշնամիք

խաչին, անպատուեցաւ ճաշակն պտղոյ առաջին փայտին, տանեցաւ նիւթս այս խորհրդական կենաց անուանեալ, անարգեցաւ երկաթ առ ի պէտս պատերազմի, իբր զսրբութիւն Տեառն՝ ի սանձս երիվարին մեծին նշանի այս փայտ կենաձայն յարմարագրեցաւ, ամփոփեցաւ արծեալս ցպով հովուին երկնայնոյ սուր իշխանութեան մարդկային ձեռին: Ոչ գծեաց ի քար տաճարին մուրճ ինչ գործողի, իսկ յաստուածակերտս խորան փայտս այս նուիրեալ ընդ խաչին թեւոց սլացեալ զարե: Ոչ ի գլուխս ամսոցն եւ կամ յեւթնիցս եւթներորդս յոբելինիցն՝ ի յանկեան ուրեք խափանմամբ փողէ, այլ ընդ ծագս տիեզերաց եւ ընդ ծիրս եզերաց, ի ծոցս ջուրց բազմութեան ծովուց եւ կղզեաց նոցա յաճախ սաստկութեամբ, անարգել ճայթամբ իմն աստուածայնով հնչեցեալ աւետարանէ: Կոտորեցան սուսերք սատակողին այս փայտի ցուցմամբ՝ յանաւգտակարէ անտի մեզ փոխաձեւեալ ի խոփս եւ ի մանգաղս: Ը

Ոչ արձագանք անձանաց ի խորոց ինչ գանչութենէ խիստս առաքեցեալ եւ ոչ դժնդակապէս, ըստ իմաստակի ումեմն աւտարի, զաւղ վիրաւորեալ, ոչ անախորժ սրութեամբ ընդ ունկն մտեալ եւ ոչ զաման ուղղոյն անկամակութեամբ չար թնդեցուցեալ, ոչ ոսկերցն փուշ խրտուցման յանձն բուսուցեալ եւ ոչ մտացն այլայլ ապշութիւն առաջի արկեալ, ոչ զանգակ նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ եւ ոչ քար ընդ վիրգս սալի առանց քաղցրութեան առ նոյն զարկուցեալ: Պարփակարան անխորտակելի նորոյս Սիոնի, մի սա ի սպասուցն կազմուածոց արարչաւանդիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ դէտականացն զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն, արիւնակ ձայնի հրեշտակին, զոր առակողին բան՝ հաւուն կոչմամբ այսու տեսակաւ զայն տպաւորեաց, նոր գործի շնորհի նուագարանաց Աւետարանին՝ զարթուցիչ Հոգւոյն առ մեզ, քան առ արհնաբանութիւն սաղմոսարանին ի վերայ Եղիսէին: Սկզբնապար նախընթացութեան աղէյարմար ջութակաց՝ բարետաւիղ ողբերգարկութեանց, բարացուցական բամբռան

բառացի բարառնութեանց, սրինգ նորոգ այլ իմն տեսակաւ՝ առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ, ոչ հեթանոսաւրէն ուրուաձայն հնչման եւ կամ հրէաբար խակախորհութեան, զոր մարգարէն տերամբ ազդեցոյց՝ Ի բաց արա յինէն,- այլ զսա սիրեաց եւ կրկին պատուեաց մաքրական տաճմամբ՝ ահարկու դիւաց եւ ամենայն չար պատահարաց:

Թ

Եւ արդ, ընկալայ արինաբանութեամբ, յարգեալ գովեստիւ զայս տուր սրբութեան՝ ինձ պահպանութիւն եւ քո փառատրութիւն, քո պաշտան եւ իմ գոհութիւն, անաղանդ արուեստ բարձրութեան արարչական փառաւորութեանդ: Մտցէ ձայնդ այդ աստուածաբեալ ընդ պատուաստ յաւդիցս շաղկապութեան՝ հանել ի հոգւոյս զպատիրս դիւաց եւ զմուտս անիծից եւ մեղաց ապականութեան: Արասցես լինել զայս իր նշանակիչ ջնար ջահաւորական, անջրելի նամակ, ջատագով անխափանական տէրունական անաւրինականացդ: Ահա պարգեւես սովաւ, բարեգութ, աղաչեմ, հզար, կրկին մեզ շնորհեա պահպանութիւն ի դիմամարտից յաներեւոյթ եւ յերեւելի: Ընձեռեա մեզ, ձեռն ամենայլի, որ բանաս եւ մատուցանես պատրաստաբար բաշխմամբ ի մասունս բազմապիսիս, աւդոց քաղցրութիւն, անձրեւաց շահեկանութիւն: Պակասեցին քոյով հրամանաւ այսու բարբառով հողմ տապախառն, շնչումն ցաւաբեր, յարձակմունք հինից չար խարդախութեանց: Սովաւ խափանեցին ամենայն դիմամարտութիւնք զինուորութեանց դժնեայ մատնչին, հալեցին, հատցին եւ մեռցին յերջանիկ ձայնէ աւծեալս այս փայտի որդն եւ ուտիճ եւ ամենայն նմանք սոցին, ոոր ի մերոց մեղաց զաւրացեալ՝ ընդ մեզ պատերազմին: Արմատացո մեզ սովաւ տունկ երանութեան զյուսոյդ ի քեզ մեծ պաշտպանութիւն, ստեղծիչ բոլորից, տէր արարածոց, զայս ծառ Սաբեկայ, որ ունի կախեալ ի դիտակ ոստոցն զաւանդ սուրբ նորոգ այժմու փրկութեանս ծաղկեալ քեւ, Քրիստոս, ի պտուղ կենաց անմահականաց: Փախիցեն յանհուն հեռաստան խորին խաւարի այսր փայտի փառաւորելոյ բարեզեկոյց ձայնարձակութեամբ՝ նեսարք ներհակք

ստապատիրն ստորնականաց բազմաձեռնեան խարդաւանողաց: Մերժեսցին սովաւ ի յանդոց պտղատոհմական արաւրադրութեանց մերոց սահմանաց եւ ի քո մշակեալ կենդանի երկրէ վերք վասնիչք եւ հոյլք մորմոքեցուցիչք, կտրեսցին սովաւ յաւելուածք կրկնատգեղ եւ անվայելուչ պատահմանց՝ ի հնարից չարին ի մեզ յայտնելոց: Իսկապէս վանեսցի սովաւ, որք յերկաքանչիւրոց բնութեանցս մերոց վերերեւին, ինքնաստեղծութիւնք մերձաւոր դաւաճանողաց, յումեմն՝ աւտարին վրիպակ մտածմունս, եւ յայլումն՝ գարշ գոյութիւնք անմաքուր զեռնոցն ապականողաց: Փրկեա, Տէր Յիսուս, աղաչեմ զքեզ, փրկեա, բարերար, կարկառեա առ իս զաջն ամենագով եւ աւգնեալ ինձ սովաւ՝ զերծո զիս յամենեցունց ընդդիմացողաց: Ժ

Խառնեսցի, միասցի հրաման քո ի սոյն՝ առ ի փոխարկել զադամանդեայ սիրտս յիմարեալս ի քոյին բանիդ արդիւնատրութիւն: Հարցես, մխեսցես զայս նեցուկ հրաշից քումդ սքանչելեաց ի սիրտս ծորեալս եւ յոգիս լքեալս եւ հաստատեսցես՝ կազմեալ պնդապէս ի կայումն ուղիդ, անսասանելի, իսկ զանընդոստն կակղացուցես՝ զարթնուլ եւ զգաստ լինել յոգի հեզութեան աստուածաւանդ քո պատուիրանիդ, որպէս զՊաւղոսն եւ զՄատթէոսն: Յիշեցո, մարդասէր, պատուեալս այս փայտի զերախտիս խաչիդ, որով զանճառն ներգործեցեր: Բարձ յինէն, կեցուցիչ, զվտանգ պարտեսցս պանծալի լծակաւք ամբառնալեաց նոր տապանակիդ: Բացցին կամաւք քո, հզաւր, ի յայս ձայն կենաց լսելիք սրտից յամառեցելոց: Լուիցեն յայս մեծի բարութեան ի քումդ ակնարկութեան ականջք խլից: Պարզեսցին ի ձեռն սորին լեզուք համրացելոց: Լուսաւորեսցին ի սոյն տեսարանք աչաց՝ հայել մաքրապէս ի քեզ պշուցեալ անայլայլաբար: Ձղջացին, դարձցին կազդուրեալ կամք յափրացելոց: Ընձեռեալ տացես, Տէր, տազնապելոյս անձրեւ արտասուաց: Եղիցի քեւ սա մեզ լուր ցնծութեան, ձայն ուրախութեան, բարբառ բերկրութեան, նուագ հանգստեան, նիւթ երանութեան, պատճառ փրկութեան, առիթ քաւութեան, մերժումն վշտաց, խզումն խեղդմանց,

ընդարձակություն նեղութեանց, համառատումն խեթմանց, հալածումն հեծութեանց, թեթելություն թառաչմանց, յայափոփություն կարեաց, կարգադրություն կրից, սփոփություն վիատմանց, բժշկություն ցաւոց, տեւականություն հեղութեանց, ուշադրություն անտեսիցն:

ԺԱ

Ի յայս կամուրջ ցանկալի, անխոտոր եւ անխոտորնակ եւ ի վերնաշաւիղ, բարձրաբերձ, սրբահետ սանդուղ երկնաչու առ Հայր քո արինաբան, ահաւոր անուն ձգեալ մատուցես, բարերար, Հոգւոյդ առաջնորդութեամբ միանալ ի քեզ անընդմիջելի: Որով եւ սրբոյ միոյ միայնոյ եւ միասնական տէրութեանդ եւ անեղծ արարչութեանդ ի կենդանեաց եւ յանշնչականաց հաստելոց վայելչական գոհութեամբ փափոք եւ իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Բան ԴԳ

ԱՂԱԻԹՔ ԹԱՐԳՄԱՆԱԻՐԷՆ ՎԱՄՆ ՍՐԲԱԼՈՅՍ ԻԻՂՈՅՆ ՄԻԻՌՈՆԻ

Ա

Սուրբ, ահաւոր անուն բարձրեալ, անպատում, անձկութեան փափագ յարախորժելի, ի սրբերգենիցն փառատրողաց միշտ սրբաբանեալ բնակեալդ ի սրբում, լի եւ ամենագեղուն բարութեամբ առատաձեռն աննուագելի, լոյս բարի եւ ծագումն գովելի, երկրպագեալ փառաւորութիւն, ահեղ եւ անգննելի, ամէն եւ յամենայնում: Այսու բանիւ դաշամբք յուսոյ ուխտ ընդ քեզ միութեան, հզաւր, այո, ամէն, ալելուիա, գովեալ թագաւոր հանուրց, Աստուած բոլորից, ստեղծիչ գոյից եւ տէր կամարար, միայն առիթ պատճառաւորաց, փրկիչ եւ աւծեալ մշտապաշտելի:

Բ

Ուստի մեկնապէս թարգմանեալ ի մեզ զայս գանձ անվաճառ եւ հարստութիւն անփոխադրելի, Յիսուս Քրիստոս արքայ երկնաւոր, որում դողութեամբ մեծաւ սպասեն անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշնչութիւնք, կրկնեալ քեզ յաւժարութեամբ ի

հաճութենէ անխոտոր մտաց՝ ծունր գոհութեան, ստեղծող էութեանց, որ են ի տեսման եւ ի ծածկութեան: Որ ետդ եւ էիր միայն բովանդակ ամենեւին անպակասելի, առեր զմերս իսկապէս համայն, զի ի լրութենէ քումմէ լցուցես, արհնեալ եւ բարեբանեալ, ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ ողորմութեամբ մեզ ի փրկութիւն՝ ի փառս եւ ի գովեստ անճառ բարձրութեան ահաւորիդ բարեբարութեան: Սկզբնաձիր արժմանս շնորհի մեծախորհուրդ հրաշագարդութեան, քանզի լոյս քո մեզ ծանուցեալ, ճառագայթ անհաս, ծագումն անսահման, արեգակն անաչառասփիռ, աստղ սահմանիչ երկակշիռ տարրութեանց, ճրագ ոտից եւ լոյս հետեւմանց, որով ի ցոյցս իմաստից եկեալ տեսութեամբ բանիս այս յարմարութեան՝ տաւնեմք պարերգութեամբ հրեշտակարէն, յստակամտաբար, փրկավայելուչ կնդրկաւ խնկեալ զպարգեւաբաշի առատատրութիւն ամենիմաստիդ յիւղ զուարթ անբիծ դաւանման: Քանզի յիսկզբան անդ կապտեցելոյ ողորմելի տխրականութեամբ ի փչմանէ բարձրագոյն շնորհին հայրն իմ սկզբնաստեղծ եւ հնացեալ յաւէտ մեղացն գերմամբ՝ ի մահ գրաւեցաւ, կապեալ ընդ եղծման ապականութեան անզերծ հանգուցիիւ, ի ծառայն պատճառաւորեալ յանկումն անյարիւր ամենակործան զլորման, հերքեալ ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնեցաւ,- իսկ դու, գթած տէր ողորմութեան, քանզի յաւէտ քան գնոյն ծանեար, զոր ստեղծեր, եւ զի չէիցն ակնկալութեամբ չեկաց, յոր ինչ էրն, որով անկարողանայր իսկապէս տեսանել ի լոյսն վերին անմատոյց գերակայութեան անսահմանելոյդ, ոչ մշտափայլ յարակալ վառմամբ անաղատելի տարածանեցեր, այլ զիշերայնոյն ոտնալպիւրծ, մթին արհաւրաց ձեռնակալութիւն ձիթոյ՝ շարամանութեամբ նիւթոյ պատրուզի ընդ նոյն զանգելոյ, յաւրինակ քո անախտ միութեամբ ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր, զի որ ի ստուերս մահու տարագրեալ գտաք կանխակորուստ տնկովն պարտեաց, ի պատճառ իրին ազգակցաւ պտղոյն ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ՝ ի նոյնն դարձցուք ինկաւորութիւն, որպէս եւ փայտին

մահու՝ մաճմամբ քո ի նա ածեալ մաճուցեր զմեզ, առակաւ մեծի խորհրդոյն միաւորեալ ի փայտն կենաց:

Գ

Եւ արդ, որպէս ոչ է աւր լումամբ առանց գիշերոյ, եւ ոչ տնաւրէնութիւն յարկի՝ առանց ձիթոյ պիտոյից խնդրոյ: Քանզի իբր արիւնակն հասարակային ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութիւն լուսաւոր առնէ, նոյնպէս եւ մաքրեալն քոյինաշունչ շնորհին ընտրութեամբ անիմանալեաւ զաներեւոյթ հոգիս միութեամբ ի մեզ անտեսիդ հրաշափառապէս պայծառացուցանէ: Զի որպէս յիջումն լուսարանի սուրբ աւագանին լուացմամբ մարմնոյն զանձինն հաւատամք առնուլ սրբութիւն, սոյնպէս ի յաւճումն իւղոյն պարարեալ յուսով՝ զՀոգոյն զաւրութիւն սովիմբ եւ ի սոյն համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի: Եւ որպէս հրամանդ տէրունական արհնաբանելի զքաւութիւն մեղաց ախտացելոցն նախավճռէիր, իսկ ոչ հաւատ ունողացն առ այն՝ բժշկութիւն հրաշալի յանդիմանակաց անդուստ առ նմին մարմնոյն տեսակի հաւատարիմ վկայ անդարձիցն հաստատէիր, սոյնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ ի մեզ աւճանէ զարտաքին խորանս, իսկ զներքին մարդս, աներեւակ ծածկապէս մտեալ, նոր կենդանաճնէ:

Դ

Պատկեր պանծալի այս զանգուած նիւթոյ արարչիդ երկնի. քանզի որք զիւղոյն կրեցին աւգտութիւն, որ յողորմութենէն շահընծայութիւն, եւ դու ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ, թէ՛ Ողորմած եմ ես Տէր. քանզի որպէս սիրոյն անուան կցորդես Աստուած, նոյնպէս ի մասնէ եւ այսու զիջեալ գծագրիս՝ ըստ տնտեսութեանն, որ առ մեզ: Վեհագոյն մեծութեան խորհրդոյ յարմարաւոր դիմակերպութիւն այս ճարպ պարարտութեան երկրի թանձրութեան հողանիւթ գոյականութեան. զի որպէս սոյն մասն ի կենդանոյն ոչ ի կերակուր հրամայիւր անդ ըստ Աւրիինին, այլ արարչութեանդ բոլորովին պտուղ որոշիւր, նոյն նմանութեամբ եւս եւ աստանաւր, իբր զզաւրութիւն Տեառն մատչելի, յայս աւանդ հաճութեան էիդ աստուծոյ վայելչապէս տուեալ նուիրի, հոգւոյս

հարազատ զուգաճանապարհ, արարողիդ պահեալ եւ ուխտեալ: Քանզի ոչ շունչ արեան եւ ոչ ճենճեր ինչ զուարթութեան արինակ հոգւոյս իմոյ եւ կարոյս ընդ անդամաթիւս մտոյն ծախի, այլ արքայութեանդ վերնում վիճակի տերունական բազմականին ձանեցեալ ճաշակ, այս նիւթ ջահաւորական մշտաբորբոք անաղաւտելի:

Ե

Ոչ էր մատչելի ի նախագահութիւն արու անդրանիկ դատիչ քննողաց, եթէ ոչ ւաճմամբ ինչ նշանակէր, ոչ քահանայութիւն ի յանկոխելին տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր: Յակոբ զքարն պատկէր վիմին, խորհուրդ երկար՝ խորանին ընտրութեան, ւաճմամբն տպաւորեալ կերպացոյց, առ որ զիջումն անճառ բարձրելոյդ տեսութեամբ սանդղոցն յարմարութեան, եւ զիս ի վեր տանելոյն անդուղեկցութեամբն, զարձանն իւղեալ կառոյց նպատակ՝ ի ցոյցս ապառնեացն յիշատակի: Ահարոնեան քահանայութեանն պայծառութիւն հրամանաւ մեծիդ Աստուծոյ ւաճմամբն ճոխանայր, որով ի գլխոյ անտի ի մաւրուսն զեղեալ գերափառ իւղոյն զարմանազան կենդանագրութիւն, ըստ սաղմոսողին, զփառաց նախնոյն առակէր զանդրադարձութիւն եւ զշնորհիդ կենաց սրբութեան ընդ մեզ խառնութիւն:

Թագաւորութիւն ոչ էր պանծալի անդանաւր պատկերան ստեղծագործիդ, եթէ ոչ եղջերբ իւղոյն արհնութեան ձեռնադրեալ՝ պսակաւ պճնութեան թագին յանուն քո, Քրիստոս, զլուխ ամբառնայր: Եւ զիա՞րդ գնախնին վեհից մոռացայ, զծառայն մեծիդ եւ զկերպարանն անպարագրելոյդ. ո՞չ ահա Մելքիսեղեկ յարինակ ճշմարտիդ ահաւորութեան ի Ձիթաստանեաց լերինն, ուր յետոյ ոռք մարմնացելոյդ Աստուծոյ զետեղեալ կացին, ի վերնոց անտի հրեշտակաց ի պտղոց տեղոյն իւղեցաւ. ուստի շիրմի սկզբնահաւրն պաշտպան եպիսկոպոսական արքայապատիւ ճոխութեամբ ի քնն հանդերձեալ նստաւ, մինչեւ յայտնեցար՝ երեւեալ լրմամբ համայն իսկութիւն ադամային կենագործութեանդ:

Զ

Եւ արդ, քանզի քո են շնորհք, եւ քեզ վայել են գոհաբանութիւնք, արհնաբանեալ Որդի Աստուծոյ, դու ինքն յամարեա բարենշմար տպաւորութեամբ զաղաչանս իւղաւորականս, ինկապատարս, զմոսալիքս պատճառ քեզ փառաց եւ ինձ՝ մեղապարտիս՝ առիթ բժշկութեան: Մատո, տէր Յիսուս, վիրացս աներեւութից զայս ձէթ լուսանիւթ եւ արկ ի սոյն խարանս խոցոյ մահացուի զկաթուած արհնութեան իւղոյդ փրկութեան անապակ գինեաւ սիրոյդ՝ միութեամբ արարչականաւ պատսպարեալ պատանաւք խնամոց, զի յիշատակարանս թարգմանաւրէն բանիս մաղթանաց վայելչական իմն յարմարութեամբ ի թեւս Հոգւոյդ զկարգ իւր գտցէ: Ի վերայ Դաւթի Հոգի քո, բարձրեալ, յայնմ արեւ խաղաց, յորմէ ւաճութեամբն նուիրեցաւ: Սաւուղ յայր յայլ եւ ի մարգարէս ոմանս անդուստ իսկ գրեցաւ, յորժամ ւաճումն ժամանեցաւ զագաթան նորին: Արքայութիւնն Ասորեստանեայց ւաճմամբն գրաւեալ մատուցաւ ի կցորդութիւն տանն Իսրայելի: Կայսերս ոմանս նշանաւորս, վեհս եւ երեւելիս ի խժականաց բարբարոս ազգաց, իւղս այս, կենսացնցուղ ցաւոդով անձրեւեալ, իբր կարթիւ որսացաւ ի յընտանութիւն հպատակութեան մեծիդ Աստուծոյ: Բանն, որ առ Կիւրոս երկնաւորին պատուասիրութեան, զաւծեալն ձայն նմին մեծ վարկաւ: Չայն սաղմոսողին գեր, քան զմարգարէութիւն, զաւծեալն անուն նախայարմարեաց՝ կանոնափակ ընդմիջարկութեամբ պատուէր ւաւանդեալ՝ Մի մերձենայք եւ մի մեղանչէք: Առ Հեղիաս առաքելութիւն աստուածային հրամանատրութեանն, նշանակ իմն հանելոյ ի պաշտամանէ անտի Բահաղու, զաւծելութիւնն ի Քորէր ազդեաց Յէուայ եւ Ազայելի: Իւղ թափեալ անուն փեսայիդ ի հոգելից բանից իմաստնոյն վերավկայեալ՝ կանխաւ իսկ գրեցաւ, որպէս զի Հոգի, Աստուծոյ յաւէտ պատկեր եւ նշանակիչ, զի փոքրոս զմեծդ կերպադրութիւն քեւ նկարագրեալ՝ ընդ քեզ միասցուք առմամբ քո շնորհից:

Է

Եւ զի՞ եւս երկարս, պատուածաւրէնս, բացականագոյնս, զծագրականս եւ առակաւորս շարագրեցից առաջի վերնոյդ եւ ահաւորիդ մաղթողական բանաստեղծութիւնս: Տէրդ եւ

կենդանաբարդ, արարիչդ երկնի եւ երկրի, ի յաւծմանէ անտի սկսար քարոզել զԱւետարանն արքայութեան, վկայեալ անդուստ ի Յովհաննէ՝ աւծեալ եւ գառն Աստուծոյ, բարձող մեղաց աշխարհի: Ջի թեպէտ ընդ աւծմանն արհնութեան Հոգին էր քեզ իսկաբար լրմամբ եւ աստուածութեանն խառնութիւն բովանդապէս, այլ անունն պաշտի խորհրդեամբ շնորհին հրաշափառապէս ազդելոյ ի սուրբսն, զի գստրկութիւն ադամեան մարմնոյն մեծանալ յաւետ այսու յորջորջմամբ պատրաստ արասցես: Բացեալ գառածս մարգարէութեանն Եսայեայ՝ դու ինքն աստուածութիւնդ մարդացեալ ընթերցար, հաւատարիմ առնել զբան ծառայից քոց, Տէր, եւ իբրեւ ծանուցեալ եղեր աւծութեամբն ի կարգ անդ բանին, թէ՝ Հոգի Տեառն ի վերայ իմ, որով եւ աւծ իսկ զիս,- ապա փակեցեր ի հանգիտափառն աւծելութենէ զորքանութիւն երկաքանչիւրոցն, յայտ արարեալ խտրոցաւ սահմանի ընդարձակ հեռաւորութեամբ մեծաւ կնքեցեր, զմերս՝ կաթուածով ինչ շնորհագարդեալ, եւ զքոյդ՝ իսկութեամբ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյդ հաւասարութեամբ թարգմանեալ: Ի նախածանալթ մերակերպութեանն պանծալի իմն գովեստի՝ աւծեալն կոչմամբ ի հրեշտակացդ փառատրոդաց արարածոց երկրի ծանուցար, զոր մարգարէն կանխաւ գուշակեաց զ՛ի Յորդանան եւ յընտրեալն լեառն Թարբրական հայրենի ձայնիդ եկաւորութիւն, թէ որ՝ Պատմէ ի մէջ մարդկան զաւծեալ իւր, զոր սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հզաւրիդ փառաց զայս պատիւ տուեալ՝ առ ի գառեալդ ձեռնադրելոյ՝ Աւծ զքեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան:

Ը

Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս, որ է աւծեալ անունդ իսկոյն, որով զփչումն կենդանութեան ի դէմս մեր լոյս բարերարութեամբդ քո ազդեցեր. իմաստութիւն ումեմն երջանկի, մարդասիրութիւն խոստովանելի, ասելով առ ոմն, թէ եղ վկայութիւն առաջի Տեառն աւծելոյն՝ զնոր աւետեացս վկայելով, թէ՝ Կաւշիկս անգամ ոչ առի յամենայն մտեղեաց: Երգոցն երգ, իւղեփեցական զինի զԱստուծով ծանուցեալ զխորհուրդն ի գովեստ հարսին սուրբ եկեղեցւոյս, զմուռս առաքիւնութեան հանդերձ ամենայն առաջին իւղովն, եւ եւս

գմուռու եւ կնդրուկ մաքրութեան վարուց յամենայն փոշեաց անուշից իւղովքն զանգեալ՝ անդասին եւ այսր յառաջաբերեաց: Դանիել, զկենսատու մահու քոյ, Քրիստոս թագաւոր երկնի, ի վեր քան զաւրինակ կոչումն ձայնի զայս անուանագրեալ, վկայեաց յայտնի, թէ զկնի վաթսուն եւ ինն եւթներորդացն սպանցի աւծեալն, եւ աւծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց: Ճրագակիր աշտանակն Չաքարիայ Ադդովայ, որ ի Բարեքեայ, իւղոյն բարեբաշխ բացատրութեամբ ի մատունս եւթանց առաջադրութեանց գնդիցն վառելոց՝ ի ջահէ անտի զաւրութեամբ անեկամտաբար վիճակաւորեալ, զի քոյդ լրութենէ ի մեզ փրկութիւն եւ աւծելութիւն գերաբնապէս նախագեկուցեր: Չոր ըստ արիւնին անդուստ գուշակման ի խորանին, որ ի տաճարին, ամենընտել իմն կրթութեամբ սովորաբար մատուցեալ լինէր, պանք բաղարջընծայք եւ նաշիհք իւղովք խառնեցեալք, եւ զուարակք եզանց իւղարկեալք, եւ տիրական անուամբ ձայնեցեալք, եւ հաւուց ոմանց թաթաւմամբ յազգակից ճարպին ի յարին, այսր խորհրդոյ առձեռն տեսակք եւ նշանակիչք յարմարականք քեզ, միաձին ծնունդ արիւնաբանեալ մեծիդ Աստուծոյ, միայն դու աւծեալ նորոգ եւ զարմանալի՝ ինքնութեամբ, համայն էութեամբ, իսկապէս լրմամբ ամենայնիւ անպակասելի:

Թ

Եւ զի՞ եւս իցէ բազմապատիկս նշանակել առ այս մեծ խորհուրդ անհասանելի եւ ոչ ճաշակել զքեզ, քաղցրութիւն, իմանալ քեւ զայս, թէ զի՞նչ իցէ իւղն, եթէ ոչ զտխրութիւնն ի փայտն պարտեաց սովիւր բժշկեալ, ըստ սաղմոսողին, զուարթ գործեսցես. եւ զի՞նչ պարարտութիւնն, եթէ ոչ զկերակուրն մահու սովաւ մոռացուք՝ լցեալ ի սմանէ. եւ զի՞նչ աւծութիւնն, եթէ ոչ զմոխրոյն թշուառ տեսութիւնն ի ձեռն սորին փոխարկեսցուք ի պայծառութիւն յաւեժ ուրախութեան, անուամբ քո փրկեալ՝ յոզի զաւրութեան Հար անուանեսցուք. եւ զի՞նչ արդեւք մարգարէին հոգետր ըղձականութիւն ամենատենչ բաղձանացն իցէ իմանալ, որոյ ծերութիւնն առակի ի ձեթ պարարտութեան, եւ կամ աւծանելն իւղով զգլխոյն վերամբարձութիւն, եթէ ոչ զիին խարդախութիւն

սգոյն սաստկութեան ի մահ կործանմանն կենագործեալ դէղովս այս կենաց՝ պատասպարեալ աւժանդակեցես. եւ զի՞նչ ճրագին լուսաւորելոյ շնորհակալութիւն, եթէ ոչ ի մէջ իմն անյուսութեան մեղացն միգի եւ կռպաշտութեանն խաւարի՝ կերպակցապէս միութեամբ ի յիս էմանուել. եւ կամ զի՞նչ մարգարէն սատուածաբանեալ ի սփոփանս զուարթարարս արհնութեան նշանակ յայտնի վայելչապէս ոմանց աւետէ՝ Աւծցին իւղով ի մրրոյ պարզելոյ, եւ կամ իմաստունն ի դիմաց հարսինն ասէ արհիրդացն՝ Հաստատեցէք զիս իւղով եւ գեղեցկագարդ խնձորով յարկեալ ծածկեցէք, եւ ի պարտեզ իւղենեաց տածեալ գրեցէք, եթէ ոչ, այսր ահա ընտրական նիւթի հոգով քո լցեալ, ի սոյն լոյս տեսցուք զանիմանալիդ ի մեզ բարձրութիւն, գովեալ: Եւ արդ, քեզ, միայն խնամակալ, պատճառդ բարի բնաւին եղելոց, ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս, երիկամանցս գործակցութեամբ, սրտիս հեծութեամբ, լեզուիս եւ շրթանցս ձայնարկութեամբ՝ լուր ողորմութեամբ, Տէր, պաղատանացս խնդրուածոց առ քեզ կարդալոյս: Ծնորհաւորեալ այսու պարգեւաւք՝ գոհաբանութիւն քեզ վերընծայեմ, հզաւր, ահաւոր, բարձրեալ, անքնին, անփակ փափագմամբ միշտ համբուրեցեալ, սուրբ, սուրբ եւ միայն միշտ սուրբ, արհնեալ հանապազ, յաւեժ անդադար երգածայնութեամբ: Ընձեռեա առաւել բարեբարութիւն իսպառ վրիպելոյս, տուր յոյս քաղցրութեան ոչ մասին միոյ մատուցման լուսոյ արժանաւոր ինչ հանդիպելոյս՝ լայնել քեւ, բարի, զնրբութիւն ծածուկ խորհրդոյս, գոհութիւն խառնեալ ընդ աղերս՝ ասել ընդ Դաւթի՝ Ընկալաք, աստուած, զողորմութիւն քո, եւ զծածուկս գաղտնեացդ անտեսից իմաստութեամբ քո յայտնի արարեր:

Ժ

Եւ արդ, մեծութիւն քեզ, ամենակալ, առատաձեռն աննուագելի, ամենափոյթ առ ի գթութիւն, մշտայաւժար ի բժշկութիւն, զի միացուցեր, խառնեցեր ընդ մերձաւոր, դիւրագիտ, ընտանի նիւթոյս զհրաշս անճառս քումդ սքանչելեաց ահաւորութեան: Քանզի գոր երկին ամենայն բարձանց՝ երկրիս լայնութեամբ եւ

անդնդոց ներքնոց խորութեամբ, ծովուց բազմութեամբ ոչ զարե տանել, այլ իբր գոյզն ի մեծէ բերի, ի փոքր գոյս տեսականեցեր զարութեամբ սահմանեալ ճշմարտապէս անհրապուրելի, զի մի նորոգ իմն երեւելով յայլ էութենէ առ չաչս հարեանցի երկեւանութիւն ինչ վարկանիցի՝ վիրաւորել քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտաց: Քանզի որպէս մարմին քեզ հաւաստապէս, արհնաբանեալ Որդի Աստուծոյ, իսկութիւն եւ ոչ արիւնակ ի յարդեանց ցորենոյ արարչապէս միշտ հանդերձեցեր, եւ կայլակ կողիդ՝ զարիւն խաղողոյ, եւ արգանդ կենաց հոգեւոր ծննդեան՝ զառատութիւն ջուրց յոլովութեան, նոյնպէս եւ զՀոգի անմահիդ փչման սովաւ եւ ի սոյն արդիւնատրեցեր. երկունք կենաց, որոյ կերպարան յառաջ եկելոյն եւ ոչ հեթանոսութեամբ է փոխարկութիւն, որպէս ոչ տեսոնագրութեան խաչական փայտի ինչ երկրորդութիւն, նստելոցս յերկրի խաւարի ըստ նմանութեան քո, տէր, ծագեցեր: Քանզի յայս կերպարան շնորհի զանպակաս լրութիւն անհասիդ յայտնեալ աշխարհի լուսաւորեցեր, զի մի տնանկն կարատասացի, եւ մի ընչեղն բարձրամտեցի, ըստ աւոյ հաւասար բաշխման եւ լուսոյ արեգական տարածման եւ ջրական վտակաց գեղման, զի հաւասարապէս բաշխիւր երկրածնաց մանանային զուգամասնութեամբ՝ փոքունցն առաւել, քան մեծամեծացն:

ԺԱ

Իսկ այս նիւթոյ տեսաւորութիւն խորին խորհրդոյ եւ ի բնուստ անդուստ հրաշապէս ունի զլթարգմանութիւն, որպէս զի ոչ երկմիտ ինչ շութափութեամբ անհաստատապէս գտեղի փոխէ եւ ոչ նենգողաբար զբնակութիւն ինքեան լքանէ, քանզի ոչ վերջնականաւք աճառովք հերքի եւ ոչ յընդդիմակցէ ումեքէ ողողեալ արտաքս ելանէ: Վասն զի որպէս պատահումն գունոյ յէութիւն մարմնոյ անփոփոխ իմն եւ անհրաժեշտ, որ գոլովն գոյացուցանէ եւ ոչ գոլովն ապականէ, այսպիսեաւ իմն յարմարութեամբ իւրոյս զարութիւն անդստին ի յիւրոց անտի կերպարան զառեալն ունողի միասնական զուգութեամբ ընդ մեզ իսկ կցորդեցեր, Տէր Յիսուս Քրիստոս, ընդ իրին գոյի եւ

գարիինակն լծակցելով. քանզի զանիմանալին տեսութեան աչաց եւ մտաց ըղձից ի դէմս բերեալ կերպաւորեցեր, ի պտղոց երկրի ճնշեալ մզելով, զարմանալեալք հրաշագործութեամբ մատակարարիլ մեզ պատրաստեցեր: Մանաւանդ զի ոչ յուրվից խառնից ի մի եկելոց խմբակցութենէ զանազան ծաղկանց, ըստ հնոյն եւ ստուերին բազմաբորեան այլայլութենէ, զայս իւղ աւծութեան հրամանատրեցեր, այլ իբր զարիինակ փոխեալ զայն առ այս՝ դու ինքն խառնեցար ի սոյն մաքրութիւն վերնալոյս ձիթոյ: Որ թէպէտ անճառ են համեղութիւնք քումդ անուշութեան, եւ ընդ արիինակաց իրիք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի եւ շուշան հովտաց եւ նարդոս ընտիր եւ եղեգնախունկ՝ խառնեալ հալուէի, յարմարութեամբ հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ողկուզոյ եւ ազնիւ գինւոյ, ոչ սոսկ քան թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս արիինակեցար փառատրեալ անունդ անքնին, որ զամենայն լնուս եյիրէ իմեքէ ամենեւին ոչ կարատանաս: Ուստի ոչ շփոթելովք ի հակառակաց բոնադատութեանց՝ բաժանեալ կամաց մեկին առակի, այլ ի սիրոյ հաւանութենէ աստուածապէս ի մենջ պարարիս՝ վասն մեր ըստ մեզ առ ամենայն վայելչական նմանութիւն արիինակեցեալ, առ որս լոյս բարի եւ հուր ջեռուցիչ, տապ սիրոյ՝ առանց մասին ինչ շնչման անգթական սառնացրտութեան այս զանգուած նիւթոյ կաթուածոյ ձիթոյ մաքուր մտաց տեսեալ իմանի, որով յիրաւի սովաւ ի յաստուած է միանալի: Ընդ Մողմոնի աւծելոյ, որդեգրեցելոյ Աստուծոյ երգեմ բերանով հարսինն երկնաւոր փեսայիդ բարեբան գոհաբանութիւն՝ համբուրեալ ի յիղձս մտաց զհոտ իւղոց քոց, քան զամենայն խունկս, եւ իբր զբանս կենաց յալիտենականաց ունողի, ըստ հոգելից բանի իմաստնոյն եւ աստուածաբան աւետարանչին, զհետ քո ի հոտ իւղոց քոց ընթացցուք՝ լուացեալ զերեսս ջուրքք կենաց, որ ի վեր է, քան զերկին աւոյս այսորիկ, եւ աւծեալ զգլուխս անախտական իւղովդ երկնայնով՝ յանդիման եղէց քեզ ուրախութեամբ, զուարթապէս եւ ոչ տխրաբար:

ԺԲ

Այս իւղ խնկելի, պաշտելի եւ երանելի ոչ սոսկ աւծումն ուղղոյս սենեկի եւ կամ հերաց վարսից գազաթան նպաստ ինչ մատուցանի,

եթէ ոչ տէրունական կենսատու խաչիւղ տեառնագրեցի: Սոյն իւղ զարմանահրաշ արհնութեան լուսոյ զհրեայն եւ զխուծն, զհնդիկն եւ զբարբարոսն, զսկիւթացին եւ զելլենացին, զդուծն դժնէաբար եւ զարհարատեսակ շանագլուխն սոսկավիթխար, զտէրն ազատ եւ զստրուկն ծառայածին քրիստոսեան արարեալ՝ անուամբ քո կնքէ եւ Հոգւոյդ Սրբոյ ընծայէ եւ Հաւրդ երկնաւորի հարազատ որդի հաստատէ: Բազմարինակ են սովաւ արուեստից տեսմունք, յարմարեցեալք նախ՝ նիւթոյն, ապա՝ զաւրութեանն: Քանզի իբր անաւթ փայտեղէն, մինչ չեւ աւծեալ իցէ, դիւրաբար հերձի եւ, անազուտ եղեալ, անպատուի, նոյնպէս եւ մարդ, ոչ իւղեալ սովաւ, հեշտեալ խորտակի եւ, մեկուսի եղեալ առ ի քէն, ոչ լուսաւորի: Մատն սա քո, Յիսուս, որով զհրաշայիսն զարմանագրես, քանզի իբր անգծելի կազմութեամբ, կարծր պահպանակաւ, ամենապատրաստն շրջարկութեամբ պաշտպանեալ ծածկէ յայլագունակ, իրթնի եկամտից, մինչ զի ասուի մաքրութեան, թաթաւեալ ի սմա, ոչ ներկի արեամբ եւ ոչ տխրատեսակ երփնիւ այլայլի: Նա զի եւ թափանցանց իմն խառնութեամբ հոգեպէս ընդ թանձրութիւն մերս գոյութեան մտեալ անցանէ. զի թէ անէծք սաղմոսողին ձիթոյ առակաւ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի, ո՞րչափ եւս Հոգիդ սոյն ճարպով լուսոյ զաներեւոյթ ներքնոյն տեսակս կենագործեալ ողջացուցանէ, ազդումն տուեալ ի խորոց անտի շնչման հագագին՝ մինչեւ ի սպառուած ծայրիցն եզերաց զբնաւն ընկղմէ զյիշատակ մարմնոյ մահուն արկածից, քանզի կենդանական զաւրութիւն քո միշտ ահաւոր, Տէր Յիսուս Քրիստոս, ի սմին խառնեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ:

ԺԳ

Այս աւծումն բարետեսիլ եւ առ բռնամարտիկ, մերկամրցանակ ըմբիշս, իբր զաւրաւոր հնարից կերպարան ճգնաւորական, անըմբռնելի ձեռաց ներհակին, արինաւք պաշտի, դիւաց եւ ախտից հզար ահարկու: Քանզի յոգնապաճոյճ պճնութիւն բանին Եզեկիելի առ իմանալին փարաւոն հենգնաւոր առակագրութեամբ, ողբականաւք շարայարմարեալ. Յորժամ եղեր, ասէ, եւ

հանդերձեցար ընդ ածելոյ քերորէին, ուր արձանքն հրեղէնք հաստատեալ կառուցան: Աւրինաբանեալ ահաւորութիւն ամենավայր ձեռնկալութեան, որ միշտ անճառ եւ բանից եւ գերազանցեալ՝ քնութեանց, որ Աւետարանաւն կենաց խնկիս յարակայ՝ իբր նորածին ածեալ ի քաղաքի Դաւթի, եւ ի քահանայապետին հարցմանէ՝ Դո՞ւ եւ ածեալն՝ որդի աւրինելոյն, եւ յերանաւորն դաւանութենէ՝ Պետրոսի՝ Ածեալ միայն՝ Որդի Աստուծոյ կենդանոյ, եւ յապահաւատ քննողացն, եթէ՝ Դո՞ւ եւ ածեալն, ասեն, ասա մեզ համարձակ, եւ ի կանոնականացն քոց հաւատամք յաւճեալդ ուսուցիչ եւ տէր ամենայնի: Եւ Հերովդէս յառաջ, քան զսոյն, զաւճեալդ անուն յայտնապէս հարցեալ. եւ զիս՝ ըզգրեն, դու իսկ ասացեր, զաւճեալն աստուծոյ՝ զտէրն Դաւթի զանսկիզբն Որդի՝ ժամանակաւ որդի: Քանզի այսպէս ընկալաք վայելչաբար զայս թարգմանեցեալ, որ ի մեզ բերի ծայրն կատարման խորհրդական կոչմանն՝ վիճակ քրիստոնէից նախապատուութեան:

ԺԴ

Այնքան ունի ահաւորութիւն, միանգամայն եւ սրբութիւն, իւղաւորական խնկաւորութիւն սոսկալի անունս աւճութեան, մինչ զի որպէս ոչէ համարձակել ուրուք յերկրայնոցս Աստուած անուանիլ, այլ՝ աստուածային, նոյնպէս ոչ բերէ մարմին զՔրիստոսդ անուն անձին համարել, այլ՝ զքրիստոնէայն, անտանելի նախնոյն մեծութեան մկրտչին՝ ջուրքք զՀոգին հրաւիրողին. Քանզի չեմ եւ, ասէ աւճեալն, այլ առաքեալ առաջի նորա: Սովաւ շրջէին, որպէս բանն ազդէ աւետարանչին Մարկոսի, առաքելականացն լծակցութիւնք, իբր ազգակից հարազատ ձեռնիդ Աստուծոյ՝ այսու վարեցեալք, քանզի իւղով աւճանէին եւ առանց մարդկային հնարից անուամբ քո բժշկէին: Վասն զի որպէս խաւար՝ ի լուսոյ եւ ցաւ՝ յառողջութենէ, գիշեր՝ ի տուրնջենէ եւ մահ՝ ի կենաց, այսպէս եւ ի սոյն իրէ տիրապարգեւէ ամենայն չարին երեւոյթք մերժին, խափանին եւ բնաւին ամփոփին: Քանզի որպէս ճանճք զազիրք եւ փոքր զեռունք սարդից եւ ունկնամտից, իբր ի դեղոց մահու, յայս նիւթոյ սպառեալ

պակասին, սոյնպէս լրութեամբ շնորհի արհնութեան սոյն իւղ
զարացեալ՝ եւ զայսս վանէ, եւ զմութեան չարեաց ջրէ, եւ զվճիռ
մահու պատառէ: Ոչ է աւագան կատարեալ առանց աւծման
աւծանդակութեան: Եթէ աւագակացն մահու խոցման զմարդն
առաջին՝ այս դեղ փրկութեան մատուցեալ տուաւ, եթէ անճարակ
վիրացն Յակոբայ եւ Իսրայելի՝ սոյն իր պատուական
յիշատակեցաւ: Այս իւղոյ փափագեալ Դաւիթ՝ իբր ձիթենի
պտղալից ի տան Աստուծոյ յուսով յարակայի, լքեալ
զթլփատութիւնն՝ անդստին զմկրտութեանս շնորհէ գուշակէ: Եւ
զի՞ է ինձ զայսմանէ ճառել եւ համայնին կարծել հասանել, որ եւ ոչ
վերինքն զարեն ձեռնարկութեամբ ինչ բանի զսոյն խորհուրդ ի
մասնաւորէ ինչ ճառելով նշանակել, թողում ասել, թէ յիսկութենէ:
ԺԵ

Փա՞ռք քեզ միշտ եւ յամենայնի, անմահ թագաւոր, ի յայժմու
երգեցեալ արհնաբանութեանս, զոր արարեր եւ կատարեցեր առ
իս, բարեխնամ, զթած եւ երկայնամիտ, հարուստ եւ առատ
ամենայադթող, անդստին եւ հարցն գծագրելով զարինակն՝
մինչեւ ի լրումն ածեր զիսկութիւն ճշմարտապէս: Դու լոյս իսկ
բնութեամբ եւ արեգակն մշտապայծառ՝ եւ զաշակերտացն դաս
լոյս անուանեցեր, որով զարարածս ամենայն երկրի ճառագայթիւք
երջանիկ շնորհի նոցին լցուցեր: Ընկալար զիւղն անուշութեան
յումեննէ ի յոտս՝ յարինակ ընդունելութեան մաղթանաց առ քեզ,
եւ ի միւսմէ պոռնկէ՝ ի գլուխ՝ նշանակ սիրոյ գթութեանդ առ մեզ,
մշտափափագ բաղձանաւք անսահմանելիդ ի սոյն հոտոտեալ,
մինչ զի ուխտիւ անփոխադրելեաւ արէնս յարակայս
արհնաբանելիս՝ քոյինահրաման պատուերս կենաց ընդ
համարեն աշխարհ քարոզել զսակաւաձեռն իւղոյն
յարգաւորութիւն՝ զարմանս հրաշից լսողացն, առ ապառնեացն
յուսադրութիւն: Դուք աւծութիւն ունիք զարբոյն, - ասաց երջանիկն
առաքելութեանց՝ մեկնեալ զխորհուրդն, որ ի մեզ զեղեալ
յառաւելութենէ կենդանարարիդ անպակաս բովանդակութեան:
Ուստի յաւէտ իմն յարմարաւոր եւ հանգունատիպ առ ի
մասնաւորն նմանութիւն լուսոյդ եւ Հոգւոյդ Սրբոյ՝ այս կաթուած

արհնութեան ի վերնոյդ բարեբաստութեանց անսպառաքար սրակեցեալ ի մեզ. եւ ասի լոյս՝ իբր զնախաթի գոլ ստեղծուածոց եւ արարչութեանդ պատկերակից, որով զխաւար մթութեան մեղաց հալածես,- իսկ հուր, զի յամենայն տարր արարածոց հաւասարապէս ունի գուգութիւն ըստ էականին կշիռ քաշխութեան, ծածուկ եւ յայտնի, լռեալ եւ ծանուցեալ, եւ եթէ ոչ ընդհարցի ի հակառակէն, ոչ ի յինքնասաստ յաւժարմտութենէ քաղձայ բորբոքիլ. դարձեալ եւ՝ աւծումն, զի արքայաբար որդեգրեալ ընդ քեզ՝ ի ժառանգութիւն Հաւրդ մատուցես, ողորմութեանդ ազգակցաւ նկարեալ ի մեզ անեղծանելի՝ ի հանդերձեալ փառսն փայլեսցուք. դարձեալ եւ՝ հոգի, զի մաքրեալ զարկածս խաբէութեանն, որ ի բանսարկուին ներգործութենէ, նորոգ փոփոխմամբ, հոգուով եւ ճշմարտութեամբ Հաւրդ երկնաւորի երկրպագեսցուք՝ բեւեռեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք, ամենապարգէս:

ԺԶ

Ահա արդարեւ յաւէտ իսկապէս իւղս այս լուսապատար, ինկալիր՝ վերնականիդ սիրոյ տեսութիւն: Վասն որոյ եւ Պաւղոս իսկ պատշաճ վարկաւ ի ճառ գոհաբանութեանն՝ ասելով յայտնի. Որ աւծ զմեզ ձեւք հանդերձ ի Քրիստոս Յիսուս՝ Աստուած է՝ որ եւ կնքեաց զմեզ եւ ետ զառհաւատչեալ Հոգւոյն ի սիրտս մեր. եւ դարձեալ՝ Մի, ասէ, տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան: Պատկառելի եւ անվանելի աւծութեանս յորջորջութիւն՝ իբր ի նորումս յաւէտ, քան ի հնումն: Քանզի բանն դաւութեան սաղմոսին գտիրական տնաւրինականացո սկզբնաւոր կրիցո խորհուրդ ճշմարտաբար վերասահմանէ. Ժողովեցան, կուտեցան իշխանք ժողովրդոց վասն Տեառն եւ վասն աւծելոյ նորա: Մարգարէութիւն մեծ տպաւորեալ զանսրբելի արեանդ պարտիս հրէախումբ չար մոլեգնութեանն, որ ի տէրոյ յանդգնութիւն. Ո՞վ է, որ ձգիցէ զձեռն իւր յաւծեալ տեառն եւ քաւեսցի: Քանզի թէ եւ յազգայնոյն սպանաւ Մաւուդ, այլ ոչ իսպառ մերժեցան յամաւթ եւ ի նախատիւնս ազգաց ատարաց, մինչեւ արեանդ աստուծոյ հաղորդեալ գտան: Գրաւական մեծ յիշատակի

ապագայիցն ժառանգութեան աղաթանուէր աղերսարկութիւն
ասել սաղմոսին. Վասն Դաւթի՝ սիրելոյ քոյ մի դարձուցանէր
զերեսս քո յաւծելոյ քումմէ. եւ դարձեալ՝ Նայեա եւ տես յերեսս
աւծելոյ քոյ եւ արա ողորմութիւն ընդ աւծելոյ քոյ:

ԺԷ

Ձեռին քոյ, Քրիստոս, երկրպագեալ պարգեւատրութիւն այս հիւթ
լուսակիր, քանզի ոչ այլ մեծ բարձրութիւն յարքայութեանն
ճոխութենէ ասէ մարգարէն ի դիմաց քոց, Տէր, քան թէ՝ Գտի
զԴաւիթ ծառայ իմ եւ իւղով սրբով իմով աւծի զնա: Ուստի կիրթ
իմն յիշատակաւ զքոյդ համբուրեալ լուսոյ աւծութիւն, տէր Յիսուս
Քրիստոս, ծանիցուք զքեզ անփոփոխ մշտնջենաւորութիւն, թէ դու
եւ ամենայն եւ յամենայնի միայն թագաւոր թագաւորութեանց եւ
ճշմարիտ աւծեալ իւղելոց, փառաբանեալ երկրպագութեամբ երէկ
եւ այսար: Քանզի զոր արիւնակ պատրոյց, թացեալ ի ճարպում, ոչ
երեւեցուցանէ ինչ նշոյլ, մինչեւ հուրք լուցեալ վառիցի, սոյնպէս եւ
այս աւծութիւն լուսոյ, առ ի մեզ հեղեալ, ի հանդերձեալսն
ջահաւորի: Այս է կերպարանին մեկնաւոր բացերեւութիւն, ի
նախնեացն եւ այսր բերեալ, բարենշան իմն յարմարութեամբ
հրաշապայծառ երանգաւ գունեալ:

ԺԸ

Արդ, այսոցիկ պատճառ վեհագոյն մասանց կեցուցչաց,
աստուածականաց արարչութեանդ հարազատաց, առանց որոյ ոչ է
գրիլ քրիստոսեան, եւ ոչ նագովրեցի անուանիլ, եւ ոչ յիշատակիլ
յորդիս Յուդայի եւ կամ խրախոյս բառնալ յանուն աստուծոյ
Յակոբայ, այս հիւթականութիւն արհնութեան ձիթոյս, յորում
Սուրբ Երրորդութեանդ խառնեցեալ միաւորի՝ ճառագայթ
շնորհաց, շուք մերոց դիմաց, նկարագրութիւն երեսաց,
բարեձեւութիւն պատահմանց, լուսաւորութիւն աչաց,
տեառնագրութիւն բբաց, վայելչութիւն այտից, զարդ
կերպարանաց, պահպանարան շրթանց, հանդերձի կրանից,
յարմարիչ վարուց, շաղկապ հաւաքմանց, զարութիւն անձանց,
ուժգնութիւն դիմեցմանց, խափանիչ յուրթից, քակտիչ կմայեկաց,
նահանջիչ ձեռնածուաց, խայտառակիչ կախարդաց, գտիչ

աղանդից, բռնախոյեան դիւաց, փարատիչ ցաւոց, կատարիչ կնքեցելոց, տենչանք երախայից, անգնին արտաքնոց, հիացումն հեթանոսաց, նախանձարկու անհաւատից, մերկացուցիչ գաղտնեաց, յարգանք յետնոց, փառք ստրկաց, պճնումն կանանց, աճեցումն տղայոց, հրճուանք ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց, զգուշութիւն մաքրոց, պսակ թագաւորաց, ճոխութիւն արքայից, յառաջադրութիւն կայսերաց: Քանզի զոր արինակ աման ինչ կնքեալ նշանակիչ իմն է ներքնայնոցն մեծագնութեան, նոյնպէս բարձրութիւն շնորհին ի մեզ սովաւ ծածկեցեալ յանուն քո, Աստուած Տէր Յիսուս Քրիստոս, վայելչական իմն տեսակաւ ծանուցեալ նշանակի: Իսկ անունն իսկոյն անդստին ի նոյն յորջորջեալ կոչմամբ, ըստ հոգելից արանց իմաստնոց, որ յեզփստացոց անտի սկսեալ, ի դէմս ածելով զիրին կերպարան՝ ահաւոր խորհրդոյ պատկեր:

ԺԹ

Քանզի միւռոնս այս արհնաբանեալ, զոր մարգարէն կանխաւ լոյս աչաց գրեթէ զսոյն աղերսեալ խնդրէր, ըստ քերթութեանն բառի, որ ըստ խտրութեանն հոմերոնի, թարգմանեալ իմանի՝ ինձ մայր, այսինքն է՝ առ ի յինքն ձգող զմերս բնութիւն զաւրապէս, եւ կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զջուրց լուծականութիւն առ աւազանին լուսաւորութիւն, եւ իբրեւ զդեղ մածուցիչ կաթին՝ ի նոյն ինքն յեղանակել զցնդեալս իմ վայրագութիւն եւ զաղբերց հեղեղեալ մշտահոսութիւն: Իսկ մառնամուտ, որ եւ այս միւռոն ըստ այլում բառի ցուցանի, այսինքն է՝ մթին, որ եւ խաւարչուտ գոլ եւ ծածկեցեալ կամ անտեսական: Որ եւ սոյն կոչումն դիմառութեան չէ աւտարացեղ, քանզի արդարեւ յիրէ անտի անունն նշանակի, վասն զի անքնին է այս խորութիւն յաւէտ, քան զամենայն սրբութեանց սրբոց: Զի ոչ եթէ ջրոյ արինակաւ զաղտ ինչ լուանայ եւ կամ հացի բնութեամբ զսիրտն հաստատէ, այլ նորոգ իմն յարմարութեամբ ի մասունս ազդողականացն տնարինապէս տեսնագրի, սակայն անհասութեամբն վերնականաւ եւ զանունն ունի անքնին: Քանզի որպէս Աստուած իսկ եւ իսկ ի լոյս անմատոյց ասի, իսկ անսահման

փառաւորութեամբն յեղանակաւ իմն անբաւութեան ի խաւար անգնին ծածկեալ իմանի՝ փակեալ արտաքուստ ի ձեռնարկութեանց մերոց իմաստից, նոյնպէս եւ այս ծորումն լուսոյ ի լեզուաց ոմանց ճարտարաց ի ճահ ճեմութեանց դրականապէս անուանագրութեամբ մռայլ առձայնի, վասն ոչ զարելոյ երկրածին բնութեան զիսկն զիտելոյ: Իսկ զի գերկաքանչիւրս աստուածականացն անդստին յինքեան հարստաբար, տիրապէս ունի, քանզի ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ իւղս այս՝ նուիրեալ ամենաբուրեան ազնիւ կնդրկաւ. վասն զի Աստուած մեր հուր ծախիչ է, ըստ Մովսեսի, եւ դարձեալ՝ լոյս է, ըստ Յովհաննու, ուստի եւ Եսայի ճշմարտապէս գտոյն ակնարկէ՝ Եղիցի, ասէ, լոյսն Իսրայելի ի Հուր:

Ի

Դարձեալ այլ իմն կերպացուցանելով զբանս առ ի նոյն պատկեր յայտնութեան իրի, վասն զի ոչ մոռանամ զիմն նողկութիւն, որ ի գթութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստի արհնեալ: Քանզի մեռայ, որ է դառնութիւն, այսինքն՝ նշանակ իմն յարմարական չարչարաւոր կրից տաժանմանց, որ եւ միւռոն ստուգաբանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութեան ազգականութիւն: Քանզի այսու աւծմամբ հոգեւորականաւ, խզեալ կամ հատեալ ի սնտոխասէր, մահակերպարան, տաղտկազգարական հեշտութեանց հակառակողին, որ աղախոնաւ մեղկութեամբ զքնարս ձայնատրական եւ կամ զարկուած վերածածկութեան մզնարհեստ, ուժգնաբարբառ, խրոխտահնչական կազմածոյ թմբկիս գործականութեան ջրացիր իմն զիջութեամբ անվայելուչ թուլադաշնակեալ՝ ի ստորեւ կորստեան քարշէ զարիանակ մերս գոյութեան,- կապիմք յուսով վերստին դարձեալ ընդ անճառ խորհրդոյ խաչի քոյ, Քրիստոս, մկրտեալ ի մահ կենդանւոյդ՝ անվախճան կենացդ սովաւ հաղորդիմք՝ ի քեզ իսկ, Աստուած, համայնի խրախուսեալ իսպառ ամենեւին անհատուածելի:

ԻԱ

Այս իւղ գորաւշեալն քառակուսեան յանուն քո, Յիսուս, նշանի քարձրելոյդ հաւասար հաստէ, շնորհ ընձեռեալ զուգափառ եւ նմանատիպ արեան կեցուցիչդ, նոյն անվանելի փառաւք պսակեալ՝ մեծացուցանէ: Փայտ անուանի իւղոյ արհնութեան, ըստ մարգարէին կանխաձայնութեան, զ'ի հասարակաց կազմեցեալ բուսոց անտառաց զաւրապէս ուղղեալ, ի խակութենէ չարին արկածից եւ աւտար կարծեաց ի ստեղծող վերաբերեալ՝ առ նոյն նիւթս կենաց հասուն ներգործէ: Ջի եւ որ ի մեզ մտիցն պատուհանաց մշտաբացիկ թափանցանցութիւնք, յանուն մեծութեան ահաւորիդ զաւրութեան ի խոհական իմն համեստութիւն քեւ տեառնագրեցեալ՝ առ ի յըզակերտ աւթեւան Հոգւոյդ, անագղելի պատրանաց չարին խաւարահողմ խարդախողին: Այսու լուսով զսպեալ ամփոփիմք ի նուագ գոհութեան երեկորեացն պաշտաման ընդ երկնայնոցն դամբարաց՝ առ արինակ վառման շնորհիդ, որ ի մեզ: Ի սոյն յիշատակ փրկութեան բարեացն սովաւ տնկեցեալ ծագի եւ ծաղկաւէտ եղեալ պտղածնի: Ի սպաս ընթրեացն պատրաստութեան յետնում զիշերի մեծիդ զալստեան՝ ահա զայս լոյս ճրագի համարեալ ի կիր արկանեմք:

ԻԲ

Դաձեալ ըստ գրածացն գումարութեան քսան եւ չորիցն շարադրութեան, որ յալփաբետաց անտի վերաթուի մինչեւ ի քսաներորդ երկրորդն կարգի, յորում զայս խորհուրդ խորութեան անդուստ թարգմանեալ՝ ճաշակ հեշտալի, որոց հաղորդին, ջամբել պատրաստեմք ամենակազմ յարմարութեամբ: Քանզի յութաներորդէ անտի գրոյ ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝ ստուգաբանաւրէն քննութեամբ ընդ ձիթոյն անուան նիւթ ճշմարտագրի, որ է կերպարան արդեան խմորոյ յինքն բերողի զգանգուածն զաւրեղապէս, որ ոչ սակաւն ի յոլովէն պարագայի, քան թէ ի նոյն իրն դարձուցեալ, ըստ աւետարանական առակին, զամենայն առ ինքն վերաբերեալ աճեցուն առնէ:

ԻԳ

Սոյն իւղ հեգութեան՝ միշտ համբարձման եւ խոնարհութեան արիւնակ եւ նմանութիւն, առ ոմն կակուղ պատառաւ մատուցեալ ջամբի, հարթակշիռ եւ բարեյարմար բանի կերպարան, իսկ համայնիցս լուծականաց, հոսանուտ եւ ստորածորելի նիւթից՝ գերափառ, վերաշրջական, հրաշափառ խորհրդոյ պատկեր, քանզի եւ յաման ինչ մորթոյ արկեալ՝ ոչ ըստ գինոյ ձեւոյ եւ կամ ջրոյ թացութեան մեղկէ, այլ ի սահման պատշաճին պահէ: Այսպէս ընկալեալ զքոյոցդ բարեաց անհաւասար առաւելութիւն, Որդի Աստուծոյ կենդանոյ, զարբանուէր այս աւծելութիւն ի ճակատ դիմացս արեամբ քո գրեմք եւ ի բնութիւն շնչոյս Հոգուով քո տպաւորեմք՝ հաւատացեալ խորհրդով մտացս, եթէ յաւէտ յայտնեսցի, նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ ծայրարձակութեամբ՝ ի տարածումն յոգնատեսիլ, զարմանահրաշ ընդարձակութեան, պտուղ իւղոյ՝ ընծայեալ զլոյս ի փառս ապառնեացն հանդերձելոց: Այս ճարպ հոգեւոր, երջանիկ եւ վերնանշոյլ ի դէմս երեսաց իմս պատկերի, քումդ նշանաւ ջահաւորեսցի:

ԻԴ

Եւ քանզի իբր անհաս, ոչ ըմբոնական այս մեծ զաւրութիւն, արագ սլացմամբ ի թեւս թեթեւս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն հետեւման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ իսպառ որոշեալ, փակեցաւ յինէն, ոչ արիւնակեցաւ կցորդաւ, ոչ նմանեցաւ զուզամասնութեամբ, ոչ սահմանեցաւ ձեւակերպութեամբ, ոչ կշռեցաւ ընկերին չափով, այլ ահա ընդ աստուածեան խաչիդ նշանի հաւասարութեամբ արեան կեցուցչիդ հոգիապէս գերազանցեցաւ: Եւ արդ, արիւնեա զմեզ, Տէր, սովաւ եւ ի սոյն: Եւս եւ անունդ քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր եւ զարմանաւոր, ի գովեստ փառաց անճառից մաքրակրանից բուրվառաւ խնկեալ, սուրբ, սուրբ, անքնին, անպատում, բարձրեալ, ողորմած, վերերգեալ, ճշմարիտ, բարերար եւ սուրբ, արա սովաւ փրկութիւն, տուր եւ քաւութիւն, պարգեւեա բժշկութիւն, հանդերձեա շնորհ, առատաձեռնեա երանութիւն: Յաւծումն այս ձիթոյ երկնանձրեւ լուսոյ անարատ գտայց. յիւղեալս այս թեզան

բանաւորական մի մտցէ եւ մի գրաւեսցէ տխրականութիւն աղտոյ մեղանաց՝ շաղախել երբէք զոգուոյս կերպարան: Եղիցի սոյն ինքն, որոց մատչին աւծանիլ սովաւ, հարսնապաճոյճ պանծանաւք պճնել գեղայարէն, սուրբ վայելչութեամբ՝ երջանկապէս յոգի զարդարեալ: Եղիցի հուրս այս լուսափառ եւ աստուածաձիր մերձեցելոցն ի սոյն ընտրութիւն մուխ կրկնեռաց եւ բարեփափագ ջերմութեան այլ յարիւնուածոյ, որով ամենայնիւ

ամենապատրաստ պնդութեամբ ի կարծրականումդ անասան վիմիդ յարակայեցեալ՝ միշտ արձանացայց՝ ի քեզ հաստատեալ աներկմտելի: Լիցի նշանակ վերնամրցանակ այսր պարգեւի սովաւ վառելոցն՝ ոչ ողողիլ ջուրք, ոչ այրիլ հուրք, ոչ ցրտանալ ի սառնութենէ, ոչ վնասակար հողմով շիջանիլ, ոչ աղտեղիլ յուրուական ինչ պղծութենէ, ոչ զպահեալսն չարին մատնել եւ ոչ ի ստորեւ ելիցն զմթերս զանձուն կենաց յիմարաբար արտաքս հանել, ոչ անպատսպար մնալ ի թեւոց քոց աւգնութենէ եւ ոչ զէացեալն ի մեզ աւծութիւն անմաքրապէս ի բաց մերկանալ: Այլ եղիցուք քեւ ի սոյն հրացեալ, սովիմբ պարարեալ, սովաւ լուսաւորեալ, այսու արդարացեալ, ազատացեալ, պսակեալ եւ թագաւորեալ: Եւ քեզ միայնոյ՝ միայն աւծելոյ յամենեցունց արհնութիւնք երգոց, ալէլուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթականութիւնք գովեստից, բարեբաստութիւնք շրթանց, սրբաբանութիւնք սաղմոսաց՝ ընդ Հաւր եւ Հոգւոյդ Սրբոյ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Այն՝ իմ ձեռնարկութիւն ի սրբութիւնսն, եւ այս՝ արձանագրութիւն ի սրբութեանցն սրբութիւն:

